INTERNATIONAL AND COMPARATIVE LAW CENTER - ARMENIA

ARMENIAN LEGAL CENTER
FOR JUSTICE AND HUMAN RIGHTS

ԱՐՑԱԽԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒՄԸ

ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԶԵԿՈՒՅՑ

Արցախի շրջափակումն ու բնակչության բռնի տեղահանումը

փաստահավաք զեկույց

Հեղինակային խումբ.

Սիրանուշ Սահակյան

Ավետիք Մեջլումյան

Էլլա Սարգսյան

Մադլեն Մահլամյան

Գուրգեն Մեջլումյան

Հարցազրուցավարներ.

Լուսինե Հակոբյան

Գուրգեն Մեջլումյան

Սոնա Ազատյան

Զեկույցի ձևավորումը.

Աստղիկ Փիրումյան

Զեկույցը պատրաստել է Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնը՝ Մարդու իրավունքների և արդարադատության հայկական իրավական կենտրոնի աջակցությամբ:

2025 թ.

Բովանդակություն

Ներածություն 4

Հետազոտության մեթոդաբանություն 7

1. **Արցախի բնակչության կյանքը շրջափակման պայմաններում** 12

2. **Անվտանգային միջավայրը շրջափակման պայմաններում** 20

3. **2023 թ. սեպտեմբերի 19-ի հարձակման նախապատրաստումը և մեկնարկը** 26

4. **Քաղաքացիական բնակչության պատսպարման պայմանները՝ սեպտեմբերի 19-ի հարձակման ընթացքում** 32

5. **Քաղաքացիական բնակչության տարհանումը 2023 թ. սեպտեմբերին** 40

6. **2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքները կյանքի և առողջության համար** 49

7. **2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքով անհետ կորած և գերեվարված անձինք** .. 56

8. **2023 թ. սեպտեմբերյան հարձակման ազդեցությունը բնակավայրերի, պետական և համայնքային գույքի և բնակչության կենսագործունեության վրա** 60

9. **Բնակչության բռնի տեղահանումն Արցախից** 66

10. **Մասնավոր գույքի կորուստները՝ Արցախի բնակչության բռնի տեղահանման հետևանքով** 80

11. **Արցախցիների հետագա կյանքը ՀՀ-ում** 86

Եզրահանգումներ 95

1. Արցախի բնակչության կյանքը շրջափակման պայմաններում 95
2. Անվտանգային միջավայրը շրջափակման պայմաններում 95
3. 2023 թ. սեպտեմբերի 19-ի հարձակման նախապատրաստումը և մեկնարկը 96
4. Քաղաքացիական բնակչության պատսպարման պայմանները՝ սեպտեմբերի 19-ի հարձակման ընթացքում 96
5. Քաղաքացիական բնակչության տարհանումը 2023 թ. սեպտեմբերին 97
6. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքները կյանքի և առողջության համար 97
7. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքով անհետ կորած և գերեվարված անձինք 98
8. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման ազդեցությունը բնակավայրերի, պետական և համայնքային գույքի և բնակչության կենսագործունեության վրա 99
9. Բնակչության բռնի տեղահանումն Արցախից 99
10. Մասնավոր գույքի կորուստները՝ Արցախի բնակչության բռնի տեղահանման հետևանքով 100
11. Արցախցիների հետագա կյանքը ՀՀ-ում 101

Իրավական գնահատական 103

1. Արցախի բնակչության իրավունքների խախտումները շրջափակման պայմաններում 103
2. Արցախի բնակչության իրավունքների խախտումները 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի նախաձեռնած ռազմական գործողությունների ընթացքում 104
3. Արցախի բնակչության իրավունքների խախտումները բռնի տեղահանության արդյունքում 106

Ներածություն

2022 թվականի դեկտեմբերից սկիզբ առած Արցախի շրջափակումը և բնակչության բռնի տեղահանումը՝ 2023 թվականի սեպտեմբերին, ներկայացնում են հայության դեմ իրականացված համակարգային ճնշման և էթնիկ զտման նոր փուլ: Այս զեկույցը փաստագրում է այդ գործընթացները՝ մարդկային պատմությունների միջոցով, վեր հանում բռնությունների և մարդկային արժանապատվության դեմ ուղղված հարյուրավոր դեպքեր, անվտանգության ճգնաժամի դրսևորումներ՝ տալով դրանց իրավական գնահատականը՝ մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում:

Պատմական, քաղաքական և ռազմական համատեքստը

Արցախյան հակամարտության արմատները ձգվում են մինչև Խորհրդային Միության պատմություն, երբ 1988 թվականին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) հայ բնակչությունը պահանջեց միավորում Հայաստանի հետ: Ադրբեջանի թե՛ նախախորհրդային, թե՛ խորհրդային շրջանի վարչակազմերը բռնի և ոչ բռնի մեթոդներով իրականացնում էին հազարամյակների հայկական պատմություն ունեցող Արցախը նրա բնիկ ժողովրդից՝ հայերից «մաքրելու» էթնիկ զտման հետևողական քաղաքականություն: ԼՂԻՄ-ը փաստացի վերածվել էր Խորհրդային Ադրբեջանի գաղութային կցորդի, որտեղ խտրական քաղաքականություն էր վարվում բնակչության մեծամասնությունը կազմող հայերի հանդեպ՝ տնտեսական, քաղաքական, կրթական, մշակութային և այլ բնագավառներում:

1991–1994 թթ. պատերազմի արդյունքում Արցախը փաստացի ձևավորեց ինքնուրույն պետական կառույց՝ ունենալով սահմանադրություն, կառավարություն և ընտրված իշխանություններ: Չնայած այդ իրողությանը՝ միջազգային հանրությունը զգուշավորություն էր ցուցաբերում Արցախի անկախությունը ճանաչելու հարցում:

2020 թ. սեպտեմբերին Ադրբեջանի լայնածավալ հարձակմամբ մեկնարկած 44-օրյա պատերազմն արմատապես փոխեց ուժերի հարաբերակցությունը: Արցախի մեծ մասն անցավ Ադրբեջանի վերահսկողության տակ, իսկ մնացած հատվածում տեղակայվեցին ռուսաստանյան խաղաղապահ զորքեր՝ համաձայն 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության: Այդ հայտարարությունը նախատեսում էր Լաչինի միջանցքով ազատ հաղորդակցություն Հայաստանի և Արցախի միջև՝ ՌԴ խաղաղապահների հսկողությամբ:

Սակայն 2022 թ. դեկտեմբերի 12-ից սկսած՝ Ադրբեջանը փակեց Լաչինի միջանցքը, սկզբում՝ «բնապահպանական» ակցիայի պատրվակով, ապա՝ լիակատար վերահսկողության ներքո վերցնելով այն: Դրանով Արցախի շուրջ ստեղծվեց լիակատար շրջափակում. սահմանափակվեց սննդամթերքի, վառելիքի, դեղորայքի և հումանիտար օգնության մուտքը: Շրջափակումը վերածվեց բնակչության նկատմամբ կոլեկտիվ պատժի գործիքի՝ նպատակ ունենալով պարտադրել Արցախի հայությանը՝ լքել իրենց հայրենիքը:

Շրջափակմանը զուգահեռ Ադրբեջանը շարունակեց ռազմական և հոգեբանական ճնշման քաղաքականությունը. սադրանքներ, կրակոցներ, սպառնալիքներ, տեղեկատվական պատերազմի այլ գործողություններ: Ճգնաժամի գագաթանակետը 2023 թ. սեպտեմբերի 19-ին մեկնարկած՝ Ադրբեջանի լայնածավալ հարձակումն էր, որի արդյունքում մի քանի օրվա ընթացքում Արցախը զրկվեց ինքնապաշտպանական կարողությունից, իսկ բնակչությունը՝ հայրենիքում գոյության իրավունքից:

Հարձակման անմիջական հետևանքով տեղի ունեցավ բնակչության բռնի տեղահանում՝ ավելի քան 100 հազար արցախցիների հարկադրաբար հեռացում իրենց տներից: Այս գործընթացն, ըստ միջազգային իրավունքի, համապատասխանում է էթնիկ զտման և մարդկության դեմ հանցագործության տարրերին:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակն էր՝ փաստագրել Արցախի շրջափակման և բնակչության բռնի տեղահանման գործընթացները և դրանց հետևանք հանդիսացող մարդու իրավունքների զանգվածային խախտումները:

Հետազոտության խնդիրներն էին.

1. Հավաքել, համակարգել և մշակել հարուստ փաստական նյութը, որն արտացոլում է մարդկանց առօրյա կյանքի պայմաններն ու ապրումները՝ շրջափակման, հարձակման և տեղահանության փուլերում:
2. Բացահայտել մարդու իրավունքների խախտումների օրինաչափությունները՝ դրանց հնարավոր համակարգային բնույթը և Ադրբեջանի պետական քաղաքականության նպատակադիր թիրախները բացահայտելու համար:
3. Ձևավորել իրավական գնահատական՝ արձանագրված իրողությունները համադրելով միջազգային իրավունքի հիմնարար դրույթների հետ, մասնավորապես՝ հիմնվելով.
   - Ժնևի կոնվենցիաների,
   - Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի,
   - Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի,
   - Մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման նորմերի և այլ միջազգային իրավական փաստաթղթերի վրա:
4. Նպաստել արդարության վերականգնման և տեղահանված արցախցիների իրավունքների պաշտպանության հետագա իրավական գործընթացների փաստական հենքի ձևավորմանը:

Զեկույցի կառուցվածքը

Զեկույցը բաղկացած է 11 թեմատիկ բաժիններից կամ գլուխներից, որոնք արտացոլում են շրջափակման, հարձակման և բռնի տեղահանության փուլերը:

Առաջին գլուխները ներկայացնում են շրջափակման ընթացքում բնակչության առօրյա կյանքի պայմանները՝ սննդի, էներգիայի, ջրի, կապի, բժշկական օգնության և կրթության հասանելիության խաթարմամբ: Հաջորդ բաժիններում դիտարկվում են անվտանգային միջավայրը, հարձակման նախապատրաստական շրջանը և ռազմական գործողությունների ընթացքը:

Հետագա գլուխները լուսաբանում են քաղաքացիական բնակչության պատսպարման և տարհանման պայմանները, հարձակման հետևանքով կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասները, ինչպես նաև՝ անհետ կորելու և գերեվարման դեպքերը:

Զեկույցի վերջին բաժինները կենտրոնանում են բնակչության բռնի տեղահանության գործընթացի, գույքային կորուստների և Հայաստանում տեղահանվածների հետագա կյանքի վրա:

Եզրափակիչ մասում, ըստ թեմատիկ բաժինների, ներկայացված են եզրահանգումներ:

Զեկույցի բովանդակության և եզրահանգումների հիման վրա տրված են մարդու իրավունքների զանգվածային խախտումների իրավական գնահատականներ՝ որակումներ, որոնք խմբավորված են թեմատիկ երեք բաժիններում.

1. Արցախի բնակչության իրավունքների խախտումները շրջափակման պայմաններում,
2. Արցախի բնակչության իրավունքների խախտումները 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի նախաձեռնած ռազմական գործողությունների արդյունքում,
3. Արցախի բնակչության իրավունքների խախտումները բռնի տեղահանության արդյունքում:

Զեկույցի կիրառական նշանակությունը

Զեկույցը կոչված է ծառայելու որպես իրավական գործընթացների փաստաթղթավորված հիմք.

- Միջազգային կառույցների (ՄԱԿ, ԵՄ, ԵԽ, Միջազգային քրեական դատարան, այլ),
- Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային և միջազգային կազմակերպությունների,
- Գիտական և քաղաքական վերլուծական շրջանակների ու փորձագետների համար:

Այն կարող է կիրառվել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային դատարաններում՝ որպես Արցախի հայ բնակչության նկատմամբ կատարված խախտումների ապացույց:

Հետազոտությունը կարող է օգտակար լինել տեղահանվածների սոցիալական և իրավական պաշտպանության, հոգեբանական վերականգնման և սեփականության իրավունքի պաշտպանության հանրային քաղաքականություններ մշակելու համար:

Վերջապես, այս զեկույցն անհատական և կոլեկտիվ հիշողության պահպանման միջոց է: Անհատական մարդկային պատմություններն արձանագրելով՝ այն ընդգծում է, որ դրանք չեն կարող դիտարկվել որպես մեկուսացված դեպքեր, այլ՝ ընդհանուր կորստի և տրավմայի բաղադրիչներ են: Հետազոտությունը ոչ միայն իրավական արժեք ունի, այլև սոցիալական ու մարդաբանական. այն վավերագրում-փաստագրում է մարդկանց հիշողությունը՝ ի ցույց դնելով մեծածավալ հումանիտար աղետի ամբողջ պատկերը:

Այս փաստահավաք զեկույցը հավաստում է, որ Արցախի հայ բնակչության նկատմամբ իրականացված գործողությունները համակարգված բնույթ են կրել՝ նպատակ ունենալով վերացնել հայերի գոյությունը տարածաշրջանում: Ուստի, այն ոչ միայն անցյալի վկայագիր է, այլև ապագա պատասխանատվության և արդարության հիմք:

Հետազոտության մեթոդաբանություն

Տվյալների ստացման մեթոդը

Տվյալների հավաքումն իրականացվել է որակական հետազոտության միջոցով, մասնավորապես՝ Արցախից բռնի տեղահանված անձանց հետ իրականացված անհատական խորին հարցազրույցների միջոցով:

Հարցազրուցավարները մի քանի տասնյակ հարցեր են ուղղել մարդկանց՝ վերջիններիս հնարավորություն ընձեռելով պատմել իրենց անձնական, ընտանեկան և համայնքային փորձառությունների մասին: Հարցազրույցի ուղեցույցը կիսաձևայնացված հարցաշարն էր, որի թեմատիկ բաժինները հիմնականում համընկնում են այս զեկույցի կառուցվածքին՝ գլուխներին կամ թեմատիկ բաժիններին:

Հարցվողները խոսել են առանց որևէ սահմանափակման, իսկ հարցազրուցավարների լրացուցիչ ու ճշգրտող հարցերը հնարավորություն են տվել հարստացնելու տվյալները, բացահայտելու նոր փաստեր: Հարցերի ծավալից ելնելով՝ յուրաքանչյուր հարցազրույցի միջին տևողությունը գերազանցել է մեկ ժամը:

Ընտրանքը

Հարցազրույցներն իրականացվել են Սյունիքի, Վայոց Ձորի, Արագածոտնի, Լոռու մարզերում և Երևանում բնակվող տեղահանված անձանց հետ: Վայրերի ընտրությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այստեղ հնարավոր էր ապահովել տեղահանված անձանց նախկին՝ Արցախյան բնակավայրերի առավել ներկայացուցչականություն: Այլ կերպ ասած, նշված մարզերում և Երևանում բնակվող հարցվողներն ապահովում էին Արցախի տարբեր շրջանների ու բնակավայրերի բազմազանությունը, հարուստ ներկայացվածությունը:

Նախքան հարցազրույցների մեկնարկը, հետազոտական թիմը, մարզային և համայնքային իշխանությունների, ինչպես նաև՝ գործընկեր հասարակական ու բարեգործական կազմակերպությունների աջակցությամբ ձևավորել է տարբեր բնակավայրերում տեղակայված արցախցի ընտանիքների ցանկեր: Ընտանիքները խմբավորվել են ըստ իրենց նախկին բնակության վայրի՝ ըստ Արցախի բնակավայրերի: Նշվել է Արցախի յուրաքանչյուր բնակավայրից Հայաստանի տվյալ բնակավայրում տեղակայված ընտանիքների թիվը:

Հարցազրույցներն իրականացվել են մի քանի փուլով:

Առաջին փուլում կազմված ցանկերից պատահականության սկզբունքով ընտրվել են ընտանիքներ, և հարցազրուցավարներն այցելել են այդ ընտանիքներ:

Ընտանիքի ներսում հարցվող անձի ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով.

1. Անձի իրազեկվածությունը և կոմպետենտությունը՝ պատասխանելու հարցաշարի հնարավորինս շատ հարցերի: Հարցազրուցավարները ծանոթացել են ընտանիքի հետ և համառոտ զրույցի միջոցով պարզել, թե ընտանիքի անդամներից ով է տիրապետում տվյալների հնարավորինս մեծ ծավալի և ում հետ հարցազրույցը կարող է արդյունավետ լինել:

2. Հարցվողների սեռատարիքային բազմազանության հնարավոր ապահովումը: Նմանատիպ հետազոտությունների նախորդ փորձերը վկայում էին, որ առավելապես միջին տարիքի կանայք են հետազոտությանը մասնակցելու պատրաստակամություն հայտնում: Հարցվողների կազմի

այս բնականոն շեղումը հաշվի առնելով՝ հարցազրուցավարները, որտեղ հնարավոր է եղել, հարցազրույց են իրականացրել ոչ թե միջին տարիքի կնոջ, այլ՝ տվյալ ընտանիքի այլ անդամի հետ (երիտասարդ աղջիկ կամ տղա, միջին տարիքի տղամարդ, տարեց կին կամ տղամարդ): Բնականաբար, հարցվողների ընտրության՝ վերը նկարագրված առաջին սկզբունքը (իրազեկվածություն) նույնպես հաշվի է առնվել:

Թեև հարցազրուցավարները հնարավորինս կիրառել են սեռատարիքային բազմազանության սկզբունքը, սակայն նույնիսկ այդ պարագայում էլ հարցվողների շրջանում գերակշռել են միջին տարիքի կանայք: Պատճառներից մեկն էլ այն էր, որ շատ տղամարդիկ ներգրավված են եղել կամ կանոնավոր զինված ուժերում, կամ տեղական ինքնապաշտպանական խմբերում, և իրենց ընտանիքների հետ չեն եղել ադրբեջանական հարձակման, պատսպարման ու տարհանման ժամանակ: Հետևաբար, վերջիններս տեղյակ չէին այդ գործընթացների թե՛ մանրամասներից, թե՛ անմիջական հուզական-հոգեբանական արձագանքներից:

Իրականում, հարցվողների անձնային բնութագրիչներն այս հետազոտության շրջանակում առաջնային տեղ չեն զբաղեցնում, քանի որ կարևորը տվյալների հնարավորինս հարուստ ու բազմազան շրջանակի տիրապետելն էր:

Որոշ քանակությամբ (մեկ տասնյակը չգերազանցող) հարցազրույցներ իրականացնելուց հետո հետազոտական թիմը կազմել է նրանց Արցախյան բնակավայրերի ցանկը և հաջորդ փուլի ընտրանքի ժամանակ հնարավորինս խուսափել է միևնույն բնակավայրերը ներկայացնող ընտանիքների ընտրությունից: Այլ կերպ ասած, ընտրանքի յուրաքանչյուր հաջորդ փուլում առաջնահերթ ընտրվել են այն ընտանիքները, որոնց բնակավայրերը ներկայացված չեն եղել ընտրանքի նախորդ փուլերում: Այս մոտեցման և ընտրանքի պարբերական ճշգրտման շնորհիվ հետազոտության մեջ աստիճանաբար ընդգրկվել են նոր՝ նախկինում չներառված բնակավայրեր:

Քաղաքներից համեմատաբար մեծ թվով հարցվողներ են ընդգրկվել, քանի որ դրանց բնակիչների փորձառությունները կարող էին ավելի բազմազան լինել, քան փոքր և բնակչության միանման սոցիալական կազմ ունեցող գյուղերում:

Հետազոտության դադարեցման գլխավոր չափանիշն է եղել ստացվող տվյալների կրկնությունը՝ նոր կամ անսովոր տվյալների բացակայությունը: Մյուս չափանիշը Արցախի բնակավայրերի առավելագույն բազմազանության ապահովումն էր:

Բավարար թվով տարբերվող բնակավայրեր ներառելուց և տվյալների հագեցվածությունն ապահովելուց հետո հետազոտական թիմը որոշում է կայացրել եզրափակել հարցազրույցների անցկացումը:

Հարցվողների սեռատարիքային կազմն ու բաշխվածությունն ըստ Արցախի բնակավայրերի

Ընդհանուր առմամբ, իրականացվել է 83 հարցազրույց:

Հարցվողների միջին տարիքն է՝ 48 տարեկան: Ամենամեծ տարիքային խումբը 40-50 տարեկաններն են՝ հարցվողների մոտ 28%-ը:

Հարցվողներից 34-ը (կամ 41%-ը) տղամարդիկ են, իսկ 49-ը (կամ 59%-ը)՝ կանայք:

Արցախից բնակչության բռնի տեղահանման մեկնարկի պահին՝ 2023 թ. սեպտեմբերի դրությամբ, հարցվողները բնակվում էին[1].

- Մայրաքաղաք Ստեփանակերտում՝ 22 հարցվող (կամ՝ 26.5%-ը),
- Մարտունու շրջանում՝ 22 հարցվող (կամ՝ 26.5%-ը),
- Ասկերանի շրջանում՝ 21 հարցվող (կամ՝ 25.3%-ը),
- Մարտակերտի շրջանում՝ 18 հարցվող (կամ՝ 21.7%-ը):

Հարցվողների գրեթե հավասար բաշխվածությունն ըստ Արցախի շրջանների՝ վկայում է ընտրանքի համաչափության և աշխարհագրական լավ ներկայացուցչականության մասին:

Բնակավայրերի ներկայացվածությունը ևս տպավորիչ է.

- Մարտունու շրջանից՝ Մարտունի և Ճարտար քաղաքներ և 10 գյուղական բնակավայր,
- Ասկերանի շրջանից՝ Ասկերան քաղաք և 16 գյուղական բնակավայր,
- Մարտակերտի շրջանից՝ Մարտակերտ քաղաք և 11 գյուղական բնակավայր:

Այսպիսով, հարցվողները ներկայացնում էին Արցախի 5 քաղաքները (ներառյալ՝ մայրաքաղաքը) և 37 գյուղական բնակավայրերը:

Հարցվողների թվաքանակն՝ ըստ Արցախի բնակավայրերի՝ ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Հարցվողների թվաքանակն՝ ըստ Արցախի շրջանների ու բնակավայրերի:

Բնակավայր	Հարցվողների թվաքանակ
Մայրաքաղաք	
Ք. Ստեփանակերտ	**22**
Մարտունու շրջան	
Ք. Մարտունի	6
Ք. Ճարտար	3
Կաղարծի	2
Հերհեր	2
Սոս	2
Բերդաշեն	1
Կարմիր Շուկա	1
Ննգի	1
Պառավաթումբ	1
Սպիտակաշեն	1
Քարահունջ	1
Քերթ	1
Ընդհանուր՝	**22**
Ասկերանի շրջան	
Ք. Ասկերան	2
Բադարա	2
Սարուշեն	2
Ներքին Սզնեք	2

[1] Կարևոր է հիշել, որ սրանք հարցվողների բնակության վայրերն էին՝ 2023 թ. սեպտեմբերի դրությամբ: Կային անձինք, որ տվյալ բնակավայր էին տեղափոխվել 2020 թ.՝ Արցախի՝ Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած մեկ այլ բնակավայրից: Օրինակ, հարցվողներ կային, որ 44-օրյա պատերազմի արդյունքում մայրաքաղաք Ստեփանակերտ կամ այլ շրջան էին տեղափոխվել Հադրութից, Շուշիից, Քաշաթաղից և Ադրբեջանին անցած այլ տարածքներից: Այս անձանց համար 2023 թ. բռնի տեղահանությունն, այսպիսով, կրկնակի զոհականացման և կրկնակի տրավմայի աղբյուր էր:

Աստղաշեն	1
Դահրավ	1
Իվանյան	1
Լուսաձոր	1
Խաչեն	1
Խնապատ	1
Խնձրիստան	1
Կարմիր գյուղ	1
Մոշխմհատ	1
Նախիջևանիկ	1
Այգեստան	1
Շոշ	1
Ռև	1
Ընդհանուր՝	**21**
Մարտակերտի շրջան	
Ք. Մարտակերտ	5
Առաջաձոր	2
Ճանկաթաղ	2
Զագլիկ	1
Կոլխոզաշեն	1
Կուսապատ	1
Հաթերք	1
Մաղավուզ	1
Մեծ Շեն	1
Ներքին Հոռաթաղ	1
Չլդրան	1
Վարդաձոր	1
Ընդհանուր՝	**18**

Տվյալների արձանագրումն ու վերլուծությունը

Որքան և որտեղ հնարավոր է եղել, հարցազրուցավարները հավաքել են նաև լուսանկարներ, փաստաթղթերի պատճեններ, տեսանյութեր և հարցվողների բանավոր վկայությունները հավաստող այլ ապացույցներ: Հարցվողները նշել են նաև բաց համացանցային աղբյուրներում առկա լրացուցիչ տվյալների (հիմնականում՝ տեսանյութերի) մասին:

Բոլոր հարցազրույցները, գրավոր և բանավոր եղանակներով հարցվողի համաձայնությունը ստանալուց հետո, ձայնագրառվել են: Դրանց հիման վրա պատրաստվել են մանրամասն, բառացի սղագրություններ:

Բոլոր հարցվողները, ստորագրելով համապատասխան փաստաթուղթը, տվել են իրենց տեղեկացված համաձայնությունը՝ տրամադրված տեղեկատվությունը գրանցելու և հետագայում օգտագործելու համար: Մասնավորապես, նրանք տեղյակ են եղել և համաձայնել են, որ.

- Տրամադրած տեղեկատվությունը, փաստաթղթերը, լուսանկարները կամ իրերը կարող են օգտագործվել իրավական գործընթացների շրջանակներում և կարող են փոխանցվել իրավասու պետական և/կամ միջազգային մարմիններին, այդ թվում՝ հետաքննող:

- Տրամադրած տեղեկատվությունը, փաստաթղթերը, լուսանկարները կամ իրերը կարող են օգտագործվել զեկույցներ, վերլուծություններ և այլ հրապարակումներ պատրաստելու համար:

Վերլուծության փուլում դուրս են բերվել և զեկույցում արտացոլվել ինչպես եզակի և յուրահատուկ, այնպես էլ՝ խմբային փորձառությունները: Որտեղ հնարավոր է, դուրս են բերվել ընդհանուր կամ տարածված օրինաչափությունները, միևնույն ժամանակ՝ արձանագրվել են դրանցից տարբերվող երևույթները:

Զեկույցում հարցվողների խոսքերից մեջբերումները կատարված են բառացի՝ առանց փոփոխության կամ խմբագրման: Որոշ տեղերում, եթե Արցախի բարբառը կամ համատեքստը համարվել է դժվարընկալելի, խմբագրական ծանոթագրություններ ու մեկնաբանություններ են արվել:

1. Արցախի բնակչության կյանքը շրջափակման պայմաններում

2022 թվականի դեկտեմբերից Ադրբեջանի կողմից սկսված շրջափակման արդյունքում Արցախի հայությունը բախվել է բազմաթիվ դժվարությունների, որոնք գնալով սրվել են 2023 թվականի մայիս-հունիս ամիսներին:

Շրջափակման առաջացրած խնդիրների սրության և մարդկանց վրա դրանց բացասական ազդեցության խորացման 3 հիմնական փուլ է հնարավոր առանձնացնել.

- 2022 թ. դեկտեմբերից մինչև 2023 թ. մայիս-հունիս,
- 2023 թ. հունիսից մինչև սեպտեմբեր,
- 2023 թ. սեպտեմբեր՝ մինչև բնակչության բռնի տեղահանումը:

Այս փուլերից յուրաքանչյուրում նկատվել է խնդիրների մասշտաբի և ինտենսիվության ավելացում:

Սննդի պակաս և քաղցի զգացում

Շրջափակման ընթացքում հիմնական խնդիրներից մեկը սննդի պակասն էր: Շատ հարցվողներ նշել են, որ սննդամթերքի պակասի պատճառով հաճախ սոված են մնացել:

Օրինակ, Ստեփանակերտի մի բնակիչ նշել է, որ 6 օր առանց հացի է մնացել: Մյուսները նշել են, որ հացը բաժանել են ընտանիքի անդամների միջև, իսկ երբեմն հացը թխել են տան պայմաններում՝ օգտագործելով անորակ ալյուր կամ թեփ: Չնայած դրան, շատերը կարողացել են գոյատևել՝ օգտագործելով տեղական մրգեր, բանջարեղեն և այլն: Կարմիր Խաչի կազմակերպությունը նույնպես սննդի մատակարարում է իրականացրել:

Սննդի պակասը հատկապես սուր է զգացվել մայրաքաղաքում, որտեղ բնակչությունը չուներ անասնապահության և հողագործության նույն հնարավորությունները, ինչ՝ գյուղաբնակները: Շրջանների բնակչությունը մթերքով մեծապես աջակցել է Ստեփանակերտին, սակայն տեղաշարժը խնդրահարույց է եղել վառելիքի պակասի պատճառով: Հարցվողներից մեկը նշել է, որ Մարտունու շրջանի Ննգի գյուղից ուսապարկով մթերք են բերել Ստեփանակերտ:

Ստեփանակերտում իշխանությունները կիրառել են տարբեր սննդամթերքների չափաքանակներ՝ ներդնելով կտրոնային համակարգ: Օրինակ, ամսական տրվում էր 1 լիտր ձեթ, որոշակի քանակությամբ ձավարեղեն, շաքարավազ:

Սննդի պակասի պատճառով շատ ընտանիքներ ստիպված են եղել դիմել ծայրահեղ միջոցների, օրինակ՝ օգտագործել անասունների կերակրելու թեփը՝ հաց թխելու համար: Շատ դեպքերում մարդիկ ստիպված են եղել հացի հերթերում կանգնել ժամերով, երբեմն նույնիսկ օրերով: Հաճախակի էին դեպքերը, երբ մի ամբողջ օր հերթում սպասելուց հետո էլ ոչինչ չեն կարողացել գնել, քանի որ սնունդը սպառված է եղել:

Մայրաքաղաք Ստեփանակերտի մի բնակիչ նշել է, որ օրական մի հոգուն կես հաց էր հասնում: Այդ չափաքանակը գնալով քչանում էր: Շրջափակման վերջին շրջանում արդեն մեկ շնչին օրական հասնում էր 200 գրամ ցածր որակի հաց:

Քաղցրեղենի պակասը հատկապես դժվարություններ է առաջացրել երեխաների համար: Շատ ընտանիքներ ստիպված են եղել օգտագործել մրգեր և բանջարեղեն՝ քաղցրեղենի փոխարինման համար: Քաղցրեղենի պակասը հանգեցրել է նաև հոգեբանական խնդիրների, հատկապես երեխաների մոտ:

Հարցվողները նշել են, որ մթերային խանութներում դատարկություն էր, և 2023 թ. հունիսի 15-ից հետո խանութներում միայն ալկոհոլ կար:

Որոշ սննդամթերքների բացակայությունը ստիպել է դիմել ծայրահեղ միջոցների: Մարտակերտի շրջանի Զագլիկ գյուղից մի հարցվող նշել է. *«Աղ չունեինք, որ լցնեինք ճաշի մեջ, ձեթ չունեինք, որ ճաշ եփեինք: Աղը էն ճանապարհի եզրերին որ ցանում ես, որ ձյունը հալվի, էդ աղը բերում էինք, եռացնում 2-3 անգամ, նոր ճաշի մեջ քցում»:*

«Օրեր կային, որ առանց հաց էինք մնում»:

«Մի գդալ կոֆե չէինք գտնում, էն գարին մեկ-մեկ աղում էինք, սուրճ էինք խմում»:

«Էնքան որ միասին հաղթահարել ենք սովի դեմ: Ինչ-որ բաներ ճարում էինք, ընենց չի, որ լրիվ սոված էինք»:

«Օր ա եղել, ես եթե հաց եմ հայթայթել, երկու հաց, ես բերել, մի հացը սառեցրել եմ, սառնարան եմ դրել, մյուս հացը 8-9 կտոր եմ արել ու էդ 8-9 կտորը 3-4 օր տալիս էի մեր մեծին ու մեր փոքրին»:

«Երեխաները սնիկերսի թղթեր էին գտնում և խնդրում փող՝ կոնֆետ գնելու համար»:

«Երեխայի հետ խանութի կողքով, բայց աչքերը փակ ենք անցել, որ կոնֆետ չուզի»:

«Մի օր աղջիկս սնիկերսի թուղթ ա գետնից գտնում, ասում՝ պապա՛, ինձ փող կտաս: Ասում ա՝ ինչի՞ համար: Ասում ա՝ գնում եմ խանութ: Պապան 1000 դրամ տալիս ա: Գնում ա խանութ, ասում՝ կոնֆետ եմ ուզում, հիմա աշխատողը չգիտի՝ ինչ ասի: Ասում ա՝ ձև ասեմ ձեզ, գնացե՛ք պեսոկը գդալի մեջ տաքացրեք, կոնֆետ ա դառնում: Արմենը անում ա էդ մեթոդը, 3 օրը մեկ սարքում էինք: Երեխեքը դրանով էնքան էին ուրախանում, ոնց որ աշխարհի վերջ լիներ»:

Հացի և սննդամթերքի հերթեր

Հացի և սննդամթերքի հերթերը դարձել էին առօրյա, սովորական երևույթ: Մարդիկ ստիպված են եղել ժամերով, երբեմն օրերով հերթ կանգնել՝ հաց ստանալու համար: Հերթերում մարդկանց միջև լարվածություն, սթրես և կոնֆլիկտներ են առաջացել: Շատ դեպքերում հերթերում մարդիկ ուշագնաց են եղել սովից և հոգնածությունից:

Շատ դեպքերում մարդիկ հերթերում կանգնել են գիշերվա ժամերին, որպեսզի գոնե առավոտյան կարողանան գնել հաց: Սակայն հաճախ նույնիսկ հերթում սպասելուց հետո ոչինչ չեն ստացել:

«Ժողովրդի մեջ արդեն մի տեսակ վայրենություն էր սկսել, գոյության պայքար էր»:

«Որ հիշում էինք, որ պետք ա գնայինք հացի հերթերը: Կարծես թե... Ես կողքից նայում էի, կեսը արտասվախառը, կեսը հուզումնախառը, կեսը սոված, կեսը... Չգիտե՛մ ոնց նկարագրեմ, չգիտե՛մ՝ ոնց պետք ա նկարագրեմ»:

«Մարդ կա՝ գալիս ա 20 ժամ հերթ ա կանգնում, հետո առանց որևէ բանի գնում ա տուն, վաղը առավոտ գալիս ա, տեսնում ա՝ նոր ցուցակ են կազմել ինչ-որ մարդիկ ու ինքը էդ ցուցակում չկա ու պիտի 10 ժամ հերթ կանգնի, որպեսզի բան առնի»:

Սննդամթերքի և այլ ապրանքների թանկացումներ

Շրջափակման պայմաններում սննդամթերքի և այլ ապրանքների գները կտրուկ բարձրացել են: Օրինակ, մեկ ձվի գինը հասել է 800 դրամի (թանկացել է շուրջ 10-15 անգամ), իսկ շաքարավազի մեկ կիլոգրամի գինը՝ 10 հազար դրամի (թանկացել է ավելի քան 20 անգամ):

Ստեփանակերտում կարտոֆիլի գինը 3,000 դրամի է հասել, լոբու գինը՝ 5,000, իսկ ձեթի գինը հասել է 10,000 դրամի: Վարունգը վաճառվում էր 2,000 դրամով, լոլիկը՝ 3,000:

Ստեփանակերտում շատ ապրանքներ վաճառվում էին ռուսաստանցի խաղաղապահների կողմից: Ինչպես նշել է մի հարցվող, նրանց կատակով անվանում էին միռատվոռցի-տառգովցի (խաղաղապահներ-վաճառականներ – խմբ.):

Ռուսաստանցի խաղաղապահները գյուղացիներին ալյուրի մեկ կիլոգրամը վաճառել են 2,000 դրամով, իսկ դրա գինը Մարտակերտ քաղաքում հասել է 2,500 դրամի:

Խաղաղապահները աղի մեկ տուփը վաճառել են 3,000 դրամով, մեկ հատ օճառը՝ 5,000 դրամով:

Վառելիքի գները նույնպես կտրուկ բարձրացել են: Օրինակ, գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար գնվող 20 լիտր սալյարկան Մարտակերտի Առաջաձոր գյուղում գնվել է 60 հազար դրամով: Մարտակերտի շրջանի Վարդաձոր գյուղում հունիս ամսից հետո այն գնում էին 10 կամ 20 հազար ռուբլիով: Բենզինի 20 լիտրը Մարտակերտի Կուսապատ գյուղում եղել է 50,000 դրամ, նույնիսկ 90.000 դրամի է հասել:

Շատ դեպքերում մարդիկ ստիպված են եղել ապրանքափոխանակության դիմել, քանի որ դրամական միջոցները բավարար չեն եղել: Փոխօգնությունը հատկապես կարևոր է եղել երեխաների և ծերերի համար, որոնք առավել խոցելի են եղել շրջափակման պայմաններում:

«Մեկ սիգարետը մենք առել ենք 3,000 դրամով, մի պաչկա սիգարետը»:

«Մեկ տուփ ծխախոտը Ստեփանակերտում օգոստոսի վերջին արժեր 5,000 դրամ»:

«Մարդիկ հիմնականում ծխախոտ էին գնում, որպեսզի հետագայում այդ ծխախոտը ինչ-որ բանի հետ փոխանակեն՝ ձեթի, շաքարավազի և այլն»:

«Տոյոտա քեմրի»-ն փոխել են խաղաղապահների բերած 100 բլոկ ծխախոտի հետ»:

Ջուր

Էլեկտրաէներգիայի բացակայության ժամանակահատվածներում ջրի պոմպերը չեն աշխատել, ինչը դժվարություններ է առաջացրել: Շատ գյուղերում ջուրը կտրվել է, և մարդիկ ստիպված են եղել դույլերով ջուր պահել:

Ստեփանակերտի որոշ թաղամասերում ջրի խնդիրները լուծվել են այլընտրանքային մեթոդներով, օրինակ՝ աղբյուրներից ջուր բերելով: Ջրի պակասը հատկապես ծանր է եղել ամռան ամիսներին, երբ ջրի պահանջարկը բարձր է եղել:

«Ջուրը կտրել էին, և մենք դույլերով ջուր էինք պահում»:

Էլեկտրաէներգիա

Ինչպես Հայաստանից Արցախ գազի, այնպես էլ՝ էլեկտրաէներգիայի մատակարարումը ընդհատվել է Ադրբեջանի կողմից, ինչի պատճառով էլեկտրաէներգիայի մատակարարումն Արցախում եղել է անկայուն:

Շրջափակման սկզբնական շրջանում հոսանքը տրվում էր 6 ժամը մեկ, հետո՝ 4 ժամը մեկ, իսկ շրջափակման վերջին ամիսներին հոսանքը տրվում էր ընդամենը 2 ժամ օրական:

Որոշ ժամանակահատվածներում էլեկտրաէներգիա ընդհանրապես չի եղել:

Ստեփանակերտում էլեկտրաէներգիայի մատակարարումը համեմատաբար կայուն է եղել, բայց ձմռանը դժվարություններ են առաջացել: Հոսանքի բացակայության պատճառով մարդիկ ստիպված են եղել օգտագործել գեներատորներ, սակայն վառելիքի պակասը խոչընդոտել է դրանց երկարատև աշխատանքը:

Շատ տներում օգտագործվել են հատուկ լամպեր, որոնք հոսանքի բացակայության դեպքում մի քանի ժամ լուսավորում էին ապահովում: Էլեկտրաէներգիայի անկայունությունն ազդել է նաև ջրի մատակարարման վրա, քանի որ ջրի պոմպերը չեն աշխատել առանց հոսանքի:

«Հոսանքը գնում էր, իսկ մենք հեռախոսները լիցքավորում էինք ավտոմեքենայի ակումուլյատորով»:

«Հեռախոսները մանկապարտեզի արևային պանելներից էին լիցքավորման դնում»:

Ջեռուցում

Արցախում գազի մատարակարումը վերջնականապես դադարեցվել է 2023 թ. մարտից: Շուշիի տարածքում ադրբեջանական կողմի միջամտությամբ վնասվել կամ խոչընդոտվել էր Հայաստանից գազ մատակարարող խողովակների գործառումը:

Ջեռուցման հիմնական միջոցը փայտն էր: Որոշ դպրոցներում ջեռուցումն ապահովվել է փայտի միջոցով, իսկ որոշ դեպքերում դպրոցներն ընդհանրապես չեն ջեռուցվել: Շատ գյուղերում գազի մատակարարումը դադարեցվել էր դեռևս 2022 թ. դեկտեմբերից, ինչը ձմռանը ծանր հետևանքներ է ունեցել: Մարդիկ ստիպված են եղել ջեռուցման համար օգտագործել փայտ, սակայն դրա պակասը նույնպես խնդիր է եղել:

Շատ դեպքերում մարդիկ ստիպված են եղել ձմռան ամիսներին ապրել ցուրտ պայմաններում, ինչը հատկապես ծանր է եղել երեխաների և ծերերի համար:

«Մեր գյուղը ընդհանրապես գազաֆիկացված չի եղել: Գազը դեկտեմբերից անջատված էր»:

Կապ և տրանսպորտ

Տրանսպորտի և կապի խնդիրները եղել են ամենախնդրահարույցները: Վառելիքի պակասի պատճառով մարդիկ չեն կարողացել տեղաշարժվել՝ նույնիսկ հիվանդներին հիվանդանոց տեղափոխելու համար:

Շատ դեպքերում մարդիկ ստիպված են եղել ոտքով անցնել մեծ հեռավորություններ: Օրինակ, Մարտունիից ոտքով հասել են Ստեփանակերտ՝ անցնելով մոտ 45 կմ:

Հասարակական տրանսպորտը 2023 թ. հունիսից դադարել է գործել: Տրանսպորտի բացակայությունը հատկապես ծանր հետևանքներ է ունեցել գյուղերի համար, որտեղից մարդիկ չեն կարողացել հասնել մոտակա քաղաքներ՝ սննդամթերք կամ դեղորայք ձեռք բերելու համար:

Շատ դեպքերում տեղաշարժվելու համար մարդիկ ստիպված են եղել օգտագործել կենդանիներ՝ ձիեր կամ էշեր:

Կապի, տրանսպորտի, տեղեկատվության փոխանակման հարցն առավել խնդրահարույց էր պետական և տեղական իշխանության մարմինների համագործակցության համար: Տուժել է համայնքների և շրջկենտրոնների միջև կապը:

Կտրոններով տրվող սահմանափակ վառելիքն առաջնահերթ օգտագործվում էր գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար:

Տրանսպորտի խնդիրը դրսևորվում էր հատկապես սննդամթերքի տեղափոխման հարցում. մեծ դժվարություն էր ցորենը դաշտերից ալրաղաց տեղափոխելու, կամ՝ գյուղատնտեսական մթերքները շրջաններից մայրաքաղաք հասցնելու հարցը:

Երեխաները դպրոց և մանկապարտեզ հաճախելու համար հաճախ ոտքով էին տեղ հասնում՝ հաղթահարելով մեծ տարածություններ:

Մայրաքաղաքում էլեկտրոմոբիլներով են փորձել կազմակերպել տեղաշարժը: Շրջաններում տրանսպորտին փոխարինել են կենդանիները՝ ձին, էշը: Կարևոր դեր է խաղացել նաև հեծանիվը:

«Հեծանիվով էի շարժվում Մարտունիում: Լավ էլ դժվար բան ա: Բայց գնում Ստեփանակերտ, գալիս էի հեծանիվով»:

«Պիտի զանգեիր վարչակազմին, վարչակազմը 5 լիտր բենզին տար, էն էլ էթայիր, ճամփին մնայիր»:

«Վառելիքը տալիս էին աշխատավորներին, հաշվարկած, գրամ առ գրամ, թե մեկ հեկտարին ինչքան պետքա գնա, նպատակային»:

«Ոչ մի ձև հնարավոր չէր ապահովել, վառելիք չկար, չէին տրամադրում, անգամ երեխաս 40 աստիճան ջերմության մեջ է եղել, անգամ այդ ժամանակ վառելիք չէն տրամադրել, որ տանենք: Մենք մեր ուժերով, 20 լիտր բենզինին 45 հազար դրամ ենք տվել, առել ենք, որ երեխային տանենք հիվանդանոց»:

Ինտերնետ և հեռախոսակապ

Ինտերնետի մատակարարումը կախված է եղել էլեկտրաէներգիայից: Երբ հոսանք չի եղել, չի ապահովվել նաև ինտերնետ կապ:

Ադրբեջանի կողմից մի քանի անգամ կտրվել է ինտերնետի մալուխը, ինչը խաթարել է կապի աշխատանքը:

Հեռախոսակապ հիմնականում եղել է, բայց որակը բարձր չի եղել: Ստեփանակերտում հեռախոսով երկար խոսել չի հաջողվել:

Շատ դեպքերում մարդիկ ստիպված են եղել հեռախոսները լիցքավորել ավտոմեքենաների ակումուլյատորներով կամ արևային պանելների միջոցով: Կապի խնդիրները հատկապես ծանր են եղել գյուղերում, որտեղ ինտերնետի հասանելիությունը նույնիսկ նորմալ պայմաններում (նախքան շրջափակումը) ցածր է եղել:

«Կապը ահավոր էր, զուտ հեռախոսազանգ որպեից ավել չէր լինում, էն էլ ոչ նորմալ»:

«Պահ էր լինում, որ օրվա մեջ ուզենայիր մի հոգու զանգեիր, երեք ժամ չարչարվեիր, որ կարողանայիր զանգել»:

Բժշկական օգնություն

Բժշկական օգնության խնդիրները եղել են ամենաբարդն ու զգայունը: Դեղորայքի պակասի պատճառով շատ հիվանդներ չեն կարողացել ստանալ անհրաժեշտ բուժում: Նրանց մի մասը ստիպված են եղել օգտագործել դեղերի փոխարինողներ, ինչը հանգեցրել է առողջական լուրջ խնդիրների:

Շատ դեպքերում հիվանդների բուժումն իրականացվել է տան պայմաններում:

Հղի կանայք և հաշմանդամներն առավել շատ են տուժել: Հիվանդներին Հայաստան տեղափոխելու համար վառելիք չի եղել, ինչը հանգեցրել է մահվան դեպքերի: Բժշկական օգնության բացակայությունը հատկապես ծանր է եղել երեխաների և ծերերի համար, որոնք չեն կարողացել ստանալ անհրաժեշտ բուժօգնություն:

Մայրաքաղաք Ստեփանակերտում հազվադեպ գործում էին միայն 2 շտապօգնության մեքենա. մարդիկ հիմնականում իրենց մեքենաներով էին հիվանդներին տեղափոխում հիվանդանոց:

«Շրջափակման ընթացքում ինձ մոտ խնդիր եղավ: Ես դեղ պետք է խմեի, որի հետ խմեցի ևս մի հատ, որը ինձ չէր նշանակված, բայց իմ դեղի փոխարինիչ տարբերակն էր, որովհետև վաբշե դեղ չկար էդ ժամանակ Արցախում»:

Ու ես ալերգիա ստացա, ալերգիկ մեծ ֆոն ունեցա ու էդ պահին, բարեբախտաբար, շտապօգնության համար ինչ-որ չափով վառելիք կար, ու էդ վառելիքի միջոցով ես հասա հիվանդանոց:

Եթե էդ վառելիքը չլիներ, բժշկի խոսքով, ես մի քանի ժամ հետո ուղղակի չէի լինի»:

«Ոչ մի ձև հնարավոր չէր ապահովել, վառելիք չկար, չէին տրամադրում: Անգամ երեխաս 40 աստիճան ջերմության մեջ է եղել, անգամ այդ ժամանակ վառելիք չէն տրամադրել, որ տանենք: Մենք մեր ուժերով, 20 լիտր բենզինին 45 հազար դրամ ենք տվել, առել ենք, որ երեխային տանենք հիվանդանոց»:

«Առավոտից իրիկուն մենք մտածում էինք՝ ոնց մեր հիվանդի հարցերը կարգավորենք, ոնց փոքր երեխու կերը գտնենք»:

Կրթություն

Երեխաների կրթության հետ կապված խնդիրները ներառել են դասերի ընդհատումները, դպրոցների ջեռուցման խնդիրները և երեխաների թերսնուցումը:

Շատ դեպքերում դասերն անցկացվել են առցանց, բայց դա նույնպես դժվարություններ է առաջացրել: Տներում հոսանքի բացակայությունը կամ էլեկտրաէներգիայի՝ ընդհատումներով մատակարարումը խոչընդոտել է կրթությանը:

Մանկապարտեզները հիմնականում փակվել են՝ բացառությամբ Մարտունի քաղաքի, քանի որ Մարտունիի մանկապարտեզում սնունդ եղել է:

Դպրոցներում դասերի ծավալը կրճատվել է, իսկ որոշ դեպքերում դպրոցները միավորվել են՝ վառելիքի խնայողության նպատակով:

Ուսման ընդհատման վառ օրինակ է Մարտակերտի Չլդրան գյուղից հարցվողի պատմածը. *«Բլոկադայի ժամանակ մեծ տղաս գնացել է Ստեփանակերտ՝ ծրագրավորող դառնալու համար սովորելու, բայց էնտեղ հնարավոր չէր մնալ: Պիտի գար տուն, տնից տրանսպորտով ամեն օր գնար-գար: Հետո բլոկադայի ժամանակ տրանսպորտ որ արդեն չկար, ուսումը մնաց կիսատ: Ու հետո էկավ ստեղ (նկատի ունի՝ Հայաստան – խմբ.), որ մնաց կիսատ, նորից գնաց տասներկուերորդ դասարան»:*

Երեխաները հաճախ սոված են գնացել դպրոց, ինչը բացասաբար է ազդել նրանց ուսման վրա: Շատ դեպքերում երեխաները չեն կարողացել հաճախել դպրոց՝ տրանսպորտի բացակայության պատճառով, քանի որ ոտքով չեն կարողացել հասնել դպրոց կամ բուհ:

Կրթության ապահովման խոչընդոտ է եղել երեխաների մոտ գյուկոզայի պակասը, քաղցր թեյի և ընդհանրապես՝ քաղցրեղենի պակասը: Սա առաջացրել է գլխացավեր և թուլություն: Հարցվողների մեծամասնությունը նշել է այս խնդրի և այն մասին, որ երեխաների թերսնուցումը թույլ չի տվել կենտրոնանալ դասերի վրա: Եղել են աշակերտների ուշաթափություններ:

«Երեխաները դպրոց էին գնում քաղցրաջրով, բայց հասնում էին դպրոց և թուլանում»:

«Քաղցրը գոնե քաղցրաջուր ենք արել, տվել ենք՝ երեխեքը գնան դպրոց: Բայց եղել ա՝ հասել են դպրոց, զանգել են, ասել են՝ երեխան լավ չէ, թույլ ա զգում, եկեք, տարեք տուն»:

«Աղջիկս դպրոցական էր: Էդ ընթացքում իր կոշիկը պատռվել էր, չէի ճարում խանութներում իր ռազմերը, ահագին ժամանակ ինքը բացակայեց դասերից դրա պատճառով»:

Երեխաներին առնչվող խնդիրներ

Փոքր երեխաները հատկապես դժվարություններ են կրել սննդի և հիգիենայի պակասի պատճառով: Նոր ծնված երեխաների համար սննդի և հիգիենայի պարագաների պակասը հատկապես սուր խնդիր է եղել:

Շատ երեխաներ զրկված են եղել նաև կրթությունից և զվարճանքից, ինչը բացասաբար է ազդել նրանց հոգեբանական վիճակի վրա:

«Վերջում արդեն շամպուն էլ չկար, որ ես երեխեքին լողացնեմ»:

«Երեխան, ընդհանրապես, լացում էր, շունչ էր պահում, լեզուն կուլ էր տալիս, այդ օրերին ընդհանրապես շատ էր կրկնվում, անգամ մինչև հիմա: Երևանում էդպիսի հիվանդանոց չի մնացել, որ չայցելենք: Հանգստացնող են նշանակել, դրա շնորհիվ մի քիչ թեթևացել է»:

Հոգեբանական խնդիրներ

Շրջափակման ընթացքում մարդիկ բախվել են հոգեբանական խնդիրների, ինչպիսիք են սովի, անվտանգության և ապագայի անորոշության վախը: Շատերը նշել են, որ լարվածությունն ու սթրեսը հոգեբանական խնդիրների հիմնական պատճառներն են եղել:

Ադրբեջանի զորավարժությունները և դիրքերից եկած տեղեկությունները մշտական լարվածության մեջ են պահել Արցախի ժողովրդին:

Հոգեբանական լարվածությունը երբեմն ունեցել է ծայրահեղ դրսևորումներ, օրինակ՝ Ստեփանակերտ քաղաքում մի մարդ օդ է կրակել՝ պատճառաբանելով նրանով, որ հաց չունի, որպեսզի կերակրի իր երեխաներին:

«Ամեն պահ սպասել ենք, որ մեռնենք կամ ապրենք: Հարմարվել ենք, թե ո՞նց, չգիտենք»:

«Դու չգիտես, թե վաղը արդյոք քեզ հաց լինելու ա, թե՞ չէ»:

2. Անվտանգային միջավայրը շրջափակման պայմաններում

Արցախի բնակչությունը շրջափակման ընթացքում ապրել է անվտանգության խորը ճգնաժամ, որը բնութագրվում էր մշտական սպառնալիքների, հոգեբանական ճնշման և անորոշության մթնոլորտով: Մարդիկ գտնվում էին անընդհատ լարվածության մեջ՝ առանց հստակ պատկերացման, թե երբ և որտեղ կարող է հաջորդ հարվածը վրա հասնել: Այս իրավիճակը հանգեցրել էր ոչ միայն ֆիզիկական անվտանգության զգացողության կորստին, այլև հոգեբանական ծանր հետևանքների՝ կյանքի արժեքի զգացողության նվազմանը:

Հատկապես Ադրբեջանին սահմանակից վայրերում լարված վիճակը սրել էր վախն ու անհանգստությունը: Ամենօրյա կյանքը դարձել էր անկանխատեսելի, իսկ դեպի Հայաստան տանող ճանապարհին տեղի ունեցող բռնությունները ավելացրել էին հուսահատությունը: Բնակիչները հաղորդում էին, որ նույնիսկ իրենց բակերում և տներում իրենց անվտանգ չէին զգում:

Կենսական պահանջմունքների բավարարման համար առաջին անհրաժեշտության ապրանքների (սնունդ, գազ, բենզին, դեղորայք, այլ) բացակայությունը ևս ուժգնացնում էր մարդկանց տառապանքը: Այս իրավիճակը հատկապես ծանր էր երեխաների և տարեցների համար, ովքեր հոգեբանական առումով ավելի խոցելի էին:

«Սնայպերն էլ կարա ինձ քցի մեր բակում»:

«Կյանքը որևէ արժեք չուներ նման իրավիճակում: Մենք ապրում էինք այնպես, ասես մեր գլխին կախված էր սուր, և ամեն վայրկյան սպասում էինք վերջին հարվածին»:

«Դու տունդ չես իմանում, թե վաղը ինչ է լինելու»:

«Դեպի Հայաստան գալուց ճանապարհից մարդկանց բռնելու դեպքերը (նկատի ունեն Վագիֆ Խաչատրյանի և երիտասարդ ֆուտբոլիստների՝ անցակետում ձերբակալության դեպքերը – խմբ.) ևս բացասական ազդեցություն են թողել: Մարդիկ վախենում էին տեղաշարժվել նույնիսկ իրենց սեփական տարածքում»:

«Երբ դու քո մայր երկրից կտրված ես, դա արդեն ինքն իրեն մեծ ճնշում է»:

«Ճնշում է դիտարկվել տարբեր ապրանքատեսակների բացակայությունը կամ թանկությունը»:

Սպառնալիքներ և հոգեբանական ճնշում

Արցախի բնակչության նկատմամբ սպառնալիքներն ու հոգեբանական ճնշումը պահպանվել և աստիճանաբար ուժեղացել էին շրջափակման ժամանակաշրջանում: Ադրբեջանական կողմը ձգտում էր վերացնել դիմադրության ցանկացած նշան, ինչը հանգեցնում էր վախի միտումնավոր սերմանմանը և հոգեբանական ճնշման տարբեր մեթոդների կիրառմանը:

Սպառնալիքները տարբեր ձևեր էին ընդունում՝ սկսած ուղղակի կրակոցներից և ռազմական գործողություններից մինչև հոգեբանական ճնշման նուրբ մեթոդներ, ինչպիսիք էին՝

բարձրախոսներով սպառնալիքները և գիշերային ժամերին արհեստական աղմուկի ստեղծումը: Այս ամենը հանգեցնում էր բնակչության մշտական սթրեսի և հուսահատության:

«Հիշում եմ՝ Արցախում շատ մեծ միտինգ էր եղել, ու նույն օրը ադրբեջանցիները Շուշիից հրետանիով կրակել են մարտական դիրքերի վրա, որ ձենը լսվի, ու ցրվեն մարդիկ»:

«Մենք զգում էինք, որ մեզ հսկում են ամեն քայլափոխում: Նույնիսկ մեր սեփական տներում մենք անապահով էինք զգում»:

Սահմանային լարվածություն

Սահմանին մոտիկությունը և ադրբեջանցիների տեսանելիությունը ստեղծել էին մշտական սպառնալիքի զգացողություն: Բնակիչները գիտեին, որ հակառակորդը գտնվում է ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա, ինչը վերածել էր նրանց կյանքն անընդհատ սպասման և անվտանգության զգացողության բացակայության:

Սահմանային գյուղերում վիճակն ավելի ծանր էր, քանի որ բնակիչները գտնվում էին անմիջական վտանգի տակ: Նրանց առօրյան դարձել էր անկանխատեսելի, իսկ ամենօրյա գործունեությունը (ինչպիսիք էին երեխաներին դպրոց ուղարկելը կամ գյուղատնտեսական աշխատանքները) ուղեկցվում էր մշտական վախով:

«Եթե դու գիտես, որ մի քանի մետրի վրա քո թշնամին է... մեկ է՝ դու հանգիստ չես քնում: Դու երեխայիդ ուղարկում ես դպրոց, հանգիստ չես լինում»:

«Անօդաչուներն են երբեմն հսկել սահմանային վայրերը, և մարդիկ չեն իմացել, թե իրենց վրա կգցեն ռումբ, թե՞ ոչ»:

«Միշտ սպառնալիք ա, ամեն օր սպառնալիք ա էնտեղ: Վախում ես, ոչ մի տեղ դուրս չես գալիս»:

«Մեր գյուղի սարի գագաթում թուրքերն են: Նրանք խոսում էին, ծիծաղում, բայց մենք չէինք վախենում, թեև գիտեինք, որ նրանք մեր թշնամիներն են»:

Կրակոցներ և բռնություններ

Սահմանամերձ գյուղերում կրակոցները դարձել էին առօրյա երևույթ: Ադրբեջանական կողմը հաճախակի կրակ էր բացում՝ թիրախավորելով ոչ միայն ռազմական օբյեկտները, այլև խաղաղ բնակչությանը, դպրոցները և գյուղատնտեսական աշխատողներին:

Կրակոցների հետ մեկտեղ գրանցվում էին նաև ուղղակի բռնության դեպքեր: Այս իրավիճակը հատկապես ծանր էր գյուղատնտեսությամբ զբաղվողների համար, ովքեր ստիպված էին աշխատել կրակոցների տակ:

Կան վկայություններ այն մասին, որ կրակոցներ են արձակվել Ամարասի վանքը վերանորոգողների ուղղությամբ: Կրակել են նաև Մարտունու շրջանի Սոս գյուղի կոմբայնավարի վրա:

Ընդհանուր առմամբ, կրակոցներ են եղել Արցախի տարբեր սահմանային վայրերում՝ Ասկերանի շրջանի Խրամորթ, Խնաբադ, Նախիջևանիկ, Ներքին Սզնեք, Սարուշեն, Մարտակերտի շրջանի Վարդաձոր, Ճանկաթաղ, Մարտունու շրջանի Սոս, Մաճկալաշեն, Կարմիր շուկա և այլ գյուղերում, ինչպես նաև՝ Մարտունու շրջանի Ճարտար քաղաքում:

Բացի կրակոցներից, այլ տիպի սպառնալից իրավիճակներ են առաջացել: Մարտակերտի շրջանի Զագլիկ գյուղի մոտ ավտոմեքենաներով անցնելիս ադրբեջանցիները հայհոյանքներ են հնչեցրել, իրենց ավտոմեքենան սպառնալից կերպով վարել տեղացիների ավտոմեքենաների ուղղությամբ:

«Մինամյոտով կրակում էին գյուղի վրա: Ավտոմատով, մինամյոտով դպրոցի կողմերը, գյուղի կողմերը, տենց կրակում, բան էին անում»:

«Դեպք է արձանագրվել, երբ երեխայի մեջքին փամփուշտ է քսվել, քերծվածք է առաջացել»:

«Սարուշենի գյուղապետը իր երեխային տարել է կոմբայնի կողքը կանգնեցրել, որ գոնե դրա համար չկրակեն»:

«Մարտունու շրջանում կոմբայնավարի վրա կրակել են, իսկ մեկ այլ դեպքում՝ գյուղացուն, որը գնացել էր կովերին բերելու, բռնել ու սպանել են»:

«Կինս, հարսս հենց հարևան գյուղում (Ճանկաթաղում – խմբ.) էին աշխատում, հենց սահմանային: Ուղիղ նշանառության տակ էին, մի կիլոմետր, 800 կամ 700 մետրի վրա: Կրակահերթեր լինում էին: Վախենում էին»:

«Մեկի տան կռիշին էր հասնում, մեկի հայաթին էր ընկնում»:

«Կարմիր շուկայի վրա կրակում էին անընդհատ, դեպք է եղել, որ ինչ-որ մեկի տուն է մտել այդ պարկուճը: Մի անգամ կրակել են, ինչ-որ մեքենա են պայթացրել հենց դպրոցի ու մանկապարտեզի մոտ»:

Սպառնալից հայտարարություններ

Ադրբեջանցիների կողմից բարձրախոսներով հնչեցվող սպառնալիքները դարձել էին առօրյա երևույթ: Այս հայտարարությունները հաճախ ուղեկցվում էին վախեցնող կոչերով, հայհոյանքներով, երբեմն՝ երաժշտությամբ կամ այլ ձայնային հաղորդագրություններով, որոնք նպատակ ունեին խախտելու բնակիչների հոգեբանական հավասարակշռությունը:

Այս մեթոդները կիրառվում էին հատկապես գիշերային ժամերին, երբ մարդիկ փորձում էին հանգստանալ, ինչը հանգեցնում էր քնի խանգարման և մշտական հոգնածության զգացողության: Բացի այդ, հնչեցվող հայտարարությունները հաճախ պարունակում էին կեղծ

տեղեկություններ, որոնք նպատակ ունեին սերմանելու խուճապ և անվստահություն՝ տեղական իշխանությունների նկատմամբ:

Խաչեն գյուղի շրջակայքում ադրբեջանցիները բարձրախոսներով՝ բնակիչների համար լսելի, հայտարարել են, որ «…կարող է գան, տան մեջ մորթեն»: Թաղավարդ գյուղի մերձակայքում բարձրախոսներով հայտարարել են՝ «Դո՛ւրս եկեք, դո՛ւրս եկեք»: Մարտունու շրջանում ևս շրջել են բարձրախոսներով համալրված ավտոմեքենաներ՝ քարոզելով, որ դա ադրբեջանական տարածք է, և բնակիչները պետք է լքեն այն: Ներքին Սզնեքի մոտ ադրբեջանցիներն արձակել են ռռնոցի նմանվող ձայներ:

Այդ կոչերը հիմնականում արվել են ռուսերեն, քիչ դեպքերում՝ հայերեն:

Բացի հնչող սպառնալից հայտարարությունները, երբեմն ադրբեջանցիները որպես ճնշման գործիք միացրել են տհաճ, բարձր երաժշտություն կամ նամազ: Թաղավարդում, օրինակ, միացրել են մուղամ, իսկ Մարտունի քաղաքի մոտակայքում՝ մոլլայի ելույթ:

«Շուշիից չգիտեմ ինչ էին միացրել՝ գոռում էին: Կոչեր էին անում՝ հայեր, ձեզ սպանելու ենք»:

«Եղբայրս, որ Աղդամին մոտ էր, ասում էր՝ ամեն առավոտ դինամիկներով հայտարարել են՝ դուրս եկեք, փիս է լինելու, գնացեք»:

Սպառնալիքներ՝ պետական մակարդակով հնչեցվող ուղերձներում

Ադրբեջանի՝ պետական մակարդակով արված հայտարարությունները և սպառնալիքները դարձել էին հոգեբանական ճնշման կարևոր գործիք: Այդ հայտարարությունները տարածվում էին ինչպես պաշտոնական մամուլի միջոցով, այնպես էլ հեռուստատեսությամբ ու ռադիոյով:

Սպառնալիքները հաճախ ուղեկցվում էին քաղաքական պահանջներով և ունեին հոգեբանական ներգործություն ունենալու հստակ նպատակ: Դրանք խորացնում էին անվտանգության զգացողության բացակայությունը և հանգեցնում բնակչության մեջ հուսահատության զգացման աճին:

«Ալիևը հայտարարել է, որ եթե չստորագրեն ու մնան Ադրբեջանի կազմում, ապա հակատեռորիստական միջոցառում ենք անցկացնելու»:

«Միշտ վախի մեջ եղել ենք. որ սոր (այսօր – խմբ.) չլնի, մյուս օրը կվերցնեն»:

Սպառնալիքներ՝ համացանցում

Համացանցի միջոցով տարածվող սպառնալիքները և կեղծ տեղեկությունները դարձել էին հոգեբանական ճնշման գործիք: Ադրբեջանցի օգտատերերն ակտիվորեն տարածում էին պատերազմի մոտալուտ սկսվելու մասին տեղեկություններ, վախեցնող տեսանյութեր և սպառնալիքներ:

Այս գործողությունները հատկապես ուժեղացել էին շրջափակման վերջին ամիսներին, երբ Արցախի բնակչությունը գտնվում էր ծայրահեղ դժվար պայմաններում: Համացանցային

սպառնալիքներն ուղեկցվում էին հեռախոսային զանգերով և SMS-ներով, որոնք պարունակում էին կեղծ տեղեկություններ տարհանման կամ այլ հրատապ միջոցառումների մասին:

«Պրոադրբեջանական լրատվամիջոցները գրում էին՝ սովից սպանեք դրանց կամ միանգամից կոտորենք»:

«Զանգում էին վարչակազմ՝ ռուսական խաղաղապահների անունից հայտարարում, որ զգուշացնում ենք, դուրս եկեք»:

Խաղաղապահների դերը

Ռուսաստանցի խաղաղապահների գործունեությունն Արցախում հակասական գնահատականների էր արժանանում: Մի կողմից, նրանք որոշ դեպքերում կարողանում էին կանխել լարվածությունը և ծառայում էին որպես կապող օղակ՝ տեղական բնակչության և ադրբեջանական կողմի միջև: Մյուս կողմից, նրանք հաճախ անզոր էին կամ անտարբեր՝ լարված իրավիճակների նկատմամբ, ինչը տեղական բնակչության մոտ լրացուցիչ դժգոհություն էր ստեղծում:

Խաղաղապահների գործունեության մասին կարծիքները խիստ տարբերվում էին՝ կախված կոնկրետ դեպքերից և անձնական փորձառությունից: Որոշ բնակիչներ նշում էին, որ խաղաղապահները փորձում էին օգնել, մինչդեռ մյուսները նրանց մեղադրում էին անգործության կամ նույնիսկ Ադրբեջանական կողմի հետ համագործակցելու մեջ:

«Խաղաղապահները չէին կարող ազդել իրադարձությունների վրա. 1800 հոգի իրանք են, ի՞նչ պիտի անեն»:

«Թուրքը գա քեզ բռնի, մորթի, ռուսը բան չի անի, վախում են»:

«Խաղաղապահները երեխաներին քաղցրեղեն են բաժանել, նույնիսկ ֆուտբոլ խաղացել նրանց հետ»:

«Թուրքը եկել, կրակում է, խաղաղապահը մեզ չի թողնում կրակենք»:

«Ամենաշատը իրանց անգործությունն էր մեզ ջղայնացնում: Դեպք ա եղել, երբ ադրբեջանցիները կրակել են տրակտորիստի վրա, սպանել են ու խաղաղապահները բան չեն արել»:

Արցախի իշխանությունների դերը

Արցախի իշխանությունները բախվում էին բնակչության կողմից մեղադրանքների՝ կազմակերպական սխալների և անգործության համար: Շատ բնակիչներ նշում էին, որ իշխանությունները բավարար միջոցներ չեն ձեռնարկել բնակչության անվտանգությունն ապահովելու և հիմնական պահանջները բավարարելու համար: Որոշ դեպքերում

իշխանությունները հանդես էին գալիս որպես միջնորդ ռուս խաղաղապահների և տեղական բնակչության միջև՝ փորձելով մեղմել լարված իրավիճակները:

«… բայց լուսավոր մի բան, գոնե հույս տային, ասեին՝ մի վախեցեք, մենք պայմանավորվել ենք, հանձնում ենք, դուք գնացեք երկու օր ձեր տանը մնացեք, պատրաստվեք դրան, եթե թանկ բան ունեք, մի ձև կազմակերպեք, վերցրեք, որ հանգիստ դուրս գաք: Էդ երկու խոսքը չի եղել: Մարդկանց թողել են պանիկայի տակ՝ առանց հստակ հրահանգների»:

«Մարդիկ պոստում կոտորվում են, հաց էլ չկար, պաշտոնյաները սիգարետը բերում, հատիկը 100 դրամով ծախում են, էշի տեղ են դնում մարդկանց, հատիկով են ծախում»:

3. 2023 թ. սեպտեմբերի 19-ի հարձակման նախապատրաստումը և մեկնարկը

Հարձակման նախապատրաստումը և հոգեբանական գրոհը

2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության նկատմամբ սկսված լայնամասշտաբ ռազմական գործողությունները եղել են երկարատև և մանրակրկիտ պլանավորված գործողության արդյունք: Այս հարձակմանը նախորդած ամիսներին ադրբեջանական կողմն իրականացրել է բազմաբնույթ սադրիչ գործողություններ՝ երեք հիմնական ուղղություններով.

1. **Ռազմավարական նախապատրաստություն**
   - Զորքերի և ռազմական տեխնիկայի համակարգված կուտակում շփման գծի երկայնքով:
   - Ռազմական ենթակառուցվածքների արդիականացում և հրետանային ու ԱԹՍ համակարգերի տեղաբաշխում:
   - Ռազմական կադրերի վերապատրաստում՝ թուրքական մասնագետների հետ համատեղ:

2. **Սահմանային էսկալացիա**
   - Հրետանային և հրաձգային պարբերական միջադեպերի կազմակերպում:
   - Սահմանամերձ գյուղերի ուղղությամբ սադրիչ գործողություններ:
   - Լարված իրավիճակների արհեստական ստեղծում՝ խաղաղապահ ուժերի հետ համատեղ հսկողության կետերում:

3. **Հոգեբանական ճնշում**
   - Բնակավայրերի ուղղությամբ բարձրաձայն աղմկային ազդեցությունների կիրառում (բարձրախոսների միջոցով հնչեցվող ուղերձներ, վախեցնող կամ տհաճ ձայներ, ադրբեջանական երաժշտություն):
   - Սոցիալական ցանցերում համակարգված հոգեբանական ճնշման արշավ:
   - Տեղական բնակչությանն ուղղված ուղղակի սպառնալիքներ:

Մեծ թվով հարցվողներ նշել են, որ իրենք միշտ սպասել են հարձակմանը՝ եզրահանգումներ կատարելով թե՛ ադրբեջանցիների կողմից կիրառվող հոգեբանական ճնշման միջոցներից, թե՛ առարկայական քայլերից:

«Անընդհատ կոչ էին անում արցախցիներին, որ պատրաստվեք, շուտով Ստեփանակերտը մերն ա լինելու»:

«Լաչինի միջանքը որ փակել են, սաղ գիտեին, որ պատերազմ ա լինելու»:

«Տենց բաներ ասում էին, որ կռիվ ա սկսելու, ասում էին՝ բերելու են դրոշը պրեզիդենտի շենքի վրա դնեն»:

Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի բնակիչը նշում է, որ իր ֆեյսբուքյան գրառումներից մեկի ներքո մի ադրբեջանցի գրել է.

«Դու ոչ մեկից մի նեղացիր, նեղացիր մենակ քո ղեկավարներից, երկու կամ երեք օրից պատերազմ ա սկսվելու, մեզ պետք է ձեր ղեկավարներին ձերբակալել»:

Մեկ այլ հարցվող Ստեփանակերտից նշել է, որ.

«Սեպտեմբերի 17-ին սկսեցին հայհոյանքներով խոսել: Ասացին՝ տեսե՛ք՝ մենք ձեզ ինչ ենք անելու: Հետո կռիվը սկսվեց հենց մեր դիրքից: Մենք զոհ տվեցինք, զոռով իջեցրին կանանց, ասացին՝ դուք գնացեք ձեր տները, գործ չունե՛ք»:

Այս բոլոր սպառնալիքներն ու զորքերի կուտակումները խիստ բացասաբար են ազդել արցախցիների վրա՝ նրանց մոտ առաջացնելով մշտական տագնապի զգացողություն: Հոգեբանական ճնշման մեթոդները հատկապես ուժեղ ազդեցություն են ունեցել երեխաների և տարեցների վրա:

Ասկերանի շրջանի Խաչեն գյուղի բնակիչը նշում է.

«Հազար ու մի բան ես մտածում, ասում ես՝ փոքր երեխա կա, բա էս ջահելները...»:

Մարտունու շրջանի Հերհեր գյուղի բնակիչը նշել է, որ.

«Տատիս դողում էր, մի պահ ինքը ուշաթափվեց»:

Մյուս կարևոր նախազգուշական նշանը զորքերի կուտակումներն էին:

Ասկերանի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչը նշել է.

«Ընդհանրապես մինչև սեպտեմբերյան 19-ը դեպքերը պարբերաբար մեզ հաղորդումներ էր տրվում, որ անընդհատ կուտակումներ կատարվում էին: Գյուղը շրջափակված էր էս 3 տարիների ընթացքում: Մենք հաճախ անզեն աչքով էլ տեսնում էինք (քանի որ շատ մոտ էր գյուղից. ընդամենը մի քանի հարյուր մետր էր ադրբեջանական դիրքերը և՛ ուղիղ, և՛ աջից, երկու կողմից էլ), որ և՛ ինժեներական աշխատանքներ ավելացան, և՛ մեծ տեխնիկա շարժվեց: Նկատում էինք, որ ինչ-որ բան կատարվում ա, բայց կոնկրետ որ այն վերջիվերջո կվերածվի այսպիսի լայնամասշտաբ պատերազմի, էսպես չէինք մտածում»:

Մեկ այլ հարցվող նշել է, որ.

«Մինչև սեպտեմբերի 19-ը էդպես արդեն լուրեր կար, որ մեր Արցախի հայաբնակ մասի և ադրբեջանական մասի շփման մասում կուտակումներ կան, ադրբեջանական զինուժի կուտակումներ կային»:

Նույնի մասին է շեշտել հարցվողը՝ Մարտունիից.

«Ուղղակի մենք նկատել ենք իրենց շարժը, սահմաններին մոտիկացումը, իրենց տեխնիկաների, անձնակազմի շարժը»:

Անօդաչուների հաճախակիացած ակտիվությունն էլ էր մարդկանց հուշում մոտեցող վտանգի մասին:

Ստեփանակերտի բնակիչը նշել է.

«Անօդաչու թռչունները անընդհատ գալիս էին, ստուգում էին, վախում էինք»:

Հատկապես խնդրահարույց է եղել խաղաղապահ ուժերի դերը հարձակման նախապատրաստման այդ գործընթացում:

Այսպես, Ասկերանի շրջանի Այգեստան գյուղի բնակիչը, ով ծառայել է Արցախի հակաօդային պաշտպանությունում, նշում է.

«Ռուսի գեներալը թուրքի գեներալի հետ Նորագյուղի պոստ է եկել: Նրանք մանրամասն ուսումնասիրում էին մեր պաշտպանական դիրքերը:

Յոթ հոգով են եկել, ՈՒԱԶ-ով: Էդ մի հատն եմ իմացել, որ թուրք ա: Դեմքից եմ ջոգել: Ռուսն էլ ասում ա, որ մեր մեջ ամեն ազգի մարդ կա»:

Հարձակման մեկնարկը և ռազմական գործողությունների ընթացքը

2023 թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 13:00-13:30-ի սահմաններում սկսված ռազմական գործողություններն իրենց մասշտաբով և կազմակերպվածությամբ զգալիորեն տարբերվում էին նախորդ բոլոր բախումներից: Հարձակումն իրականացվել է միաժամանակյա հարվածներով՝ բազմաթիվ ուղղություններով.

1. **Առաջին փուլ (13:00 - 14:30)**
   - Արցախի հեռահաղորդակցության հանգույցների և հակաօդային պաշտպանության համակարգերի ոչնչացում:
   - Խորը հետախուզություն իրականացնող ԱԹՍ-ների կիրառում:
   - Հրետանային համակենտրոն հարվածներ՝ վարչական կենտրոնների ուղղությամբ:

2. **Երկրորդ փուլ (14:30 - 17:00)**
   - Ադրբեջանական ստորաբաժանումների ներթափանցում Արցախի պաշտպանական գծեր:
   - Զուգահեռաբար՝ռազմական և քաղաքացիական ենթակառուցվածքների ոչնչացում:
   - Հոգեբանական ճնշման գործողությունների ինտենսիվացում:

3. **Երրորդ փուլ (17:00 - 19:00)**
   - Տարածքների վերահսկողության ամրապնդում:
   - Քաղաքացիական բնակչության տարհանման ուղիների արգելափակում:

Հարձակման առաջին րոպեների նկարագրությունները բնակիչների վկայություններում հետևյալն են.

«Ամեն կողմից ծուխ, պայթյուն, կրակ: Տանը լինելուց հանկարծ լսվեց ճեղքող ձայն, հետո միանգամից մի քանի պայթյուն»:

Մարտակերտի շրջանի Վարդաձոր գյուղի համայնքապետի վկայությունը հետևյալն է.

«Հրթիռակոծվել ա, սմերչ էլ ա խփել, ես եմ անձամբ տեսել: Տեսա՝ ծուխ բարձրացավ, եկա, տեսա՝ ժողովուրդը իրանց նկուղներում»:

Ներքին Սզնեքի բնակիչը պատմել է.

«Առաջնահերթ էդ կրակահերթերը դեպի դիրքերն էին՝ մեր հայկական հենակետեր: Մեր աչքի առաջ մենք տեսնում ենք, որ ամբողջությամբ ոչնչացնում էին մեր հենակետերը, որովհետև շատ դիպուկ ձևով էին էդ կրակոցները:
Անձամբ ես դիտարկման ժամանակ նկատեցի, որ 5 հատ զրահատեխնիկա ա կանգնած մոտակայքում՝ տանկեր և ԲՄՊ-ներ: Արդեն պարզ դարձավ, որ սա պատերազմ ա»:

Ռազմական գործողությունների ընթացքում հատկապես ծանր իրավիճակ է ստեղծվել Մարտակերտի և Ասկերանի շրջաններում, որտեղ ադրբեջանական զինված ուժերը կիրառել են.

- Դ-20 և Դ-30 հաուբիցներ (152 մմ և 122 մմ տրամաչափով),
- Գրադ հրթիռային համակարգեր,
- 100 մմ հակատանկային թնդանոթներ,
- Սմերչ ականանետներ,
- Թուրքական արտադրության Bayraktar TB2 ԱԹՍ:

Նախքան հարձակումը, սահմանամերձ բնակավայրերում բնակիչները սկսել էին ինքնակազմակերպվել՝ ստեղծելով տեղական ինքնապաշտպանական խմբեր, որոնք հիմնականում զինված էին թեթև հրաձգային զենքերով:
Շատ գյուղերում բնակիչները կազմակերպել են ինքնապաշտպանություն: Ասկերանի շրջանի Ներքին Սզնեք գյուղի բնակիչը պատմում է.

«Դիմադրելով հասան մեր տնից 10-20 մետր հեռավորության վրա, էնտեղից սկսեցին գյուղը պաշտպանել»:

Մարտունու շրջանի Կաղարծի գյուղի ղեկավարը նշում է.

«18 ավտոմատչիկներ կային, 18 հոգուն ես էի ղեկավարում: Մենք գյուղից դուրս առաջնային դիրքերը պահում էինք»:

Այնուամենայնիվ, տեղական ինքնապաշտպանական կառույցները չեն կարողացել արդյունավետ կերպով փոխարինել կանոնավոր պաշտպանական համակարգերին և դրանց դիմադրությունը տևական բնույթ չի կրել:

«Բարձրացանք, արդեն տեսանք, որ մեր պոստերը չկան: Կազմակերպեցինք, սաղ բնակչությանը տներից հանեն դուրս, արդեն մոտ էին, չէինք կարող պահել՝ 1-ը 20-ի հարաբերակցությամբ. մեր ձեռքն էլ մենակ ավտոմատ էր»:

Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղի բնակիչը նշում է.

«Փամփուշտներս քչացել էին, ամենքիս 2-3 մագազին պատրոն ա եղել: Էդ վախտ 311 պոստից կանչում են՝ թե ի՞նչ ա եղել, ասում եմ՝ թուրքերը ձորն են, պատրոնները քիչ ա:

Երկու հոգի էնտեղից պատրոն են բերում, մեկ էլ գրանատ: Ասեցի՝ դե գնացեք դուք ձեր պոստը, մենք մեր ձորը պահելու ենք, որ լինիան պահվի: Իրանք գնում են իրանց պոստ, դրանք մի քանի անգամ էլ են խփում»:

Վերը բերվածին համանման վկայությունները շատ են և հատկապես վերաբերում են այն դեպքերին, երբ աշխարհազորայիններով պաշտպանել են որևէ տեղանք՝ տեղից տեղ տեղափոխվելով:

Շատ արցախցիներ նշել են իրենց գյուղերի աշխարհազորայինների տված զոհերի մասին: Օրինակ՝ Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղի բնակիչը նշել է, որ իրենց գյուղը 10 զոհ է տվել: Նման տեղեկություններն ընդգրկում են ամբողջ Արցախը:

Հարձակման հոգեբանական ազդեցությունը (հատկապես՝ երեխաների վրա)

Արցախցիները, գրեթե առանց բացառության, բանակում ծառայող ու մարտական հերթապահություն իրականացնող որևէ հարազատ, ընկեր կամ ծանոթ ունեին: Հարձակման պահին, բացի սեփական անվտանգության մասին մտածելը, նրանք մեծ անհանգստությամբ նաև այս անձանց համար էին մտահոգվում: Երբեմն գալիս էին իրարամերժ տեղեկություններ, որոնք էլ ավելի էին լարում առանց այդ էլ լարված վիճակը:

Սեպտեմբերի 19-ի հարձակման մեկնարկին շատ երեխաներ եղել են դպրոցներում: Այդ պատճառով, բազմաթիվ արցախցիներ, իրենց կյանքը վտանգելով, գնացել են իրենց երեխաներին տուն բերելու:

Ասկերանի շրջանի Այգեստան գյուղի բնակիչը նշում է.

«Ձոռով գնացինք դպրոց, երեխեքին վերցրեցինք: Ասում եմ՝ վազեցե՛ք, գնացեք հարևանի պադվալ: Երեխեքը գնում են հարևանի պադվալը»:

Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղի բնակիչը նշել է.

«Երեխաները դասի են եղել էդ օրը: Փոքր տղաս պատուհանով ա դուրս եկել»:

Երեխաների մի մասը հրետակոծության մեկնարկի ժամանակ դպրոցից տուն վերառանալու ճանապարհին է եղել, ինչն անվտանգության լրացուցիչ ռիսկեր էր պարունակում:

«Ահավոր վիճակ էր: Չգիտեմ, թե ինչ էր կատարվում ինձ հետ: Գիտեք, դուք կարող է ասեք՝ լա՛վ, դե: Բայց եթե մեջը լինեք, այդ պահին արդեն դուք ոչ թե ձեր, այլ ձեր երեխայի մասին եք մտածում: Ասում եք՝ վայ, Աստվա՛ծ, մի բան չլինի»:

Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղի համայնքապետը նշում է, որ գյուղի մեջ 15 արկ է ընկել: Գյուղում երկու ԱԹՍ է տեսել, որոնցից մեկը հեռախոսակապի աշտարակն է պայթեցրել: Արկերի հարվածներից կորուստներ չեն եղել, բայց հարցվողը շեշտում է, որ երեխաները երկար ժամանակ ճնշված են եղել.

«Մինչև հիմա (նկատի ունի՝ արդեն Հայաստան տեղափոխվելուց հետո – խմբ.) էն փոքր երեխային ասում ես՝ գնո՞ւմ ես մանկապարտեզ, ասում ա՝ չէ, գնում եմ գյուղի մանկապարտեզ: Ճնշված ես զգում, որ ծննդավայրում, քո հողի վրա չես»:

«Մինչ օրս երեխաները հարձակման օրը հիշելիս վախենում են»:

Մարտունի քաղաքի բնակիչը մանկապարտեզում դաստիարակ է աշխատել: Նրա խոսքով՝ երեխաների մի մասը քնած է եղել հարձակման ժամանակ.

«Մինչև հիմա ոտքերիս ծանրությունը զգում եմ, թե ինչպես են այդ 35 բալիկը գոռալով կանչում՝ ընկե՛ր Ռուզան, մամայիս եմ ուզում, ընկե՛ր Ռուզան, վախենում եմ: Տենց բոբիկ, կիսատկլոր, կիսամերկ երեխաներին իջեցրինք նկուղ: Չէինք հասկանում՝ ինչ է կատարվում»:

Պայթյունի և կրակոցների ձայները մանկապարտեզի նկուղում պարբերաբար լսվել են: Երեխաներին համոզել են, որ դրանք ամպրոպի ձայներ են և վախենալու կարիք չկա:

Դաստիարակը նաև հիշում է, թե ինչպես է մի արկ մանկապարտեզի մուտքի դիմաց ընկել: Հարվածի ուժգնությունից շենքի պատուհանները կոտրվել են, նկուղի դուռը բացվել, իսկ ապակու կտորները լցվել են նկուղի միջանցք:

Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղի բնակիչը, ով զինվորական է եղել և մասնակցել է սեպտեմբերի 19-ի հակամարտությանը, նույնպես նշում է, որ իր երեխաները (5 եղեխա, որից 3-ը՝ անչափահաս, իսկ մեկը հաշմանդամություն ունի) մինչ օրս հարձակման օրը հիշելիս վախենում են, քանի որ առաջին հարվածներից նրանց տունը ցնցվել է:

4. Քաղաքացիական բնակչության պատսպարման պայմանները՝ սեպտեմբերի 19-ի հարձակման ընթացքում

Սեպտեմբերի 19-ի ռազմական գործողությունների մեկնարկին Արցախի բնակչությունը ստիպված եղավ ապաստան գտնել տարբեր վայրերում՝ կախված հնարավորություններից և մատչելիությունից: Հիմնականում մարդիկ ապաստարաններում մնացել են մինչև սեպտեմբերի 25-ը:

Պատերազմի առաջին պահերին շատերն անակնկալի եկան և հապճեպ փնտրեցին պատսպարման տեղեր: Այս իրավիճակը հանգեցրեց նրան, որ բնակիչները հաճախ պատսպարվում էին ընտանիքներով կամ փոքր խմբերով, քանի որ ոչ բոլորն էին կարողանում հավաքվել կազմակերպված ապաստարաններում:

Մարտակերտի Ճանկաթաղ գյուղի բնակիչը նշել է.

«Վազելով գնացինք դպրոցի նկուղ: Նկուղներում մնացինք 3 ժամ»:

Մարտունու շրջանի Քարահունջ գյուղում իրավիճակն ավելի քաոսային էր.

«Կեսը անտառներ ա վազել, կեսը մի տեղ ա փախել»:

Որոշ դեպքերում նկուղներն անպիտան էին պատսպարման համար՝ վատ վիճակում էին գտնվում կամ լցված էին պահածոներով, ինչի պատճառով մարդիկ ստիպված էին փնտրել տարհանման այլ ուղիներ:

Օրինակ՝ Ճարտար քաղաքի բնակիչը նշել է, որ իր իր ընտանիքին տեղափոխել է այլ բնակավայր՝ Վերին Ճարտար, որովհետև այնտեղ կար նկուղ՝ նորմալ պայմաններով:

Ոմանք վախից չեն գնացել ապաստարաններ.

«Ապաստարան տենց չեմ իջել, քանի որ մենակ էի, վախենում էի»:

Կային նաև այնպիսիք, որ հրաժարվում էին պատսպարվել՝ անձնական տարբեր պատճառներից ելնելով.

«Ճիշտն ասած, իմ մայրը ու հայրը մի քիչ ուրիշ մտածելակերպի տեր են: Նկուղ ընդհանրապես ամբողջ պատերազմը չեն իջել, ամբողջ պատերազմը պատշգամբին նստած են անցկացրել»:

Ապաստարանների տեսակները

Առաջին ապաստարանները[2] հիմնականում սեփական կամ հարևանների նկուղներն էին: Բացի այդ, մարդիկ օգտագործում էին հանրակացարաններ, վարչական շենքերի նկուղներ, դպրոցներ, հիվանդանոցներ, նույնիսկ անտառներ, ավտոտնակներ և հավաբներ:

[2] Այն վայրերն ու շինությունները, որ հրատապ կերպով, հարձակման առաջին ժամերի ընթացքում օգտագործվել են որպես ապաստարաններ:

Ասկերանի շրջանի Նախիջևանիկ գյուղում, որտեղ ապաստարաններ չկային, մարդիկ պատսպարվել են ծառերի տակ.

«Հին գյուղ է եղել, և ապաստարան չի ունեցել, մնացել ենք ծառերի տակ»:

Մարտակերտի շրջանում որպես ապաստարան օգտագործվել է նույնիսկ հավաբունը.

«Պատեր դրած հավաբունը, որտեղ մնացել է 20 հոգի»:

«Հայաթում սարայ, բան կար, ծառեր, բաներ: Տենց, մտել են էդ սարայի տակ»:

Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում որպես ապաստարան է ծառայել հարևանի ավտոտնակը, որը.

«… բաց էր, ցուրտ էր: Երեխաները մրսում էին»:

Որոշ դեպքերում տներն են ծառայել որպես ապաստարան.

«Մտել ենք մեր կողքի տունը, թաղ ենք ասում, հին տունը, կամարաձև սարքած քարով երկրորդ հարկ»:

Ստեփանակերտի շենքերի նկուղներն ունեցել են մեծ տարածք.

«Մինչև 100 մետր երկարություն, 10-12 մետր լայնություն, որտեղ պատսպարվել են մինչև 150 հոգի»:

Ապաստարանների կենցաղային պայմանները

Ապաստարանների մեծ մասը չի համապատասխանել անվտանգության և հարմարավետության պահանջներին: Մարդիկ ստիպված էին իրենց հետ տանել ծածկոցներ, նստարաններ և այլ անհրաժեշտ իրեր: Շատերը նստել են գետնին կամ օգտագործել են ինքնաշեն կահույք:

Մարտակերտ քաղաքի դպրոցներից մեկում, որտեղ ապաստանել էր 80-90 մարդ, միայն մեկ նստարան է եղել:

Բադարա գյուղի հարցվողը նշել է, որ իրենց ապաստարանը գոմի նման է եղել: Մարտունի քաղաքի դպրոցի ապաստարանի պայմանները ծանր են եղել.

«Սենց չոր գետին ա, բիտոն ա: Պիտի գնաս, սենց մի հատ շոր տակդ դնես, նստես: Ոչ կարում ես պառկես, ոչ կարում ես ինչ-որ բան անես»:

Որոշ ապաստարաններում խոնավությունն ու ցուրտը լուրջ խնդիրներ էին.

«5 հարկանի շենքի նկուղը շատ ցուրտ էր»:

Կային նաև բացառություններ: Օրինակ՝ Մարտակերտի Կուսապատ գյուղում ապաստարանը նախապես պատրաստված էր և համեմատաբար լավ պայմաններ ուներ:

Ապաստարանների մեծ մասն ապահովված չի եղել սանհանգույցով:
Ստեփանակերտի բնակիչը նշել է.

«Մեր հիվանդներին ու ծերերին քարշ էինք տալիս շենքի 3-րդ հարկի տուալետ ու ետ էինք բերում»:

Ապաստարանների մակերեսը

Շատ տարբեր են եղել ապաստարանների տարածքների չափերը և այդտեղ պատսպարված բնակիչների թվաքանակները: Շատ է նշվել ապաստարաններում 10-ից 20 մարդ լինելու մասին:
Ասկերան քաղաքի դպրոցի 5 սենյակներում պատսպարվել են 200 հոգի:
Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղի նկուղը նոր է սարքված եղել, և այդտեղ, 88 քմ տարածքում, պատսպարվել է 25-30 մարդ: Բադարա գյուղում, մոտ 6 քմ մակերեսով նկուղում մնացել է 12 մարդ:
Մարտակերտի շրջանի Զագլիկ գյուղում 20 քմ տարածքում վրա մնացել են 20-25 հոգի, Պառավաթմբում՝ 20 քմ տարածքում՝ 12-13 հոգի, Սոս գյուղում 20 քմ տարածքում՝ մոտ 30 հոգի:
Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում 24 քմ տարածքում ապաստանել է 30 անձ, իսկ Կոլխոզաշենի մի տան 20 քմ տարածքում՝ 15 անձ: Ճարտար քաղաքում փոքր տանը ապաստանել են 30-35 հոգի:

Սնունդ և ջուր

Սննդի պակասը խիստ զգացվել է ապաստարաններում: Մարդիկ ռիսկի էին ենթարկում իրենց կյանքը՝ սնունդ հայթայթելու համար: Սնունդ բերելը կապված է եղել վտանգների հետ: Ստեփանակերտի բնակիչը նշել է.

«Երբ որ ձայները քչանում էին մի քիչ, տենց վազում էինք վերև, ինչ-որ բան վերցնում էինք, բերում»:

Շատերը կիսում էին ունեցած պաշարները միմյանց հետ: Ասկերանի շրջանի Իվանյան գյուղում սնունդը բաշխվել է կոլեկտիվ կերպով.

«Սնունդը հոսպիտալի ճաշարանի պետն ա տրամադրել ժողովրդին, բոլորին»:

Մարտակերտի շրջանի Զագլիկ գյուղում բնակիչները կազմակերպել են փոխօգնություն.

«Գյուղացիները սումկա են կազմել՝ ամեն մեկը իրա բարեկամի համար: Տարել եմ բաժանել, եկել»:

Սննդի պակասը մի քանի տեղերում վատ է անդրադարձել մարդկանց առողջության վրա և հանգեցրել է ուշաթափությունների, օրինակ՝ Մարտակերտի շրջանի Ճանկաթաղ գյուղում:

Ջրի պակասի խնդիրը համեմատաբար հեշտ է լուծվել՝ շնորհիվ մոտակա աղբյուրների:

Էլեկտրաէներգիա և կապ

Հարձակումների հետևանքով շատ բնակավայրեր զրկվել են հոսանքից և ինտերնետից: Մարդիկ ապաստարանները լուսավորել են մոմերով կամ լիցքավորվող լապտերներով:
Ստեփանակերտի բնակիչը նկարագրել է.

«Մոմեր հանեցինք, մոմերն էլ ավարտվեցին: Ինչ-որ պահ սկսեցինք դրսի դուռը բաց թողնել, որպեսզի գոնե մի քիչ լույս լինի»:

Հեռախոսային կապը սկզբնական շրջանում շատ վատ է եղել, մարդիկ չեն կարողացել կապ հաստատել իրենց հարազատների հետ: Ասկերանի շրջանի Լուսաձոր գյուղի մի բնակիչ նշել է.

«Դուրս էի գալիս նկուղից, ինտերնետի կապ էի բռնում: SMS-ներ էին գալիս, բոլորը ինձ էին գրում: Հատ-հատ չպատասխանելու համար ստատուսներով էի գրում՝ վիճակը ո՞նց ա»:

Բժշկական օգնություն

Բժշկական օգնությունը սահմանափակ էր՝ պայմանավորված դեղորայքի և մասնագետների պակասով: Մարդիկ փորձում էին օգնել միմյանց կամ ինքնաբուժմամբ էին զբաղվում:
Ասկերանի շրջանի Լուսաձոր գյուղի բնակիչը պատմել է.

«Մի կին վատացավ մի քանի անգամ, որովհետև իր տղան պոստում էր ու չէր կարողանում կապվել նրա հետ: Բոլորը ինչ-որ ձև օգնում էին, դեղ էին իջեցնում նկուղ, վալերիանկա էին տալիս»:

Ապաստարանների միջև տեղափոխության անհրաժեշտությունը

Ապաստարանների անբավարար կենցաղային և անվտանգային պայմանների պատճառով մարդիկ ստիպված են եղել պարբերաբար փոխել պատսպարման վայրերը՝ տեղափոխության ընթացքում անվտանգային ռիսկի ենթարկվելով:
Ասկերանի Այգեստան գյուղի բնակիչը նշել է, որ մոտ 2 կմ տարածք են անցել, գնացել իրենց ծանոթների մոտ՝ այն պարագայում, երբ ռումբերը նրանց «գլխի վերևով էին գնում»:
Լուսաձոր գյուղի բնակիչը նշել է.

«Մի քանի ժամ մնում ենք մեր շենքի նկուղում, տեսնում ենք, որ ավելի ա բարդանում, ձայները ավելի են մոտիկանում, տեղափոխվում ենք իմ սկեսուրի շենքի նկուղը»:

Մարտակերտ քաղաքի բնակիչը նշել է.

«Սկզբից գնացինք վարչակազմի շենք: Առաջին հարկում: Հետո մեզ ասեցին՝ Էնտեղից դուրս գանք, որովհետև դրոշը դրած ա, օպասնի ա: Մի քանի ժամ մնացինք, հրաման տվեցին, որ դուրս գանք: Հետո գնացել ենք դպրոցի պադվալը:

Առաջին պադվալից դուրս գալիս կրակոցներ կային, դրանց տակ ենք դուրս եկել, վազելով մտել ենք դպրոցի պադվալը, ահագին տեղ ոտքով վազել ենք: Ինչ սարսափով, ինչ վազքով, շնչակտուր»:

Ապաստարանների անվտանգային պայմանները

Պատսպարման վայրերի մեծ մասը չունեին անվտանգության տարրական պայմաններ: Որոշ դեպքերում մարդիկ ստիպված էին ապաստանել կիսաքանդ շենքերում կամ նկուղներում, որոնք չունեին բետոնե հենք կամ օդափոխության համակարգ: Մարտունիի շրջանի Սոս գյուղի բնակիչը հիշում էր.

«Անգամ չգիտեի՝ ինչպես անեի, որ երեխաներին հանգստացնեի: Սուտ էի ասում, որ մեր տունը ապահով ա, սաղ բետոնից ա, իրականում տենց չի»:

Որոշ բնակիչներ փորձում էին ինքնուրույն ամրացնել ապաստարանները. օգտագործում էին ավտոմեքենայի անվադողեր, փայտե վահաններ կամ կահույք, սակայն դրանք չէին կարող պաշտպանել ուժգին հարվածներից:

«Մեր տունն էլ վտանգավոր էր. հին տուն ա: Ձեները եկավ, տունը շարժվեց, մոտիկ էին խփում, երկրորդը արդեն գյուղի մեջին խփեցին: Հենց մեր տան առաջը սար էր, սարի հետևը իրանք էին»:

Անվտանգության ռիսկերը պատսպարման ընթացքում

Շատերը ստիպված էին պարբերաբար դուրս գալ ապաստարաններից՝ ջուր կամ սնունդ հայթայթելու համար, ինչը հաճախ վերածվում էր կյանքի համար վտանգավոր արկածի: Ասկերանի շրջանի Այգեստան գյուղի բնակիչը հիշում էր.

«Հելնում էինք, որ հեռախոս մի տեղ բռնենք, կապ լինի, գալիս էր գլխներիս վրով գնում էր (հարցվողը նկատի ունի՝ անօդաչու թռչող սարքերը – խմբ.): Ահավոր մի բան: Եղել ա պատերազմ, բայց էս վերջինի նման տենց չէր եղել»:

Մարտակերտի Ճանկաթաղ գյուղի բնակիչները փորձել են դուրս գալ ապաստարանից, բայց չի ստացվել.

«Ուզեցանք թե դուրս գայինք, կրակեցին: Երևի ակումբի մոտ ա ընկել, որովհետև ամբողջ տունը չգիտեմ ինչ վիճակ էր: Վախեցած նորից մտանք տուն, մի 10 րոպե մնացինք, աֆիցեռը եկավ ասեց՝ չշարժվե՛ք, ինչքան հեռախոս, բան կար, անջատեցե՛ք, Ձեր կյանքն ա կարևոր: Երեխեքին ձեռներիս բռնեցինք»:

Նույնի մասին է վկայել նաև Մաղավուզ գյուղի բնակիչը.

«Կարող ա դուրս գաք, թխեն, սպանեն ձեզ: Ոչ մեկը դուրս չի եկել»:

Չնայած վտանգին, Չլդրան գյուղի բնակիչը դուրս է եկել ապաստարանից, որ զանգ կատարի.

«Ես, ճիշտն ասած, դուրս էի գալիս: Իմ վրա գոռում էին, բայց դուրս էի գալիս, որ գոնե մի կապ գտնեի, ամուսնուս զանգեի, իմանայի՝ ինչ է կատարվում կամ գոնե ձայնը լսեի, տեսնեի՝ ինչ վիճակում է»:

Ըստ մի հարցվողի վկայության, Մարտունի քաղաքի մի բնակիչ զոհվել է հենց ապաստարանից դուրս գալու պատճառով՝ մտածելով, որ այդ պահին կարող է հասցնի, ջուր բերի.

«...նայել ա, էդ պահին՝ ոչ մի բան չկա, ասել ա՝ էդ ա, կանգնել ա, գնամ, ջուր չկա»:

Ստեփանակերտում մի դեպքում ռումբը հարվածել էր մանկապատանեկան կենտրոնին, և միայն պատահականության շնորհիվ էր, որ զոհեր չեն եղել.

«Եվրո պատուհանները սաղ քանդվեց: Էնքան ասկոլկաներ են հավաքել երեխեքը Կենտրոնի ներսից: Կողքը խանութ կա, էդ խանութի սառնարանները լրիվ կոտրվեց: Էդ սառնարանը պահեց, մի հատը մեր դռան մոտ էր դրած, սաղ իրա վրա վերցրեց (հարցվողը նկատի ունի՝ պայթյունի ուժը, ալիքը – խմբ.): Էդ ա մեզ փրկել, եթե դա չլիներ, ավելի շատ սենց կշրպտեր»:

Մեկ այլ քաղաքաբնակ նշել է.

«Նենց մեծ սնարդյադներ (արկ – խմբ.) են ընկած էդ ստադիոնում՝ երկաթե կտորները... Կամ Մշակույթի կենտրոնի վիճակը, որ տեսել էի. մարդ կենդանի չէր մնա»:

Անօդաչու թռչող սարքերի ձայնը դարձել էր մարդկանց վրա ազդող, պատերազմի ամենածանր գործոններից մեկը: Դրանց անսպասելի հայտնվելը և ռմբակոծությունները ստեղծում էին մշտական լարվածության մթնոլորտ:

«Անօդաչու թռչող սարքն էլ պտտվում ա»:

«Ձենը, որ վզզալեն գալիս ա, էդ ենք լսում: Էլ չգիտենք՝ որտեղ մտնենք»:

Հատկապես սարսափեցնող էր այն փաստը, որ անհնար էր կանխատեսել, թե երբ և որտեղ կհարվածեն դրանք: Մարտակերտի Ճանկաթաղ գյուղի բնակիչը պատմել է, թե ինչպես էին անօդաչու սարքերը յուրաքանչյուր 5 րոպեն մեկ ռմբակոծում գյուղի մատույցները:

Նույնիսկ հրադադարի հաստատումից հետո բնակիչները շարունակում էին մնալ ապաստարաններում՝ կասկածելով, որ հակառակորդը կարող է կրկին խախտել այն: Անհանգստության հիմնական պատճառներն են եղել երեխաների անվտանգության համար վախենալը և ադրբեջանցիներին չվստահելը:
Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղից հարցվողը նշել է.

«Մեկ ա, չես կարա վստահես, միգուցե ասեն զինադադար ա, բայց կարող ա էստեղից գան, էնտեղից: Վախի մեջ ես անընդհատ»:

Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի բնակչի խոսքերով.

«Դե ամեն վայրկյանին հնարավոր էր՝ խփեին: Ամեն ինչ սպասելի էր իրանցից»:

Այս վախն ավելի էր սրվում, երբ տարածվում էին տեղեկություններ ադրբեջանական զորքերի մոտեցման մասին: Բադարա գյուղի բնակիչը պատմում էր.

«Եկել են, սկլադը պլոմբել են, որ իրենցն ա: Ասել են՝ մենք ենք արդեն ըստեղ»:

Մարդկանց հոգեբանական վիճակը ապաստարաններում

Ապաստարաններում մարդիկ գտնվել են ծանր հոգեբանական վիճակում՝ լինելով մշտական վախի և անհանգստության մեջ: Երեխաները հատկապես դժվար են տարել այդ իրավիճակը:
Ասկերանի շրջանի Այգեստան գյուղի բնակիչը նշել է.

«Փոքրս շատ ա լաց եղել վախից, բերել ա, կուկլա ա տվել, որ սուս անի»:

Մարտունի քաղաքի մանկապարտեզում երեխաների տարհանումը տրավմատիկ է եղել.

«Ծնողների հետ չենք իջել, դաստիարակները դայակների հետ իջել են, սենց վերմակները, բան իջեցրել ենք, շտապ ծածկել:
Մենք էլ փորձում էինք հանգստացնել, որովհետև բոլոր-բոլոր երեխաները, 100 երեխա սկսեցին լացել ու դողում են, որովհետև քնից արթնացրել ենք. բոբիկ, բան, կիսամերկ իջեցրել ենք նկուղ»:

Մարտակերտի մի բնակիչ նշել է.

«Մեզ եկան, ասացին՝ Մարտակերտ են մտել ադրբեջանցիները: Ըտեղ շնչակտուր եղա, ասացի՝ Աստված չանի, գալու են մտնեն պադվալ, էսքանիս կոտորեն:

Ասացի, ոչ այդքան զորք ունենք, ոչինչ չունենք, իրենք ամեն ինչ ունեն, պարտված ազգ ենք: Մտածեցի՝ կգան մեզ կմորթոտեն»:

Մարտունու Կոլխոզաշեն գյուղի բնակիչը նշել է.

«Կանայք լացում էին, մենք ասում էինք՝ մի լացեք, մեկը մեկին սիրտ տալով, ասում էինք՝ վռոձի լավ պետք ա լինի»:

5. Քաղաքացիական բնակչության տարհանումը 2023 թ. սեպտեմբերին

Ապաստարաններից դուրս գալու հանգամանքները

Խաղաղ բնակչության՝ ապաստարաններից դուրս գալու գործընթացը եղել է բարդ և խնդրահարույց՝ պայմանավորված ռազմական իրավիճակի փոփոխություններով, անվտանգության ու ապահովության զգացման բացակայությամբ: Այս գործընթացը տարբեր բնակավայրերում ընթացել է տարբեր ձևերով՝ ունենալով ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ բնութագրեր:

Զինադադարի ժամանակ բնակչության զգալի մասը դուրս է եկել ապաստարաններից՝ ժամանակավորապես վերադառնալով իրենց տները: Սակայն կրակի վերսկսման դեպքում մարդիկ նորից ստիպված են եղել ապաստարան փնտրել: Կանայք և երեխաներն ավելի երկար են մնացել ապաստարաններում, մինչդեռ տղամարդիկ հաճախ դուրս են եկել՝ շարունակելու տնային գործերը կամ պաշտպանական աշխատանքները:

Որոշ դեպքերում ապաստարանները դարձել են ժամանակավոր բնակության վայրեր, քանի որ տներում բացակայել են հիմնական կենսամիջոցները:

«Տուն գնայի, արդեն գազ չկար, լույս չկար: Գառաժներում վառարան կա դրած, սաղ մեր տան ուտելիքը բերել ենք գառաժ: Ուտում էինք ընդեղ, խմոր էինք հունցում, եթե ալյուր կա»:

Ապաստարանները լքելուց հետո էլ բնակիչները ստիպված են եղել անընդհատ տեղաշարժվել՝ փորձելով գտնել անվտանգ վայր.

«Ապաստարանից դուրս գալուց հետո գնացել են օդանավակայան, նույն օրը տուն են վերադարձել, մի քանի օր տանն են մնացել, իսկ 25-ին ուղևորվել են Հայաստան»:

Տարհանման կազմակերպումը

Տարհանումը հիմնականում նախաձեռնվել է տեղական իշխանության ներկայացուցիչների՝ համայնքների ղեկավարների կողմից: Չնայած նախաձեռնությանը, ոչ բոլոր դեպքերում է բնակիչներին տրամադրվել ուղղակի ու գործուն աջակցություն:

«Զանգահարել են, ասել են՝ ով ինչով կարողանա, թող դուրս գա»:

«Գյուղապետը ասաց, որ սաղ պետք է դուրս գան, որ հետո բանակը դուրս են հանում: Ես էդտեղ լացեցի, իմացա, որ բանակը ցրում են, պարզ է, որ էլ ետ չենք գա»:

Որոշ բնակավայրերում հապճեպ ու խուճապային տարհանումը պայմանավորված է եղել ադրբեջանական զորքերի մոտենալու հանգամանքով: Բնակիչները ստիպված են եղել հապշտապ լքել իրենց բնակավայրերը.

«Մեր գյուղը լիճ կար, լճի էն մի ափին ենք եղել: Արդեն Գետավանը թուրքերը վերցրել են, հասել են Դոմբոն, մի ճանապարհ էր մնացել, որ պլատինով գանք: Հաթերքի տակ էին հասել, արդեն ձև չկար»:

Տարածված լուրերը, որ ադրբեջանցիները կարող են փակել տարհանման ուղիները, խթանել են մարդկանց՝ հապշտապ գործելու.

«Ասում էին (թե որքանով ա ճիշտ, չգիտեմ), որ ադրբեջանցիներին մի թիվ ա պետք՝ 100, 200 թե 1000. էդ թիվը դե գրանցում են: Համ միկրաֆոն էր դրած, համ էլ կամերա կար, գրանցում էին: Եթե էդ թիվը լրացավ իրանց մոտ, ճանապարհը փակելու են: Դրա համար ժողովուրդը միանգամից դուրս եկան»:

Տրանսպորտային տեղաշարժի խոչընդոտները

Տարհանման հիմնական դժվարություններից է եղել տրանսպորտի պակասը կամ դրա ոչ համարավետ պայմանները.

«Ուրալ էր, շատ բարձր, աստիճանը իջեցրին, որ կարողանանք բարձրանալ: Չեմ հիշում ինչպես խցկվեցինք, տեղ չկար, կոպիտ ասած՝ կառտոշկի նման, իրար գլխի թափված»:

Շատ դեպքերում տարհանման համար բնակիչներն օգտագործել են հարևանների կամ հարազատների անձնական մեքենաները.

«Մի հատ հարևան ունենք մարշրուտկայովը: Մեզ, հարևաններին, բոլորին նիա տվել մաշինը, բերել հասցրել աերոպորտ»:

Մարտունու շրջանի Սոս գյուղի մի բնակիչ իր 8 նստատեղանոց մեքենայով տեղափոխել է 20 անձի:

Որոշ գյուղերում մեքենաների կամ վառելիքի բացակայությունը հարկադրել է մարդկանց ոտքով երկար ճանապարհ անցնել: Քայլելով են իրենց բնակավայրերը լքել Մարտունու շրջանի Հերհեր, Ասկերանի շրջանի Ներքին Սզնեք, Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղի բնակիչները:

«94 տարեկան կինը մեր հետ, պատկերացնում եք՝ էն մացառուտներով, անտառով, քոլերով, ինչ իմանամ, փայտով, հենափայտերով հասանք էնտեղ. արդեն իրիկնադեմ էր»:

Վառելիքի պակասն էական խոչընդոտ է եղել տարհանման համար.

«Իրարից վերցնելով (բենզին – խմբ.), գազով, բան, մեծ դժվարությամբ հասել ենք Ստեփանակերտ: Ամեն ավտոյում 8-9 հոգի: Էդպես իրար վրա պառկած»:

«Մարտակերտի շրջանի Զագլիկ գյուղի գյուղապետը ինքն է բաժանել բենզինը՝ 5-6 լիտր յուրաքանչյուրին տալով»:

Ճանապարհների խցանումները զգալիորեն երկարաձգել են տարհանման տևողությունը: Նևգի գյուղի որոշ բնակիչներ Ստեփանակերտ են հասել 6 ժամում՝ սովորական 25 րոպեի փոխարեն:

«Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղից մինչև Ստեփանակերտ (հեռավորությունը մոտ 35 կմ է – խմբ.) հասնելը տևել է մի ամբողջ գիշեր՝ 9 ժամ՝ խցանումների պատճառով»:

Ադրբեջանական զորքերի կողմից որոշ ճանապարհների վրա հաստատված հսկողության պատճառով բնակիչները ստիպված են եղել օգտագործել շրջանցիկ ուղիներ:

Հոգեբանական և հուզական դժվարություններ

Տարհանման գործընթացն ուղեկցվել է ծանր հուզական վիճակներով, անորոշությամբ և վախով: Բնակիչները հաճախ չեն իմացել, թե ուր են գնում և ինչ է սպասվում.

«Օդանավակայան (Ստեփանակերտի – խմբ.) գնալիս մենք չէինք հասկանում՝ ինչու ենք գնում: Արդյոք պե՞տք էր մնալ քաղաքում, արդյոք պե՞տք էր գնալ, չգիտեինք»:

Տարհանման ընթացքում շատերն ականատես են եղել ռմբակոծությունների և հրետակոծությունների, ինչը սարսափեցնող ազդեցություն է գործել.

« ...իրենք ուղիղ էդ հրետանուն են կրակում: Մենք բոլորս հասկանում ենք, որ ֆայո՛, ինչքան մարդ կա էդ տեխնիկայի կողքին, իրենք բոլորը այլևս ողջ չեն»:

Ասկերանի շրջանի Կարմիր գյուղի բնակիչը նշել է.

«Ամուսինս ա գլխումս պտտվում, որ ո՞նց, հնարավոր ա ինքը ողջ չլինի՞: Էդ տպավորությունների տակ, որ իրեն թողնում եմ, գնում եմ: Ես իրեն միշտ ասել եմ, որ ինչ էլ լինի, ես քեզ տանը միշտ կսպասեմ»:

Անվտանգության խնդիրները տարհանման ընթացքում

Տարհանման գործընթացում անվտանգության ապահովման հարցը եղել է ամենաբարդն ու անլուծելին: Տարհանման ճանապարհներին ադրբեջանական զորքերի ներկայությունը ստեղծում էր ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական սպառնալիքներ:

«Ավտոմատները ձեռքերին, երեխաները վախում են: Դե ես էլ եմ վախում: Կարող ա դուրս գաս, քեզ սպանեն»:

Եղել են նաև տարհանվող խաղաղ բնակչության նկատմամբ ուղղակի հարձակումներ.

«Կրակել են մեր ավտոբուսների վրա, ժողովրդի վրա: Խաչմերուկից որ անցնում ես, տեսնում են, կրակել են»:

«Մոտ երեք մեքենաներ քաղաքացիական եկան, շարժվեցին էդ խաչմերուկը և ենթարկվեցին գնդակոծության»:

Սպիտակաշեն գյուղից եկողներին երեք անգամ կանգնեցրել են.

«Այլ տոնով են խոսել և զենք են պահել, փորձել են կրակել կամ լիցքավորել»:

Հարցվողը նշում է, որ վերոնշյալ իրավիճակում իրենք մեքենայի պատուհանն իջեցրել են, և ամեն ինչ հանդարտվել է: Նույն հարցվողն ավելացրել է, որ իր հայրիկին հարցրել են, թե ամենալավ հայը որ հայն է, իր հայրը ասել է, որ չգիտի, ինչին պատասխանել են, որ *«մեռած վիճակում հայն է»:*

Նմանատիպ մեկ այլ իրավիճակ է հետևյալը.

«Ամուսնուս հորքուրի տղայի բագաժնիկը չէր բացվում, ասել են՝ բացի, ասել ա՝ չեմ կարող, զենքը պահել են վրան: Երեխաները միջից գոռացել են, նոր ռուսները մոտիկացել են»:

Մարտակերտ քաղաքի մի բնակիչ պատմել է.

«Իմ եղբայրը, որ մեքենան քշեց Դրմբոնից մի քիչ վերև, թուրքերն արդեն հարձակվում էին, ուզում էին ավտոյին կրակեին: Ո՛չ խաղաղապահ կար, որ անցկացներ, ո՛չ էլ... Եղբայրս ասաց՝ վա՛յ, ոնց որ թուրքեր են: Ի՞նչ անեմ, ավտոս կանգնեցնե՞մ: Ասացի՝ չէ, քշի, ինչ կինի՝ կլինի»:

Վտանգավոր իրավիճակ է առաջացել նաև Մարտակերտի Զագլիկ գյուղից դեպի Ստեփանակերտ ճանապարհին՝ Կիչանից Բալուջա գնալու հատվածում: Խիստ վտանգի մասին է վկայում այն, որ մի եղբայրը մյուսին ասել է.

«Սպասի՛, ես անցնեմ, որ սաղ պրծնի, կգաս, երկուսս իրար հետևից չդառնանք: Ես իմ երեխեքիս վերցրել եմ, անցել, նրանից հետո որ արդեն դե խփեին, կտեսնեին (տարհանվող խմբի մյուս անդամները, որ իմանան՝ անվտանգ է, թե ոչ – խմբ.)»:

Տարհանման ուղիները ենթարկվել են կանոնավոր հրետակոծության.

«Ամբողջ ժամանակ ճանապարհը հրթիռակոծվում և հրետակոծվում էր»:

«Սնարյադը գլխովդ անցնում ա: Սաղ ջոգում էինք՝ անցավ, ուր գնաց: Սաղ վախեցած էին»:

Մարտակերտի Ճանկաթաղ գյուղից Ֆորդ մակնիշի մեքենայով տարհանվող 20-30 անձինք պատահականությամբ են խույս տվել հրետակոծությունից.

«Մի մեծ արկ եկավ, մեքենայի ապակու առաջով անցավ»:

Հրետակոծությունների ու հրաձգությունների նշանառու թիրախում չհայտնվելու համար Կարմիր շուկա գյուղից տարհանվողները տեղաշարժվել են զիգզագաձև:

Հատկապես խոցելի ու անպաշտպան են եղել ոտքով, առանց տրանսպորտի տարհանվող անձինք.

«Մարդը ոտով գնացել ա, խփել են»:

Դրմբոնի շրջանում առավել ակնառու են եղել անվտանգությանն առնչվող միջադեպերը.

«Դրմբոնում ռուսները ճանապարհին էին, էն մի կողմում էլ թուրքեր էին: Ռուսները հետ տվեցին, ասեցին՝ շու՛տ անցեք, ճանապարհը փակում են»:

Նույնիսկ սեփական բնակավայրերից տարհանումից հետո էլ անվտանգության խնդիրները չեն չեզոքացել: Օրինակ, մայրաքաղաք Ստեփանակերտ տարհանված հարցվողներից մեկը նշել է.

«Թուրքերի պոստերը Շուշիի մոտ, հենա կրակը, սենց վառած: Ընդեղից ինադու պագրիշկեքը գլորում էին դեպի Ստեփանակերտ:
Կալոննով գալիս էին, քֆրտելով, ձեռքը սենց անելով, կողքերովս անցնում, մեկը ասում ա՝ որ մնացիք, ձեզ մորթելո՛ւ ենք, դո՛ւրս եկեք»:

«Մի քանի մետր հեռավորության վրա թուրքեր են եղել, նրանք եկել են, գնացել»:

Տարհանման ընթացքում բժշկական օգնության հասանելիությունը եղել է չափազանց սահմանափակ: Խաղաղ բնակչությունը հիմնականում փոխօգնությանն ու ինքնաբուժմանն էր դիմում:
Ծանր վիրավորումների դեպքում ևս օգնությունը եղել է նվազագույն.

«Թեթև կապել են, որովհետև էն վիճակը չէր, որ կարողանային ինչ-որ տեղից բժիշկ կանչեին»:

Տարհանումից հետո գյուղերում մնացել են հիմնականում տարեցները, միայնակ անձինք և առողջական խնդիրներ ունեցողները: Նրանց շրջանում եղել են նաև գերեվարման դեպքեր.

«Կարմիր գյուղից մի 90 տարեկան կին գերեվարվել է ադրբեջանցիների կողմից, քանի որ չի կարողացել ոտքով քայլել»:

Որոշ ժամանակ անց գերեվարված կինն ազատ է արձակվել, սակայն նա մինչև հիմա վախեցած է, և «…ամեն պահի, երբ դուռը բացում են, ասում ա՝ թուրքե՞րն են մտել, թուրքե՞րն են մտել»:

Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում մի անձ չի ցանկացել լքել բնակավայրը, սպասել է իր հարազատին: Հետո, երբ արդեն արդրբեջանցիները գրավել էին այդ բնակավայրը, վերջինիս մահացած են հայտնաբերել: Թե ինչպես է վրա հասել նրա մահը, մանրամասներ հայտնի չեն:

Ադրբեջանական զինված ուժերի իրականացրած ստուգումներն ու քաղաքացիական անձանց նվաստացումները

Ադրբեջանական զինված ուժերը կանգնեցրել և մանրամասն ստուգումներ են կատարել տարհանվողների մեքենաներում՝ խուզարկելով դրանք:

Ադրբեջանցիները երբեմն անձնական իրեր են բռնագրավել: Ստորև բերված դեպքում տարհանվող անձից խաչ են վերցրել, ինչը կարող է դիտարկվել նաև որպես կրոնական հիմքով հետապնդում.

«Ոսկե խաչը հանել են: Մի հատ տղա կա, Մարտունիից Ստեփանակերտ ա գալիս, չհասած Ստեփանակերտ՝ կախած էր, քաշին, հանեցին»:

Ադրբեջանական զինված ուժերը հոգեբանական ճնշման մեթոդներ են կիրառել, օրինակ, խաղաղ բնակչությանը ստիպելով արտասանել իրենց բնակավայրերի ադրբեջանական տեղանունները.

«Երբ նրանք ասում էին Մարտունի, նրանք ասում էին՝ Խոջավենդ: Ստիպում էին, որ արցախահայերը նույնպես ասեն այդ անվանումը»:

«Ասում էին՝ գնացեք, դուք վատ մարդիկ եք, մի քանի զզվելի բաներ ասեցին: Անընդհատ ուզում էին ժողովրդին պախարակեին, ծաղրի ենթարկեին»:

Մարտակերտի Առաջաձոր գյուղից տարհանվող մի մարդ նշել է.

«Ձեռով, բանով էին անում, քֆրտում»:

Այլ մեքենայից ադրբեջանցիները վերցրել են զինվորական քնապարկ, որից հետո սկսել են վարորդին խփել: Իսկ վերջում վերջինիս հրել-գցել են մեքենայի մեջ՝ ասելով. *«Օռա՛շ արմանի»:*

Ըստ հարցվողների, ակնհայտ էր, որ ադրբեջանցիների նպատակն էր, որ արցախցիները հնարավորինս արագ լքեն իրենց բնակավայրերն ու հետագայում նաև՝ Արցախը: Դրա համար նրանք նույնիսկ «աջակցել են» տարհանվողներին:

Մարտունու շրջանի Կոլխոզաշեն գյուղի բնակիչը նշել է.

«Ընենց ա եղել, որ հակառակորդը օգնել ա, դաժե ակումուլյատոր չի եղել, մեքենան բրդել ա կամ քաշել են, խոդ են տվել կամ ջուր չի եղել, ջուր են տվել: Ասել են՝ մենակ դո՛ւրս եկեք, գնացե՛ք»:

Երեխաների խոցելիությունն ու նրանց սպառնացող վտանգները տարհանման ընթացքում

Տարհանման ժամանակ երեխաները հատկապես խոցելի են եղել, ինչը դրսևորվել է հուզական ծանր վիճակների ու ապրումների արտահայտմամբ: Երեխաները հատկապես վախեցել են ռազմական գործողությունների ձայներից:

«Սնարյադը խփում էր, երեխեքը լացում էին»:

«Ամեն լույս տեսնում էին, ասում՝ երևի թուրքն ա»:

Արձանագրվել են դեպքեր, երբ երեխաներն ուղղակի հարձակումների են ենթարկվել և վիրավորվել.

«Իրա թոռնիկը վազելով գնում ա Կարմիր խաչ ա թե ինչ, որ բժիշկներին ասի, գան, պապիկին նայեն, էրեխուն են կրակում: Էդ փոքր էրէխուն կրակում են, ոտից վիրավորվում ա»:

Ռուսաստանցի խաղաղապահների դերը

Ռուսաստանցի խաղաղապահները որոշ դեպքերում ապահովել են համեմատաբար անվտանգ տարհանում՝ ուղեկցելով տարհանվողներին առավել վտանգավոր հատվածներում: Երբեմն նրանք կանխել են ադրբեջանցիների հնարավոր հարձակումները:

«Երբ ռուս խաղաղապահներն են տեղափոխել բնակիչներին, դա անվտանգ է եղել»:

«Ռուսները մոտիկացել են ու կանխել են հետագա բռնությունները»:

Տարհանումից հետո մարդկանց տեղակայման պայմանները Ստեփանակերտի օդանավակայանում

Ստեփանակերտի օդանավակայանը դարձել էր տարհանված բնակչության հիմնական ապաստարանը սեպտեմբերի 19-26 ժամանակահատվածում: Այստեղ տեղավորվել էին տասնյակ հազարավոր մարդիկ, որոնք ապրում էին ծայրահեղ դժվար պայմաններում:

Ռուսական խաղաղապահների կողմից տեղադրված վրաններից յուրաքանչյուրում տեղավորվել էր 100-120 մարդ: Վրանների կողքին դրված էին գեներատորներ, որոնք օրական 3 ժամ հոսանք էին ապահովում: Էլեկտրաէներգիան օգտագործվում էր հեռախոսները լիցքավորելու և սնունդ պատրաստելու համար:

Վրանները ծածկ էին ապահովում, սակայն կացության ոչ բավարար պայմաններ.

«Վրանի հատակին լինոլիում էր, բայց քարերը զգացվում էր ոտատակերիս»:

«Երկհարկանի մետաղական մահճակալներ էին, բայց ոչ բոլորին էր հասնում»:

Մարդիկ, որոնք չէին տեղավորվել վրաններում, ստիպված էին հաստատվել օդանավակայանի թռիչքուղու մոտ՝ գիշերելով բաց երկնքի տակ և առանց որևէ պատշաճ պայմանի.

«Գետնին են նստել, ծածկոցները դրած քնում էին խոտերի մեջ»:

«Դաժե անձրև էր գալիս մեզ վրա»:

«Բաց տարածք էր, ցուրտ, քամի, խառը վիճակ, սոված ժողովուրդը, ուտելիք չկար»:

Օդանավակայանում սննդի բաշխումը պատշաճ կազմակերպված չէր և անկանոն էր.

«Ռուսը նեղ ասեց՝ ճաշարան ունենք, մեկը ձեզ: Մանկապարտեզի երեխաների նման շարք էին կանգնեցնում»:

«Երկրորդ օրն ա, մի կուտուր հաց եմ գտել էսքան, երկու մասի բաժանեցի»:

«Մեկը մյուսից ջուր էինք վերցնում: Լրիվ գնչուական կյանք կար»:

«Աղբյուր կար, բայց հերթերը հսկայական էին»:

Տարհանումից հետո մարդկանց տեղակայման պայմանները Ստեփանակերտի տարբեր ապաստարաններում

Բազմաթիվ անձինք, տարհանվելով մայրաքաղաք Ստեփանակերտ, տեղակայվել էին հանրակրթական դպրոցների շենքերում, որտեղ ապահովված չէին բնակության տարրական պայմաններ.

«Աթոռներ միացնելով՝ շատ տեղերում պատրաստում էին մահճակալ»:

«Հացը 4 հոգու մեջ կիսել ենք, տուշոնկեն 4 հոգու են տվել»:

«70 հոգի՝ 2 գյուղից, պոլերին քնած»:

Բնակչության մի մասն ապաստանել էր Արցախի պետական համալսարանի շենքում.

«Ցուրտ էր, երեխեքը կեսը աթոռներին էին քնում, կեսը՝ պոլերին»:

«Սաղ ժողովուրդը լացում էին, ասում էին՝ սնարյադը ըստեղ կգա»:

Եղել են նաև տարբեր խանութներում (օրինակ՝ կահույքի) ապաստանելու դեպքեր: Օրինակ, խանութներից մեկում 150-200 քմ մակերեսի վրա ապաստան էր գտել մոտ 300-400 մարդ:

Նկուղներում ապաստանած մարդկանց ևս տեղը չէր բավականացնում.

«20 հոգի՝ 15 քմ-ում, 30 հոգի՝ 25 քմ-ում»:

«Մարդիկ հերթով էին նստում, որ մի քիչ հանգստանան»:

«Ողջ գիշերը նստած էինք, քնելու տեղ չկար»:

«Ահավոր ցուրտ էր, խոնավություն»:

Շատերը գիշերել են մոտակա անտառներում և նույնիսկ մեքենաների մեջ.

«Մարտունու շրջանի բնակիչները գիշերել են անտառում»:

«Փոքր տուն էր, ավտոյի մեջ էի մնում»:

Հարցվողները հաճախ են նշել ջրի ցածր որակը.

«Ջուրը չէր խմվում՝ տիղմահոտ, ջրի հետ հող էր գալիս»:

6. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքները կյանքի և առողջության համար

Քաղաքացիական զոհեր՝ մարտական գործողությունների հետևանքով

2023 թ. սեպտեմբերի ռազմական գործողությունների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ քաղաքացիական զոհեր, հիմնականում՝ ռմբակոծությունների հետևանքով: Ստորև ներկայացված են դեպքերի նկարագրությունները՝ հարցազրույցներից ստացված տեղեկատվության հիման վրա, ներառյալ՝ զոհերի մասին հասանելի մանրամասներն ու ականատեսների վկայությունները:

Ասկերանի բնակիչ մի կին պատմել է, որ հարձակման ընթացքում իր հարևանի հետ գնացել է հաց թխելու՝ ընտանիքի համար և ականատես է եղել այլ անձի զոհվելուն՝ ռմբակոծության հետևանքով:

«Հետ գնացինք մեր տուն՝ ես ու հարևանս, հաց թխեցինք, մեր խանութպանի տղան զոհվեց»:

Բաղարա գյուղում Գայանե անունով մի կին զոհվել է, երբ ապաստարանից դուրս է եկել հաց ու այլ մթերք բերելու նպատակով: Արկի հարվածից գլուխը քարին է խփել, կոմայի մեջ է ընկել ու մահացել. նրան չեն հասցրել տեղափոխել Ստեփանակերտ:

«Տենց էդ կինը 4 օր մնացել ա տանը… սկոռի ա եկել, որ հասցնեն Ստեփանակերտ, ճանապարհին մահացել ա… »:

Ադրբեջանական ուժերի վերահսկողության հաստատումից հետո Խաչմաչ գյուղի խաչմերուկում Սարուշեն գյուղի երեք քաղաքացիական մեքենաներ են փորձել անցնել: Նրանց գնդակոծել են, ինչի հետևանքով եղել են զոհեր և վիրավորներ:
Զոհվածների մեջ էր 73 տարեկան Շաբո Գրիգորյանը, ում դին հետագայում վերադարձվել է Կարմիր Խաչի միջոցով:

«Երեք քաղաքացիական մեքենա եկան, շարժվեցին, ենթարկվեցին գնդակոծության… իմ ընկերոջս հայրն էր… Շաբո Գրիգորյան… Կարմիր Խաչով բերել են Ստեփանակերտ»:

Նշված դեպքի ժամանակ զոհվել է նաև Կարեն Գրիգորյանը՝ հարցվողի ընկերը:

Գանձասար գյուղում ռմբակոծվել է մի տուն: Ընտանիքի անդամներից մեկը՝ Մարսել անունով, մահացել է տեղում: Դին հանել չեն կարողացել, և թաղել են հենց տան բակում:

«Էդ մարդուն չեն էլ կարացել դիակը հանեն. իրանց հայաթում են թաղել»:

Մարտակերտում ապաստան փնտրելիս զոհվել են Ռիտան ու Կառլենը: Նրանց դիերը չեն հուղարկավորվել՝ ռմբակոծության ինտենսիվության պատճառով:

Մարտունու մեկ այլ բնակիչ պատմել է, որ իրենց կեցավայրի մոտ մի կին է զոհվել ռմբակոծության հետևանքով:

Մարտունիում մի տղամարդ զոհվել է՝ հենց ռմբակոծության մեկնարկի պահին: Ռումբն ընկել է նրանից մոտ 2-3 մետր հեռավորությամբ:

«Հենց կռիվը սկսել ա ժամը 1-ին… ռումբը ընկնում ա, էդ մարդը էդտեղ զոհվում ա»:

Մարտունու ամենաակնառու դեպքերից մեկը տաքսիստ, 72 տարեկան Առնոլդ Չայլանի մահն էր՝ Մարտունու կենտրոնում գտնվող Սայաթ-Նովա համալիրի դիմաց: Նա դուրս էր եկել ապաստարանից՝ հաց տանելու, երբ արկն ընկել է հենց իր կողքին:

Դեպքը տեղի է ունեցել սեպտեմբերի 20-ին: Նրան հուղարկավորել են սեպտեմբերի 22-ին կամ 23-ին՝ Մարտունիում:

«Ճանապարհին՝ էն մայթին կանգնած, սնարյադը ընկել ա, մահացել ա, վիզը կտրվել ա… Իրա աղջիկն էլ ՄԿՀ-ում (Արտակարգ իրավիճակների նախարարություն – խմբ.) էր ծառայում»:

Ստեփանակերտի բնակչուհի Ռիտա Բալայանը զոհվել է, երբ փորձել է փախչել ապաստարան: Արկի պայթյունից կորցրել է հավասարակշռությունը, ընկել և մահացել: Հարազատները նրա դին հայտնաբերել են դիահերձարանում:

Եղել են դեպքեր, երբ մահը կամ վիրավորումը տեղի է ունեցել ոչ թե անմիջական ռմբակոծության, հրաձգության կամ ադրբեջանական ուժերի հետ ուղղակի շփման արդյունքում, այլ անուղղակի գործոնների ազդեցությամբ: Այդ դեպքերը պայմանավորված են եղել առողջական վիճակի սրմամբ, վախի ազդեցությամբ կամ փախուստի ընթացքում ստացած վնասվածքներով: Առավել հաճախ տուժել են երեխաները:

Ըստ վկայությունների, Մարտունի քաղաքում մեկ երեխա մահացել է սրտի կանգից՝ վախի պատճառով:

«Առաջին դպրոցից 5-րդ դասարանի երեխայի սիրտը կանգնել ա վախից»:

Նմանատիպ դեպք արձանագրվել է նաև Ստեփանակերտի 9-րդ դպրոցում: Մի քանի հարցվող հիշատակել են այս դեպքը՝ նշելով, որ մի երեխա մահացել է վախից, դպրոցում:

Մեկ այլ դեպքում ուսուցիչները երեխաներին տուն են ուղարկել, բայց ճանապարհին մի երեխա՝ Գոռ անունով, վախից մահացել է:

«Ուսուցիչները բաց են թողել երեխաներին, որ տուն գնան, ճանապարհին երեխան վախից մահացել է»:

Կանխամտածված սպանություններ՝ ադրբեջանական ուժերի կողմից

Զեկույցի այս հատվածում ներկայացված են ադրբեջանական ուժերի կողմից քաղաքացիական անձանց սպանությունները, որոնք տեղի են ունեցել ոչ թե ռմբակոծությունների, այլ ուղղակի և կանխամտածված գործողությունների հետևանքով:

Հարցվողներից մեկը հիշում է, որ օդանավակայանում իմացել է գլխատված անձի մասին, ով Շուշիի Սղնախ գյուղից տեղափոխվել էր Ասկերան և բնակվում էր եկեղեցու մոտ: Գլխատված անձի անունը Վրեժ էր, իսկ մոր ազգանունը՝ Ստեփանյան:

«Օդանավակայանում ասում են՝ էսինչի ծնողին ճանաչո՞ւմ ես: Ասում եմ՝ հա՛, իհարկե՛: Ասում ա՝ կտրել են գլուխը… էն տղան էլ հիվանդ էր, ասում ա՝ մոր ձեռքին ա մնացել, որ գլուխը կտրել են»:

Արտյուշա Միքայելյանը՝ Ներքին Սզնեք գյուղից, գտնվել է մահացած՝ մարմնական վնասվածքներով: Տեղափոխվել է Խաչմաչ և Կարմիր գյուղի մերձակայքից:

Դատաբժշկական զննությամբ պարզվել է, որ մահվան պատճառը եղել է կտրող-ծակող գործիքի հարվածը: Չնայած նրան, որ որոշ տվյալներ վկայում են բնական մահվան հնարավորության մասին (*«սրտի արատ էլ ուներ, սիմուլյատոր էր դրված թե ինչ…»)* սակայն նշվում է նաև բութ և հրազենային վնասվածքների մասին:

«Պարզվում է, որ համագյուղացի մի տարեց մարդ ա՝ Արտյուշա Միքայելյան անունով… դատաբժշկական արդյունքում պարզվել է, որ կտրող-ծակող գործիքով խփել էին: Կրակած ա եղել նրա վրա և ինչ որ բութ հարվածներ»:

Հարցվողներից մեկը պատմել է, որ ադրբեջանցիները սպանել են մեկին, ով շարժվում էր Մարտակերտի ուղղությամբ, սակայն պարզ չէ՝ արդյոք նա եղել է զինվորական, թե քաղաքացիական անձ:

«Մարտակերտ գնացող մի մարդու սպանել են ադրբեջանցիները, բայց պարզ չի, թե նրա ձեռքին ավտոմատ եղել է, թե ոչ»:

Մարտունիում մնացած մի հովիվ՝ Մարտիկ կամ Մարտին անունով, սպանվել է ոչխարներին բերելու ժամանակ:

Մեկ այլ հարցվող նկարագրել է մի դեպք, որտեղ մի կին, չցանկանալով լքել իր տունը, մնացել է ադրբեջանցիների վերահսկողության ներքո գտնվող գյուղում: Հաջորդ օրը նրան գտել են բռնաբարված ու սպանված:

«Տեսել են, որ էդ կնիկը տկլոր, բռնաբարված, մորթված, շենքի կենտրոնում վեր քցած: Դա 100 տոկոսանոց դեպք ա»:

Ասկերանի մի բնակիչ պատմել է, որ Նախիջևանիկում միաժամանակ երկու երեխա են զոհվել կրակոցներից: Նրանց ծնողը՝ Զարինեն, ժամանակին պատրաստվել էր տեղափոխվել ապահով վայր, սակայն չի հասցրել: Նրանց ապաստանն, ըստ հարցվողի, Աղբուլաղի լքված տներից մեկն էր:

Մեկ այլ դեպքում նշվում է, որ ուսուցիչները չեն հասցրել երեխաներին իջեցնել նկուղ: Արկն ընկել է դպրոցի տարածքում, եղել են վիրավորներ ու զոհեր:

«Դպրոցը որ կրակել են, ուսուցիչները երեխաներին չեն տարել նկուղ… սնարյադը ընկել ա ըտեղ: Հա՛մ վիրավոր ա եղել, հա՛մ զոհ»:

Երկու դպրոցական երեխա մահացել են, երբ ռմբակոծության ժամանակ թաքնվել են ծառի տակ: Ռումբը պայթել է ուղիղ ծառի մոտ: Նրանց հուղարկավորել են հետագայում՝ Հայաստանում, Մասիս քաղաքում:

Նրանց մայրը՝ Ժենյան, ողջ է մնացել:

«Երեխաներին ասել են՝ գնացեք էն ծառի տակին սսկվե՛ք… ռումբը գա, ուղիղ ծառի տակին տրաքի… Մասիսում են հուղարկավորել… մոր անունը Ժենյա էր»:

Ստեփանակերտի վրա հարձակումներից մեկի ժամանակ երեխա է զոհվել, երբ ադրբեջանական ուժերը մոտեցել են Կրկժանի ներքևի դիրքերին:

Մի քանի հարցվող նշել են, որ Սարուշեն գյուղում մարդ են մորթել:

Հուղարկավորումների կազմակերպում

Ռազմական գործողությունների ավարտից հետո դիակների հուղարկավորումը կազմակերպվել է արտակարգ պայմաններում:

Մարտունու վարչակազմի ներկայացուցիչներից մեկը նկարագրում է կազմակերպչական աշխատանքների ընթացքը:

«Մենք գնում ենք, փեղերը դասավորում, օգնում, թողում ընդեղ, իրանք սկսում են սարքելը (նկատի ունի՝ դագաղ պատրաստելը – խմբ.)»:

Մարտունիում դիակները պահելու համար օգտագործվել է դպրոցի սպորտդահլիճը, իսկ դագաղների պատրաստման համար ներգրավվել են քաղաքի արհեստավորները:

«Դպրոցի թիվ մեկ սպորտդահլիճն էինք ընտրել… Պլոտնիկները, մեբելի աշխատողները սաղ հավաքել ենք… Մշակույթի պալատի վարագույրն ենք քանդել՝ դագաղների աբշիվկայի համար»:

Վիրավորված քաղաքացիական անձինք

2023 թ. սեպտեմբերին բազմաթիվ քաղաքացիներ վիրավորվել են ռմբակոծության հետևանքով:

Սոս գյուղը սպասարկող երթուղային տրանսպորտի վարորդը՝ Գեղամը, գնացել է ավտոտնակից ավտոմեքենան հանելու, որպեսզի մասնակցի տարհանմանը: Այդ պահին արկը

պայթել է ավտոտնակի մոտ, և նա վիրավորվել է: Նրան տեղափոխել են Ստեփանակերտ, որտեղ ստացել է բժշկական օգնություն:

Նույն գյուղում ռմբակոծությունից զոհվել է Գեղամի հայրը՝ պատմության ուսուցիչ Համլետ Գասպարյանը:

Մյուս դեպքը տեղի է ունեցել Մարտակերտում. վիրավորված քաղաքացիական անձին ուղղաթիռով տեղափոխել են Երևան:

Դահիրավ գյուղի բնակիչը պատմել է, որ իր եղբոր կինը վիրավորվել է ոտքից՝ արկի բեկորի հարվածից:

«Եղբորս կինն է, որ ասկոլկան մտել է ոտքը: Իրենք հիմա Երևանում են»:

Մարտակերտի ճանապարհին մեկ այլ կին վիրավորվել է մեքենայի վրա կրակոցից՝ ստանալով վնասվածք թևից: Նրան անմիջապես տեղափոխել են Մարտակերտ, ապա՝ Երևանի Էրեբունի հիվանդանոց:

Ներքին Հոռաթաղ գյուղում արկի պայթյունի հետևանքով վիրավորվել են տատիկն ու նրա 10-ամյա թոռնիկը:

Վերին Ճարտար գյուղում ռումբն ընկել է ավտոմեքենայի մոտ, ինչի հետևանքով վիրավորվել է Ռուզան Սահակյանը: Նրան սկզբում տեղափոխել են Ճարտարի հիվանդանոց, ապա՝ Մարտունիի և Ստեփանակերտի բուժհաստատություններ:

Մարտունիում արձանագրվել են զանգվածային վիրավորումներ: Բազմաթիվ անձինք վնասվել են արկերի բեկորներից: Նրանց թիվը, ըստ մի հարցվողի, հասել է մինչև 10-15-ի:

Հարցվողներից մեկը պատմել է իր սկեսուրի մասին, ով վիրավորվել է ռմբակոծության ընթացքում. վնասվել է նրա քիթը:

«Իմ սկեսուրն էլ էր էդ ընթացքում… գիտակցությունը կորցրեց: Քիթը համարյա թե ջարդվել էր: Փառք Աստծո, որ շուտ կպավ»:

Վիրահատության համար Ստեփանակերտ տեղափոխված մեկ այլ կին՝ Արևիկ Սահակյանը, վիրավորվել է արկի բեկորից: Վնասվել են նրա ներքին օրգանները: Վիրահատությունը շարունակվել է նաև Երևանում:

«Ասկոլկան մի հատ կնոջ կողքն էր ընկել: Նայել են, տեսել են՝ ասկոլկան մտել, բոլոր օրգանները վնասել է: Վիրահատեցին… Արևիկ Սահակյան»:

Առկա են նաև ընդհանուր բնույթի վկայություններ՝ վիրավորված անձանց մասին: Այս ընդհանրական հիշատակությունները հաճախ առանց հստակ տվյալների են, և դրանց հիման վրա դժվար է դեպքերի ու անձանց նույնականացում կատարել:

Օրինակ, մի քանի հարցվող նշել են, որ իրենց հարևան բնակավայրերում եղել են վիրավորներ՝ առանց նշելու նրանց անունները:

«Սահմանին մոտ գյուղերում եղել են վիրավորներ»:

«Հարևան գյուղում եղել ա, Հարավ գյուղում եղել ա, Նորշենում եղել ա»:

Կուսապատ գյուղում ռմբակոծման հետևանքով ավերվել է տուն, ինչի արդյունքում երկու կին վիրավորվել են: Նրանց բժշկական օգնություն չի ցուցաբերվել: Հաջորդ օրը նրանք լքել են գյուղը:

«Տուն էր ցրիվ եկել: Ասկոլկեքը շաղ տվեց… իրանց վրա ա դառել: Բժշկական օգնություն չեն տվել»:

Եղել են դեպքեր, երբ անձանց՝ վնասվածքներ ստանալը կամ առողջական վիճակի վատթարանալը ոչ թե մարտական գործողությունների ուղղակի ազդեցությամբ է պայմանավորված եղել, այլ՝ անուղղակի գործոններով:

Օրինակ, մի երեխայի մոտ արձանագրվել է ուշաթափություն: Մեկ այլ դեպքում մարտական գործողությունների առաջացրած խուճապը հանգեցրել է մի այլ երեխայի վնասվածքների.

«Էդ հրետակոծության արկը չի կպել իրան: Բայց նկուղ իջնելու ճանապարհին, քանի որ վազել ա, ընկել ա, ոտը ջարդել ա»:

Անուղղակի վկայություններ բռնարարքների մասին

Կան անուղղակի վկայություններ (այլ անձանց հայտնած տվյալների վերապատմություններ) այն մասին, որ ադրբեջանական ուժերը, ներխուժելով Արցախի տարբեր բնակավայրեր, երբեմն բռնություն են գործադրել քաղաքացիական բնակչության նկատմամբ:

Օրինակ, Ստեփանակերտի բնակիչներից մեկը պատմել է, որ իր ծանոթին ադրբեջանցիները սկզբում կապել են, ապա ազատ արձակել՝ հավաստիացնելով, որ վնաս չեն պատճառի:

«Ինքը հայտնեց, ասեց, որ ինձ սկզբից տարել են, կապել են թուրքերը: Հետո բաց են թողել, ասել են՝ մենք ձեզ ձեռք չենք տալու»:

Ճանկաթաղ գյուղում մի ընտանիք՝ մայր և որդի, մնացել են գյուղում: Տղայի անունը Վլադիմիր է, մոր անունը՝ Արաքսյա: Ադրբեջանցիները նրանց տարել են, ապա, հարցաքննելուց հետո, վերադարձրել ռուս խաղաղապահներին: Նրանց վերադարձի հարցում հավանաբար դեր է խաղացել այն հանգամանքը, որ ընտանիքն անցյալում (խորհրդային շրջանում) բնակվելիս է եղել Բաքվում:

«Չեն հասցրել դուրս գային, մնացել էին տունը: Թուրքերը եկել են, բռնել են, տարել: Տարել են՝ իբր մորթեն: Իրանք էլ Բաքու ապրած են: Սկսեց թուրքերեն խոսալ, ռուսերեն խոսալ, ասեց՝ մերս Բաքու ա եղել, մենք ընդեղ ենք ծնվել, տենց: Հետո էլ բերին իրանց տուն, ձեռք չտվին, հարցրին՝ զենք, բան, ծառայող ունեք տնից, ասեց՝ չէ: Բերին տվին ռուսներին»:

Բժշկական օգնության սահմանափակումները՝ մարտական գործողությունների ընթացքում

Սեպտեմբերյան հարձակման ընթացքում բժշկական օգնության տրամադրումը եղել է խիստ սահմանափակ, հատկապես քաղաքացիական բնակչության համար: Օգնությունն առաջնահերթորեն ցուցաբերվել է զինվորականներին:

Մարտունու շրջանի Ճարտար քաղաքի բնակիչներից մեկը նկարագրել է բժշկական համակարգի ծանրաբեռնվածությունը:

«Ես շուտ-շուտ վատացել եմ, բայց գյուղի թերապևտը՝ Հասմիկ Ագրամանյանը, միակն էր: Էնքան վիրավորներ էին բերում, ինքն էր նայում: Չէի կարող զանգել, կապ էլ չկար: Ինքս դեղեր էի խմում»:

Որոշ դեպքերում բնակիչները ինքնաբուժությամբ են զբաղվել:
Մարտունիի բնակիչ հարցվողներից մեկը պատմել է.

«Մեր նկուղում մարդիկ վատացան. բոլորս ոնց որ բժիշկներ լինեինք, մանկապարտեզի բուժքրոջ սենյակից պարագաներ էինք իջեցրել նկուղ»:

Ըստ մեկ այլ հարցվողի.

«Բժշկական օգնություն չես կարող էդ ընթացքում ստանաս, որովհետև հարյուրավոր վիրավորներ կային, հետո էլ բենզալցակայանի պայթյունը... դա վերջն էր»:

Նշվել է, որ ռուսական կողմը որոշ դեպքերում ցուցաբերել է բժշկական օգնություն, հիմնականում տեղափոխելով վիրավորներին:

7. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքով անհետ կորած և գերեվարված անձինք

2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքով անհետ կորած քաղաքացիական անձանց թիվը դժվար է հստակեցնել: Նրանց կորելու պատճառները տարբեր են՝ սկսած ռազմական գործողություններից ու խուճապային պայմաններում տեղի ունեցող տարհանումից՝ մինչև Ստեփանակերտի մերձակայքում բենզինի պահեստի պայթյունը: Հաճախ դժվար է նաև հստակ տարանջատում կատարել անհետ կորած քաղաքացիական անձանց և զինվորականների միջև, քանի որ վկայություններ տված անձինք շատ մանրամասների չէին տիրապետում նրանց սոցիալական կարգավիճակի ու զբաղմունքների վերաբերյալ:

Բենզինի պահեստի պայթյունի հետևանքով անհետ կորածներ

Արցախի տեղեկատվական շտաբը 2023 թ. սեպտեմբերի 25-ի առավոտյան հայտարարել էր, որ Արցախից ՀՀ տեղափոխվել ցանկացող բոլոր քաղաքացիներին տրվելու է անվճար վառելիք: Վառելիքի ստացման նպատակով հարյուրավոր քաղաքացիներ (գրեթե բոլորը՝ արական սեռի) նույն օրը հավաքվել էին Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհի հարակից Բերքաձորի բենզինի պահեստում:

Վառելիքի պահեստում տեղի ունեցավ խոշոր պայթյուն, որի պատճառները մինչ օրս անհայտ են: Ադրբեջանը դեպքի հետաքննության բավարար ջանքեր չի գործադրել, ինչպես նաև՝ գործողություններ չի ձեռնարկել պայթյունի հետևանքով անհետ կորած հայերին հայտնաբերելու նպատակով: Անկախ պատճառից, այս պայթյունի զոհերը պետք է համարվեն ռազմական գործողությունների զոհեր, քանի որ նրանց հարկադիր տեղահանությունն է հանգեցրել ողբերգության:

Այս պահի դրությամբ հաստատված է պայթյունի հետևանքով առնվազն 218 մարդու մահ: Հարյուրավոր մարդիկ (տարբեր գնահատականներով՝ շուրջ 300) վիրավորվել են, իսկ 23 անհետ կորած անձանց գտնվելու վայրը մինչ օրս անհայտ է[3]:

Ասկերանի շրջանի Այգեստան գյուղից հարցվողը նշել է, որ իր գյուղից մի երիտասարդ անհետացել է բենզինի պահեստի պայթյունից հետո.

«Գյուղից մի տղա կար, բայց բենզինի պայթյունից հետո մինչև հիմա չեն գտնում»:

Մյուս հարցվողը նշել է.

«Շրջապատում կար մի աղջիկ, ում ԴՆԹ-ն դեռ չեն գտել պայթյունի հետևանքով»:

Նույն հարցվողը նշել է նաև մեկ այլ անհետ կորած անձի անուն ազգանուն՝ Սամվել Սաֆարյան, ով հարցվողի մորաքրոջ թոռն է:

[3] Պայթյունի հետևանքների և իրավական գնահատականների մասին առավել մանրամասն՝ տե՛ս Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի պատրաստած ″On the twenty-three missing after the 2023 gas depot explosion″ զեկույցը, https://iclaw.am/publications/14/details

Ռազմական գործողությունների հետևանքով անհետ կորածներ

Անձանց անհետացման առավել մանրամասն նկարագրված դեպքը վերաբերում է Ասկերանի շրջանի Կարմիր գյուղից Լուսինե Խաչատրյանի ամուսնու և եղբոր անհետացմանը: Հարցվողի ամուսինը մարտական դիրք է մեկնել սեպտեմբերի 18-ին, իսկ նրան վերջին անգամ տեսել են 19-ին: Նրա հետ դիրքում է եղել նաև Լուսինե Խաչատրյանի եղբայրը:

«Իրենց պոստը գտնվում ա Սզնեք – Կարմիր գյուղ ճանապարհին, որ իջնում ա դեպի քաղաք: Իրանց դիրքում ինքը եղել ա վաշտի հրամանատար: Իրանք 9 հոգով են գնացել հերթափոխության, ինքն ա եղել, եղբայրս և իրանց հետ 7 հոգի»:

Ըստ հարցվողի՝ ամուսնու համածառայակիցներից մեկը պատմել է, որ վերջին անգամ ամուսինը խոսել է՝ ասելով.

«Ես էլ Մարատին (հարցվողի եղբորը – խմբ.) կվեկալեմ, դուրս կգամ»:

Նաև հաղորդվել է, որ ինչ-որ մեկը լսել է ադրբեջանցիների խոսքը.

«Զդավայծե՛ս, զդավայծե՛ս, ստրելյած բուձեմ (Հանձնվե՛ք, հանձնվե՛ք, այլապես կկրակենք – խմբ.)»:

Ըստ հարցվողի՝ ԱԱԾ նկարահանումներից պարզվել է, որ 2 անձի ադրբեջանցիները տարել են իրենց կողմից վերահսկող տարածք: Հնարավոր է՝ այդ երկու անհետ կորածները հենց հարցվողի ամուսինն ու եղբայրն են:

Հարցվողը նշել է նաև փրկարարական աշխատանքների սահմանափակության մասին.

«Սեպտեմբերի 23-ից 29-ը փրկարարներն աշխատել են, բայց մի ձոր կա, որը չեն ստուգել»:

Խաչմաչ և Կարմիր գյուղերի մերձակայքում անհետ կորածներ

1940 թ. ծնված Ռոբերտ Մուսայելյանը 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող քաղաքացի է, ով անհետ կորել է 6 հոգանոց մի խմբի կազմում: Նրանք փորձել են Խաչմաչ գյուղից ոտքով հասնել Կարմիր գյուղ: Հարցվողը՝ նրա որդին, պատմել է.

«Ինքը տեղաշարժվելու խնդիր ուներ, նստել ա բացատում ու ասել. շարժվեցե՛ք, ես չեմ կարողանում շարժվել»:

Ըստ նույն հարցվողի՝ փրկարարական աշխատանքներն անկատար են եղել.

«Էդ փրկարար որոնողական աշխատանքները ընդամենը մեկ այցելություն են եղել»:

Ներքին Սզնեքից անհետ կորածներ

Մեկ այլ անհետ կորած է Շուրա Մանասյանը, որը մնացել է ադրբեջանցիների վերահսկողության տակ հայտնված գյուղում: Նա չի կարողացել դուրս գալ ապաստանից:

Այլ անհետ կորած անձինք

Հարցվողներից մեկը պատմել է Ստեփանակերտում կորած Սաշիկ և Կոմիտաս Հակոբյանների մասին:

Մեկ այլ հարցվող պատմել է Գարիկ անունով երկրապահի մասին, ով անհետացել է Սզնեքում:

Նշվել է նաև Տիգրան Մանասյան անունով աշխարհազորայինի մասին, ով ևս անհետ կորել է ծառայության ժամանակ:

Մյուս զինծառայողը Կառլեն Հակոբյան է, ում վերջին անգամ ողջ են տեսել մարտական դիրքում, բայց նա այդպես էլ չի վերադարձել:

Մյուս անհետ կորածները հիշատակվել են՝ առանց հստակ նույնականացնող տվյալների: Նշվել են նրանց անունները. Գենո, Դավիթ (Նունեի որդին), Գավրուշա Էմիրյան, Արսեն Հայրապետյան:

Ենթադրություններ անձանց՝ գերության մեջ հայտնվելու վերաբերյալ

Ադրբեջանական ուժերի մուտքից հետո ենթադրյալ գերեվարման դեպքեր են արձանագրվել թե՛ զինվորական, և թե՛ քաղաքացիական անձանց շրջանում: Որոշ գերեվարվածներ հետագայում վերադարձվել են Կարմիր Խաչի միջոցով, իսկ մի քանիսը մինչ օրս համարվում են գերեվարված:

Խաչմաչ և Կարմիր գյուղերի ճանապարհին, ըստ ենթադրությունների և անուղղակի տվյալների, տարհանվող 6 հոգանոց խմբից առնվազն 3-ը գերեվարվել են: Հարցվողներից մեկը նշել է.

«Չհաջողվեց դուրս գալ էդ շրջափակումից... դեռևս անհայտ վայրում նրանք գերեվարվել են, և առ այսօր գտնվում են Բաքվի բանտերում: Կան հաստատված տվյալներ, որ Բաքվի բանտերում են, որովհետև Կարմիր Խաչի միջոցով կապ է հաստատվել հարազատների հետ»:

Հիշատակված 6 հոգանոց խմբից մեկ տարեց կին և հաշմանդամ երիտասարդ ևս գերեվարվել են, սակայն 7 օր անց Կարմիր Խաչի միջոցով վերադարձվել են:

«Քանի որ Ոսկանյան Ուրվարդը տարեց կին էր, 80-անց կին էր, մեծ դժվարությամբ էր հասել էդ Կարմիր գյուղի հատվածը: Ինքը չէր կարողացել շարունակել ճանապարհը: Ընդեղ ինչ-որ մի տարածքում, վայրում նստել ա դաշտում և, ըստ իրա պատմածի, ադրբեջանցիները, նկատելով

իրեն էնտեղ, այնտեղից գերեվարում են: Իսկ Մավրիկ Փաշայանը՝ երիտասարդը, շարունակել է շարժվել ու նրան նույնպես հայտնաբերել են: Երկուսին էլ նույն վայրում են պահել»:

Ռուսաստանի քաղաքացի Լևոն Թարխանյանը գերեվարվել է, երբ մարտական գործողությունների ավարտից հետո վերադարձել է գյուղ՝ թողած իրերը վերցնելու համար: Ըստ ամենայնի, նրան գերեվարել են՝ շփոթելով գեներալ Լևոն Մնացականյանի հետ:

«Տարհանման օրը դուրս է եկել գյուղից, հետո մյուս օրը նորից հետ է գնացել, մտել է գյուղ, արդեն ադրբեջանցիները գյուղում են եղել: Նորից հետ վերադառնալուց բռնել են, պասպորտը բացել, Լևոն են կարդացել, մտածել են՝ Լևոն Մնացականյանն է: Ասում է՝ նենց են տփել, տարել հասցրել են Բաքու, 33 օր նստել է մենակ: Գեներալը մտել, ասել է՝ էս բոմժն ո՞վ ա, տարե՛ք սրան, ռադ արեք: Ինքն էլ մտածել է՝ տանում են սպանեն: Էն էլ բերել են տվել Կարմիր Խաչին»:

Ներկայումս Լևոն Թարխանյանը բնակվում է Ռուսաստանում:

Ենթադրություն կա նաև մեկ այլ անձի՝ Աբել Միրզոյանի հնարավոր գերավերման մասին, ում դիակը մինչ օրս չի հայտնաբերվել:

8. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման ազդեցությունը բնակավայրերի, պետական և համայնքային գույքի և բնակչության կենսագործունեության վրա

Հարձակման ազդեցությունը բնակչության կենսագործունեության և բնակավայրերի վրա

2023 թ. սեպտեմբերի 19-ին մեկնարկած հարձակումը կտրուկ խաթարեց Արցախի բնակչության կյանքը, որն արդեն ամիսներ շարունակ շրջափակման պայմաններում էր գտնվում: Սկսվեց խուճապ, մարդկանց մեծ մասը տեղափոխվեց ապաստարաններ, բնականոն կյանքը դադարեց, իսկ հանրային ծառայությունները (այդ թվում՝ դպրոցներն ու պետական կառույցները), դադարեցրել էին գործունեությունը կամ զբաղվում էին ոչ իրենց հիմնական գործառույթներով:

Մարտունիում, օրինակ, քաղաքապետի մահից հետո համայնքային աշխատողները զբաղվել են ոչ միայն սոցիալական խնդիրներով, այլև դագաղների պատրաստման համար անհրաժեշտ նյութերի հայթայթմամբ:

Ստեղծված իրավիճակը խորը ազդեցություն է թողել մարդկանց անձնական կյանքի վրա: Գրեթե բոլորի անձնական ու մասնագիտական ծրագրերը խափանվել են:

«Հաշվի շունը ոչխարների մեջ ընկնի: Թուրք-հայ տեսարանը: Խուճապահար մարդիկ, լացող երեխեք, կանայք»:

«Հիմնականում հացատներն էին աշխատում, մնացած ուրիշ ոչ մի բան»:

«Աղջիկս ուզում էր մատնահարդարում կամ վարսահարդարում սովորեր, հետո բլոկադան սկսվեց, հետո կռիվը ու տենց կիսատ մնաց»:

Ջրամատակարարում

Սեպտեմբերի 19-ի հարձակման ժամանակ որոշ բնակավայրերում ջրի մատակարարումը ընդհատումներով է եղել, հատկապես այնտեղ, որտեղ ջրամատակարարումը կախված էր էլեկտրաէներգիայից, ջուրը մատակարարվել է միայն էլեկտրաէներգիայի առկայության դեպքում:

«Սեպտեմբերի 19-21-ին ջուր չի եղել Մարտունիում, մեր տարաներով հավաքած ջուրն ենք օգտագործել»:

Ջրամատակարարման խնդիր չի առաջացել այն բնակավայրերում, որտեղ ջրի աղբյուրները մոտ էին:

Էլեկտրաէներգիա

Սեպտեմբերի 19-ից սկսած՝ Արցախը մասամբ կամ ամբողջությամբ հոսանքազրկվել էր: Էլեկտրաէներգիա մատակարարվել է հատվածաբար: Ստեփանակերտում և Մարտունիում այն վերականգնվել է սեպտեմբերի 25-ից սկսած՝ օրական 3 ժամով:

«Ոչ մի բան չի եղել: Սաղ փեջի վրա ենք արել: Փայտ ենք քցել, արել ենք»:

«Մի քանի գեներատոր կար, ու որպեսզի հեռախոս-բան զարյադկա դնեինք, գնում էինք Կառավարության շենքը ու ինչ-որ ծանոթ էինք գտնում, որ էնտեղ ա աշխատում ու իրանց կաբինետում հենց հեռախոսները զարյադկի դնում»:

Նկուղներում ապաստան գտած մարդիկ օրերով մնում էին մթության մեջ, հատկապես գիշերները անցկացնելով լիակատար մթության մեջ:

Ինչպես հայտնի է, հարձակման մեկնարկից հետո բնակչության մեծ հոսք է եղել դեպի Իվանյանի օդանավակայան: Օդանավակայանի տարածքում պատսպարված մարդիկ էլեկտրաէներգիա են ունեցել հինգ ժամը մեկ պարբերականությամբ:

Ինտերնետ

Պատերազմի առաջին օրերին հարվածներ են հասցվել ինտերնետի կայաններին, ինչի հետևանքով կապը մեծ մասամբ խափանվել է: Տեղեկատվության պակասը խորացրել է մարդկանց անորոշությունն ու խուճապը: Որոշ դեպքերում՝ սահմանափակ կարգավորումներով հնարավոր է եղել օգտվել 2G ինտերնետից:

«Մեկինը աշխատեր, մեկինը չէ, սենց խառը»:

Հեռախոսային կապ

Բջջային կապն աշխատել է ընդհատումներով կամ միայն որոշակի վայրերում: Մարդիկ բարձրացել են բլուրներ կամ այլ բարձր տեղանքներ՝ կապ հաստատելու համար:

Մարտունիում բնակիչները միմյանց տեղեկատվություն են փոխանցել՝ ոտքով տեղից տեղ անցնելով: Կապի բացակայությունը հատկապես ծանր է եղել այն ընտանիքների համար, որոնց անդամները ծառայության մեջ էին:

«Սենց մեկը գնար, մեկը գար, իրար փոխանցեր, այ տենց»:

«Գնում էին շատ հեռու տեղեր, որ կապ բռնեին»:

«Երբ դու հասկանում ես, որ զանգերը գնում են, բայց մարդը չի պատասխանում, դու ավելի շատ ես սկսում... Չես մտածում, որ ինքը... Ավելի շատ երևի հենց մտածում ես, կներեք, մտածում ես, որ իր հետ ինչ-որ բան ա պատահել»:

Բնակավայրերին հասցված վնասներ

Ռազմական գործողությունների կարճ տևողության և ադրբեջանական ուժերի կողմից բնակավայրերի մեծ մասի շրջանցման հետևանքով մասնավոր գույքի մեծ վնասներ չեն եղել: Սակայն առանձին (հիմնականում սահմանամերձ) համայնքներում գրանցվել են վնասի դեպքեր:

Բնակիչները հաճախ նշել են պատուհանների փշրվելու, կենցաղային տեխնիկայի, ավտոմեքենաների կամ կենցաղային գույքի վնասվելու մասին: Բացի տներից, վնասվել են նաև գրասենյակային տարածքներ:

Թիրախ են դարձել նաև այն բնակավայրերը, որոնց մերձակայքում առկա են եղել ռազմական հենակետեր կամ եղել են զինվորականների կուտակումներ: Նման վայրերի հարևանությամբ գտնվող տներն ու կառույցները նույնպես տուժել են: Ռումբերի մի մասը չի հասել իր նպատակային թիրախին և ընկել է բնակելի հատվածներում՝ մեծացնելով վնասների ծավալը:

Ասկերանի շրջանի Կարմիր գյուղից հարցվողը նշել է, որ վնասված երկու տուն է նկատել մինչև իր դուրս գալը. դպրոցի տնօրենի տունը և իր տան վերևի տնից է ծուխ տեսել: Ներքին Սզնեք գյուղում նահանջող զինվորականների հետևից կրակել են ադրբեջանցիները, ինչի պատճառով վնասվել են գյուղի տներ: Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում վնասվել է 4-5 տուն, Վարդաձոր գյուղում գոմ է փլուզվել:

Մի շարք բնակիչներ նշել են, որ չեն կարողացել գնահատել պատճառված վնասները՝ տարհանման և անձնական անվտանգությունն ապահովելու անհրաժեշտության բերումով:

Ամենաշատ վնասները գրանցվել են Մարտակերտի և Մարտունու շրջաններում, մասնավորապես՝ Ներքին Հոռաթաղ, Սոս, Կուսապատ, Վարդաձոր, Չլդրան, Սարուշեն և Կարմիր գյուղերում: Որոշ դեպքերում ռմբակոծության թիրախ են եղել ոչ միայն տները, այլ նաև տան բակերը, խանութները, բանջարանոցները և այլ ենթակառուցվածքները:

Մարտունու շրջանի Սոս գյուղի վրա հարձակումը եղել է զանգվածային՝ հանգեցնելով 20-ից ավելի տների ամբողջական և 50-60 տների մասնակի ավիրման:

«Կռիշան սնարյադ է ընկել, ավտոս էլ է վնասվել»:

«Սնարդյը որ տվել ա, տան պատալոկ-մատալոկ, ամեն ինչն էլ եղել ա: Տան աջ ու ձախը սաղ սնարյադ ա: Սաղ հերը անիծած, էնտեղ դրած՝ դուռ, պատուհան, սաղ»:

«Սառնարան եմ կրեդիտով առել, տվել ա. հենա ասկոլկա սառնարանի մեջ, լվացքի մեքենան ջարդված»:

«Մարտունիում ես ունեի գրասենյակ, ՀԿ-ի նախագահ էի: Գրասենյակի կողքն ա ընկել արկը: Դե ընդե ինչ կա չկա, քանի որ արկը, վալնան ամբողջ պատուհաններ ա ջարդվել, գրասենյակի պատուհաններն ա ջարդվել, ընդեղ կա համակարգիչ, համակարգիչն ա ջարդվել»:

«Մաճկալաշեն գյուղի դիրքի վրա էին խփում: Որ չէր կպնում դիրքին, անցնում էր, գալիս գյուղին, նույնը Թաղավարդի, Կարմիր գյուղի, Սարուշենի կողմերը»:

«Ստեփանակերտում Ազատամարտիկների փողոցի վրա կամուրջ կա: Կամուրջի վրա են երևի փորձել ուղարկել էդ ռումբը, բայց ընկել է բնակելի հատվածը, կամուրջից հետո սկսվող փողոցի բնակելի հատվածը, ու նաև համալսարանին շատ մոտ շենք է տուժել»:

«Պատահական մի 2-3 հրթիռ է ընկել գյուղում»:

«Չէիր իմանում՝ աջից ա գալի՞ս, թե՞ ձախից, դեմի՞ց, թե՞ հետևից: Կարկուտը քեզ օրինակ: Մնարդյադները թափվում էին գյուղի վրա»:

«Տունն էլ ա ասկոլկաներ տվել, կրիշան ծակվել ա, երեխու սենյակի պատը ցրեվ ա տալիս»:

«Սամայոտն ա եկել, մեր գյուղի վրա չեն քցել, բայց Հաթերքի վրա քցել են»:

Բնակավայրերի ենթակառուցվածքներին հասցված վնասներ

Հարձակման ընթացքում հարվածներ են հասցվել տարբեր բնակավայրերի էլեկտրացանցերին, կապի միջոցներին և այլ ենթակառուցվածքներին:

Օրինակ՝ Մարտունի քաղաքի վարչակազմի շենքի մոտ ընկած ռումբի դեպքը կարելի է համարել հատուկ թիրախավորում, քանի որ նույն տեղում նմանատիպ հարվածներ եղել են նաև 2020 թվականի պատերազմի ընթացքում:

Ստեփանակերտի էլեկտրացանցին և Ասկերանի շրջանի Լուսաձոր գյուղի էլեկտրացանցին հասցված հարվածների հետևանքով Ստեփանակերտում և Լուսաձորում հոսանքազրկվել են տներ: Մոշխմհատում էլեկտրալարերի վնասման հետևանքով փլուզվել է մի տան կտուր: Մարտակերտ քաղաքի և Կուսապատ գյուղի փոքր ՀԷԿ-երին հասցվել են վնասներ: Կաղարծի գյուղում ռումբի պայթյունի պատճառով խափանվել է ինտերնետ կապը: Էլեկտրական լարերի վնասման հետևանքով էլեկտրամատակարարումն ընդհատվել է նաև այլ համայնքներում:

Հարվածներ են եղել նաև դպրոցներին և մանկապարտեզներին: Կուսապատի դպրոցի պատուհանները ջարդվել են, Հերհերի դպրոցի մի հատված՝ փլուզվել: Մարտունի քաղաքում ռումբն ընկել է դպրոցի և մանկապարտեզի բակերը՝ վնասելով դռներն ու պատուհանները: Մանկապարտեզում արձանագրվել է շենքի ինտերիերի լուրջ վնասում, ընդհուպ մինչև նկուղի դռան և հայելիների փշրում: Բացի այդ, Մարտունիում վնասվել է նաև մարզահամալիրը:

«Կտուրը փլվել ա, էլեկտրականության լարերին խփել են»:

«Դպրոցի պատուհանները ջարդվել են»:

«Դպրոցի շենքի մի մասը վնասվել է, փլուզվել»:

«Էդ նույն արկի տեղը՝ հենց մանկապարտեզի դռան դիմաց, որ մուտքը մտնում են... ամբողջ շենքի հայելիները կոտրատվել են, ու էդ վալնան էնքան ուժեղ էր, որ նկուղի դուռը բացվեց ու կոտրատված հայելիները-բանը նկուղի միջանցք թռավ»:

Հարձակման հոգևոր-մշակութային թիրախները

Ռազմական գործողությունների ընթացքում հոգևոր և մշակութային շինությունների թիրախավորումը եղել է սահմանափակ, սակայն մի շարք դեպքեր փաստում են, որ որոշ հարվածներ կարող էին լինել միտումնավոր:

Ստեփանակերտում մշակույթի համալիրին հասցված հարվածից հետո այն ամբողջությամբ ծածկվել է փոշով: Հարվածի թիրախ է դարձել Ճարտարի Եղիշե վանքը: Մարտունու եկեղեցին ևս վնասվել է: Ընդ որում, հարվածի վայրը նույնական էր 2020 թ. հարվածի վայրի հետ, ինչը միտումնավորության անուղղակի վկայություն է:

Հարվածներ են հասցվել նաև հուշարձաններին: Վնասվել է Ստեփանակերտի մեծ խաչը: Վարդաձորում կրակել են զինվորների նկարներով հուշարձանի վրա, չնայած տարածքում մարդ չի եղել: Մարտունիում կրակոց է արձանագրվել Մոնթե Մելքոնյանի արձանի վրա:

Հարցվողների մի մասը հետագայում (արդեն Արցախից հեռանալուց հետո) իմացել են իրենց գյուղերի մոտակայքում գտնվող հոգևոր-մշակութային հուշարձանների, եկեղեցիների, ամբողջական գերեզմանատների և առանձին գերեզմանաքարերի ավիրման մասին՝ համացանցում տարածվող տեսանյութերի միջոցով:

«Ստեփանակերտի դիմացի մեծ խաչն էր, որ տեսել եմ՝ ոնց են կտրում, գցում արդեն: Գեղեցիկ խաչ էր, տեսել եմ դա»:

«Մեզ հուշարձան ունեինք, կրակում էին նկարների վրա: Տղաների նկարների վրա կրակում էին. գյուղի տղաներն են տեսել»:

«Ավոյի արձանի վրա էլ են կրակել, դա եղել է միտումնավոր»:

«Մի վիդեոյում էլ Խաչենց գյուղի եղբայրական գերեզմանոցը հողին հավասարացված ա, արդեն բան չկա, թուրքն էլ նկարում ա, ոչինչ չկա»:

«Հաթերք գյուղում ավտոմատով կրակում, քանդում էին գերեզմանները: Ստեփանակերտում քանդում էին մեր եկեղեցիքը ու խաչերը կտրում, թափում»:

Համացանցում պտտվող տեսանյութերում իրենց տունը, այգին կամ բնակավայրը տեսնելը հակասական զգացումներ է առաջացնում հարցվողներից շատերի մոտ: Որոշ մարդիկ նշել են, որ նախընտրում են ընդհանրապես դա չտեսնել:

«Վաբշե սաղ օրը մենակ խաղում եմ, չեմ էլ մտնում (նկատի ունի՝ ինտերնետ – խմբ.): Եթե գալիս էլա, ես աշխատում եմ փախնեմ նման բաներից՝ հեռուստացույցից, ամեն ինչից»:

«Միշտ որ քցում են... Շատ վախտ ես ջնջում եմ»:

«Սոց. ցանցերս եմ ջնջել, որովհետև էն հիշողությունները, որ Ֆեյսբուք մտնում ես, ամեն օր բերում ա, ահավոր ցավալի ա, դրա համար... Մտածում ես՝ երազ ա, հեսա կարթնանաս»:

9. Բնակչության բռնի տեղահանումն Արցախից

Արցախից բնակչության բռնի տեղահանումն ու տեղափոխությունը՝ Հայաստան, եղել է ծանր ու բարդ փորձություն: Ճանապարհը, որ տևել է երկու և ավելի օր, սրել է շրջափակման հետևանքները և դարձել նոր զրկանքների պատճառ:

Բնակչության՝ սեպտեմբերի 23-ից մեկնարկած տեղահանումը շարունակվել է մինչև այդ ամսվա վերջ, իսկ մարդկանց առավել զանգվածային տեղաշարժը տեղի է ունեցել սեպտեմբերի 25-ին և 26-ին:

Շատերը ստիպված են եղել գիշերել մեքենայի մեջ՝ ընտանիքի անդամների, երեխաների և տարեցների հետ: Մեքենաները երկար կանգ են առել խցանումներում՝ հատկապես Շուշիի ոլորաններում ու Ստեփանակերտի կամրջի մոտ:

Բենզինի պահեստի պայթյունից հետո ծանրաբեռնվել են նաև շտապ օգնության մեքենաները, ինչը ևս սաստկացրել է խցանումները:

«Բլոկադային էդքան շատ խնդիրներ չուներ, ինչքան էդ երեք օրվա ճանապարհը»:

«Երբ մենք հասանք Կոռնիձոր, արդեն ինտերնետ եղավ ու ես տենց բավական մանրամասն գրեցի, թե ինչ ա սպասվում մարդկանց»:

Արցախից ՀՀ տեղափոխվելու պատճառները

Արցախցիների՝ Հայաստան տեղափոխվելու պատճառները բազմաշերտ են, սակայն բոլոր պատասխանների միջով անցնող կրկնվող գիծը ընդհանուր անկայունությունն է և ստիպողական (հարկադրված) բռնագաղթի զգացումը:

Բռնագաղթի զանգվածային-լայնամասշտաբ բնույթը դարձել է հեռանալու գլխավոր պատճառը: Ինչ-որ պահից սկսած այն համատարած էր, ինչը սոցիալական վարակի ճնշող ազդեցություն էր ունենում մյուսների վրա:

Հուսալքության և մեծ թվով ծանոթների ու հարազատների հեռանալու հանգամանքն ազդել է նաև այն մարդկանց հեռանալու որոշման վրա, որոնք մինչ այդ նման ցանկություն չեն ունեցել:

Ոմանք մնացել են համեմատաբար երկար՝ հնարավորինս հետաձգելով հեռանալու պահը, որպեսզի կարողանան իրավիճակը համակողմանի գնահատել: Բայց, ի վերջո, նրանք ևս հեռացել են Արցախից, երբ համոզվել են, որ տեղում ոչ ոք չի մնում:

«Մնայինք՝ ի՞նչ անեինք, որ սաղ դուրս էին գալիս»:

«Դե հայ էինք, մեզ էլ չէին թողնում Ղարաբաղում ապրեինք: Դա վիճարկվում էր»:

Որոշ բնակիչներ հեռացել են՝ հասկանալով, որ առանց պետական աջակցության կյանքը Արցախում դժվարացել է կամ անհնարին դարձել:

«Եթե մենք չունենք պետություն ու զինված ուժեր, ուրեմն մենք միանշանակ չենք ապրում ըստեղ»:

Ադրբեջանցիների ներկայությունը՝ անվտանգության ռիսկ

Մարդիկ իրենց անվտանգ չէին զգում ադրբեջանցիների ներկայությամբ: Շատերը վախենում էին հնարավոր բռնություններից ու հաշվեհարդարից:

Զինված ադրբեջանցիների ներկայությունը մարդկանց մոտ առաջացրել է վախ ու սթրես, հատկապես՝ կանանց, երեխաների և տարեցների մոտ:

«Զուտ իրենց ներկայությունը... երբ երեխեքը տեսնում էին ադրբեջանցիներին… լացելով»:

Հարցվողները նշել են, որ հայերն ու ադրբեջանցիները խաղաղ համակեցության հնարավորություններ չունեն՝ հիմնվելով պատմական ցավոտ փորձի վրա:

«Վստահ չէի նույնիսկ, որ կենդանի դուրս կգանք Ղարաբաղից: Կարող ա ճանապարհին կոտորեն. ո՞վ ա իմանում

«Հայն ու ադրբեջանցին հնարավոր չէ իրար հետ ապրեն: Ցանկացած իրանց աշակերտին՝ ամենափոքր, հարցրու, կասի՝ հայը մեր թշնամին ա»:

«Մենք արդեն զգում էինք, որ թուրքը, իրա սպեցնազը մեր փողոցով, մեքենաներով գնում էին: Երեխաները գալիս էին, թաղը՝ թուրքի մեքենա»:

Տեղեկություններ բռնությունների ու սպառնալիքների մասին

Այդ օրերին տարածվել են տեղեկություններ սպանությունների և խոշտանգումների դեպքերի մասին: Թեև տեղեկությունները բոլոր դեպքերում չէին հաստատվում, բայց վախեցնող պատմությունների ազդեցությունը մեծ է եղել՝ խթանելով շատերի հեռանալը:

«Մեկը, լսում ես, ասում է՝ թուրքերը մտել են, երեխեքի են մորթել, հավաքել-տարել են...»:

«Մարդկանց ականջներն էին կտրում»:

Որոշ մարդիկ անհայտ աղբյուրներից հեռախոսային հաղորդագրություններ են ստացել ռուսերենով և մեկնաբանել դրանք որպես ադրբեջանցիների կողմից ուղարկված սպառնալիք.

«Վերջացան ձեր սև օրերը, ապրե՛ք հրաշք կյանքով»:

Պաշտոնական (պետական) պաշտպանության բացակայությունը

Արցախցիները նշել են, որ թե՛ Հայաստանի իշխանությունները, թե՛ միջազգային կազմակերպությունները հրաժարվել են իրենց պաշտպանել: Այս համոզմունքը նույնպես նպաստել է զանգվածային ելքին: Շատերը տեսել են, որ բանակը զինաթափվել է, իսկ ռուս խաղաղապահներն ադրբեջանցիների հետ են համագործակցել:

«Հիմա որ Հայաստանն իր ձեռքերը լվացել ա, Ղարաբաղն էլ արդեն երաշխավոր չունի, էնտեղ մնալն իմաստ չունի: Ախպերս եղել է պոստերում, ռուսն ա ադրբեջանցիների հետ պերեգավոռ արել, զենքերը հանձնել են»:

«Երբ զինվորականները եկան տուն առանց զենքի, ասեցին, որ բանակ պիտի չունենանք... ժողովուրդը ուզում էր առանց որևէ բանի մի կերպ դուրս պրծներ»:

Մարդիկ լքել են իրենց բնակավայրերը նաև տեղական իշխանությունների ուղղակի կամ անուղղակի հորդորով: Կենտրոնական և տեղական իշխանությունների անգործությունն ու սխալ որոշումները նույնպես նպաստել են հուսալքության խորացմանը:

Տրանսպորտային տեղաշարժի դժվարությունները

Մարդիկ Հայաստան են հասել տարբեր ճանապարհներով. շատերը՝ սեփական մեքենաներով, ոմանք՝ հարազատների կամ հարևանների մեքենաներով: Եղել են նաև ուղևորատար մեծ մեքենաներ՝ միկրոավտոբուսներ:

Տեղական իշխանությունները որոշ դեպքերում տրամադրել են տրանսպորտ, այդ թվում՝ ավտոբուսներ: Սակայն ավտոբուս նստելու գործընթացը հաճախ խուճապի, իրարանցման և տեղերի համար մրցակցության պայմաններում է եղել:

«Մի ավտոբուս էլ ընենց խառը վիճակ էր, որ վարորդը կես ճամփին թողեց, գնաց: Բնակչությունը ջարդուփշուր ա անում, չի կարողանում տեղավորվել, վախ ա մեջները մտած արդեն. շուտ փախնենք»:

Որոշ դեպքերում էլ մարդիկ տեղափոխվել են կամազ մակնիշի բեռնատար մեքենաներով կամ ռազմական մեքենաներով:

Դեպք է եղել, երբ մի քանի ընտանիք՝ մոտ 68 մարդ, տեղավորվել է մեկ կամազի մեջ: Նրանք ճամփորդել են ոտքի վրա՝ կանգնած, անձրևի տակ, շատ դժվար պայմաններում:

«Մեր հարսն էլ իրա նաչալնիկից մի ավտո ա յեր կենում, նի ենք կենում կուզովը»:

Եղել են մարդիկ, որ պատահաբար գտել են լքված և անսարք ժիգուլի մեքենա, վերացրել են անսարքությունը և դրանով են ճանապահ ընկել:

«Մի հատ ժիգուլի կար ճամփին, փչացել էր: Մասնագետ եմ, սարքել եմ, խոդի եմ քցել: Ասի՝ որտեղ կանգնի, կկանգնի: Քշել եմ»:

Ընտանիքները երբեմն կիսվել են. ընտանիքի անդամների մի մասը ստիպված է եղել ժամանակավորապես մնալ Արցախում՝ տրանսպորտի բացակայության պատճառով կամ գույքային խնդիրներ լուծելու նպատակով:

«Հայրս մնացել ա էնտեղ, որովհետև Արցախբանկը որոշում ա, որ գրավ դրված ոսկին հաջորդ օրն ա տալու: Ու քանի որ մենք էլ ունեինք գրավ դրված ոսկի, հայրս մնացել ա, վերցրել ա ոսկին ու մի քանի օր հետո եկել ա»:

Հարևաններն ու ազգականները հաճախ են շարասյուններ կազմել՝ ճանապարհին միմյանց օգնելու նպատակով:

«Անցորդների շրջանակում ոնց որ հարազատներ լինեինք, մեկը ծանոթանում էր. դուք որտեղի՞ց եք, ինչի՞ կարիք ունեք, ինչո՞վ կարող ենք օգնել, մեկը դեղորայք էր տալիս, մեկը՝ ինչով կարողանում էր»:

Ճանապարհին հաճախակի են եղել մեքենաների անսարքություններն ու վթարները, ինչը հարկադրել է փոխել տրանսպորտային միջոցը:

«Իմ ախպորս մեքենայի տորմոզի շլանգը տրաքում ա գիշերվա 3-ին... մի կերպ կապելով, բաներով: Մինչև առավոտ սպասելով. էդ ընթացքում վթարներ ա լինում»:

Ավտոմեքենաներում անցկացրած տևական ժամանակն ու վատ պայմանները սրել են մարդկանց առողջական խնդիրները, հոգնածություն ու ցավեր առաջացրել, նպաստել երեխաների լացին և անհանգստությանը:

«Ոչ մեկ չէին կարողանում ոտքերը շարժեին, թմրել էր: Կիսրարս ասում էր՝ մեջքս ա ցավում, կիսուրիս ճնշումն էր բարձրացել, երեխաները սենց կիսասոված, հոգնած, ե՞րբ ենք հասնելու, հանգստացնում էինք, որ քիչ մնաց»:

«Վերցված դեղորայքը, որ պետք է սրսկումով արվեր, ուղղակի լցրել է բերանը, որ փրկվի՝ մինչև Գորիս հասնելը»:

Մարտունիում խուճապ է առաջացել, երբ մարդիկ տեսել են զինված ադրբեջանցիների ու մտածել են, թե պատանդառություն է սպասվում:

«Էդ պահին Ադրբեջանի զորքից 2 Ուազ մակնիշի, բուխանկա Ուազ եկան դպրոցի մոտը՝ խաչմերուկի մոտ կանգնեցին ու իջան. խուճապը ընդհանրապես. խառնվեցին իրար... Հետո ռուսները եկան իրանց հետևից, դրանց տարան»:

«Իրար վրա կանգնել ենք՝ երեխոցը կոխ-կոխ անելով»:

Բնակիչները դժվարությամբ վառելիք են հայթայթել վերջին պահին: Որոշները ստիպված են եղել գնել շատ թանկ գնով, իսկ մի մասը ճանապարհին է գտել վառելիք՝ համերկրացիների և

նույնիսկ ադրբեջանցիների օգնությամբ: Այս հարցում ադրբեջանցիների աջակցությունը պայմանավորված էր արցախցիներից հնարավորինս շուտ ազատվելու ցանկությամբ:

«Բենզին էին տվել (նկատի ունի՝ ադրբեջանցիները – խմբ.), որ ինչքան հնարավոր ա շուտ դուրս գանք»:

Որոշ դեպքերում էլ գյուղապետարաններն ու իշխանություններն են աջակցել՝ տրամադրելով վառելիք կամ կտրոններ:

«Դիմել ենք կառավարությանը, պետնախարարին, անձամբ ես: Վերցրել եմ բենզինի կտրոններ, գնացել, բենզին վերցրել, մեքենաներ, 16 մեքենա լիցքավորել ենք, եկել»:

«Կանեստրը 100 հազարով առել ենք»:

«Ճանապարհին մեր գյուղից տղաներ կային, մեզ օգնեցին, որ մինչև Գորիս հասնենք»:

«Մեր կողքի մեքենայի բենզինը ավարտվել ա ու ինքը էդտեղից, պռոպկայից գտել ա»:

Ճանապարհի վիճակը և եղանակային պայմանները դարձել են հավելյալ մարտահրավեր: Հարցվողները նշել են սաստիկ քամիների, ցրտի, ինչպես նաև՝ անբարեկարգ ու նեղ ճանապարհների մասին, հատկապես՝ մեծ մեքենաների և բեռնատարների առկայության պարագայում: Շատերը ստիպված են եղել իջնել մեքենայից ու կրակ վառել՝ տաքանալու համար:

Մեքենաների խափանումներն էլ, որոնք կարող էին օրեր տևել, նույնպես հանգեցրել են խցանումների: Խցանումները հիմնականում կարգավորվել են խաղաղապահների միջամտությամբ, որոնք որոշակի պարբերականությամբ մեքենաների փոքր խմբեր են բաց թողել:

Կապի հետ կապված խնդիրներ հիմնականում չեն եղել, բայց երբեմն կապն ընդհատվել է հեռախոսների լիցքավորման բացակայության կամ Ստեփանակերտի կապի հանգույցի զավթման հետևանքով:

«Ամեն մի 10-15 րոպեից կանգնում էինք, որ ռուսները բաց թողեն մի պարտիա, հետո մենք»:

«Մեր կապը կտրվեց, որովհետև իրանք մտել են Ստեփանակերտ ու կապի հանգույցը վերցրել են, մեր կապը կտրվել ա»:

Երեխաները՝ բռնագաղթի ճանապարհին

Երեխաները եղել են ամենախոցելի խումբը: Դեպի Հայաստան ճանապարհին սովի, ծարավի, մրսելու և հիգիենիկ պայմանների պակասը սրել են նրանց վիճակը: Շատ երեխաներ հիվանդացել են, ցրտահարվել կամ վատացել ճանապարհին: Տարածված խնդիր է եղել տակդիրների բացակայությունը:

«Երեխեքս լացում են. մամա՛, սոված ենք: Ասում եմ՝ համբերե՛ք, տանը չենք»:

«Տեսել են, որ երեխաների հետ ենք, մեծահասակների հետ ենք, տվել են էդ տուշոնկաներից»:

«Պամպերս էլ չկար: Ամբողջ ճանապարհին էդ պամպերսը իրան պահեց: Ամենադժվարը դա է, էդ ֆիզիոլոգիական խնդիրը, թե չէ սովին 2-3 օր դիմանում ես»:

«Երեխեքը մեքենայի մեջ վատացան, սրտխառնոց, հետ տվեցին: Լավ ա շոր վերցրել էի երեխեքի համար»:

Մահեր

Ըստ որոշ գնահատականների, Հայաստան մեկնելու ճանապարհին մահերի ընդհանուր թիվը հասել է շուրջ 67-ի: Սակայն այս վիճակագրությունը դեռ հաստատված չէ տարբեր աղբյուրներից:

«Ընկերուհուս հորաքույրն է մահացել ճանապարհին, կաթված է ստացել»:

«Սիրտն է կանգնել»:

«Էդ կինը առողջական խնդիր ուներ, էդ ստրեսներից հելավ, ընկավ գետնին, տենց մնաց... մահացել էր»:

«Մորքուրի աղջկա տալն է մահացել… դեղ չկա, որևէ բան չկա»:

Ճանապարհին գրանցվել են նաև ողբերգական դեպքեր: Մի կին զոհվել է՝ մեքենաների արանքում մնալով:

««Ռուչնոյը», ամեն ինչ սարքած էր, բայց միևնույն է, մեքենան շարժվել է, ու էդ կինը մնացել է երկու մեքենաների մեջտեղում»:

«Կայնում էին մեքենաները մի 10 րոպե, մեկ էլ մեկ րոպե առաջ գնում: Էդ հարսը գնացել ա մտել էդ կամազի տակ: Չի իմացել վարորդը, մնացել ա տակը»:

Մի շարք դեպքերում մարդիկ մահացել են Հայաստան հասնելուց անմիջապես հետո՝ երկար ճանապարհի պատճառով առողջական վիճակի վատթարացման կամ դեղորայքի բացակայության պատճառով:

«Դե, դեղերը վերցրած եկել ենք, բայց բերել ենք, հասցրել էստեղ՝ մահացել է: Մի օր հետո»:

«Մամաս եկավ ու չդիմացավ, մահացավ»:

Ճանապարհին եղած խցանումները, անմարդկային պայմաններն ու այլ դժվարությունները ևս հանգեցրել են մահվան: Հարցվողներից մեկը պատմում է, որ մի կին բնական կարիքները հոգալու համար դուրս է եկել ճանապարհից և ընկել ձորը:

«Վտանգը էն ա, որ զուգարան են ուզել, գնացել: Ձոր ա, ոտ ա եղել, սոտ ա տվել, ընկել ձորը»:

Սնունդ և ջուր

Շատերը Արցախից դուրս են եկել առանց բավարար սննդի՝ մտածելով, թե ճանապարհը կարճ կտևի: Միայն հետագայում, երբ պարզվել է, որ մինչև Հայաստան մոտ 100 կմ ճանապարհը կարող է տևել 20 ժամ և ավելի, մեկնողները սկսել են իրենց հետ սնունդ ու ջուր վերցնել:

«Ես որ սարի վրայից նայեցի պռոպկան ինչքան ա, ասում եմ՝ ձերը հաստատ 20 ժամ տևելու ա, օրինակ՝ սնունդ ա, ջուր ա, բան, տենց կվերցնեք էլի»:

Տարածված սննդամթերքներից են եղել շոգեխաշած միսը (տուշոնկան), հացը, շիլան, ինչպես նաև՝ ճանապարհին մորթված կենդանիներից պատրաստված միսը: Ոմանք իրենց հետ վերցրել են ընկույզ, կարտոֆիլ, ձու, մրգեր, սակայն այդ մթերքները արագ են փչացել: Մարդիկ նաև մրգեր են քաղել ճանապարհի մոտակա այգիներից:

Հայաստանի տարածքում՝ Կոռնիձորում տրամադրված սնունդն ու ջուրը համարվել են փրկություն՝ երկար ժամանակ սոված մնալուց հետո:

«Դե մեր ձեռքը հաց-մաց ա եղել, ֆսյո, նույն պահին պրծել ա»:

«Սկզբից մինչև վերջ ուտելու բան չի եղել, ջուր էլ չի եղել»:

Մարդիկ, որոնք մինչև մեկնումը օթևան էին գտել օդանավակայանում, ռուս խաղաղապահներից ստացել են պահածոներ և պատրաստի սնունդ:

«Դե ռուսները աերոպորտում շատ բան էին տվել մեզ, ես դրանք նկարել եմ. տուշոնկաներ ա, պատրաստի կերակուրներ ա»:

Ձրի խնդիրը համեմատաբար քիչ է նշվել, քանի որ շատերը ջուր են վերցրել առվակներից կամ ունեցել շշալցված ջուր: Ավտոբուսներով ուղևորվածներին տրամադրվել է ջուր՝ վարորդների կողմից: Եղել են դեպքեր, երբ մարդկանց մոտ միայն 5 լիտր ջուր է եղել 2 օր տևող ճանապարհի համար:

«Վարորդը պահում էր, բագաժնիկում կլետկաներով տալիս էր, վերցրեք, լավ ջուր էր, շշալցված ջրեր էին»:

«Ջուր չի եղել, 5 լիտր ջուր ա եղել: Երեխա, ես էլ շաքար ունեմ, բերանս ջուր եմ ածում, մի քիչ պահում. կես լիտր ջուրը երկու սուտկա եկել եմ հասել»:

Որոշ մարդիկ սովի և ծարավի պատճառով օգնություն են ստացել կամ փորձել են ստանալ ադրբեջանցիներից: Հագարի կամրջի մոտ ադրբեջանցիները բաժանել են կոնֆետներ, թխվածքաբլիթներ և ջուր:

Այդուամենայնիվ, մարդկանց մեծ մասը հրաժարվել է օգտվել այդ առաջարկներից՝ անվստահության պատճառով: Մյուս մասը վերցրել է առաջարկվող օգնությունը, սակայն հետո այն դեն է նետել:

«Որ թուրքը ջուր ա առաջարկել, թեքել եմ դեմքս, որ զրույցը չշարունակի»:

«Մեքենան ուժեղ քշել ա, որ չվերցնի (նկատի ունի՝ ադրբեջանցիների առաջարկած սնունդը կամ ջուրը – խմբ.)»:

«Թուրքերը պոստը անց կենալուց մի 20 պաչկա պեչենի են տվել: Իրանց անա անց ենք կացալ, թափել: Սաղ պոլը թորքի պեչենի, բայց ես մի հատ կերալ եմ. դե սոված, ծարավ»:

«Պապաս վերցրեց, շպրտեց, ասեց՝ կարող ա թունավորած ա, երեխեքը կոտորեն, հեսա հասնում ենք»:

«Ադրբեջանցիները մեզ ճանապարհին ջուր ու պեչենի են տվել: Ես այնքան սոված էի, որ ուզում էի էդ պեչենին բացեի, մեկ էլ չթողեցին, ասացին՝ կարող է թույնած լինի... Աչքը ծակի նման նենց էինք ուտում էդ հացը: Համ լաց էինք լինում, համ՝ ծիծաղում: Ահավոր ապրումներ էին»:

Մարդկանց հոգեվիճակը

Բռնագաղթի ամբողջ ընթացքն ուղեկցվել է մեծ ստրեսով, լարվածությամբ ու տագնապով: Մարդիկ իրենց հայրենիքը լքել են անորոշության պայմաններում՝ չիմանալով, թե արդյոք կունենան վերադարձի հնարավորություն: Շատերը նշել են, որ ճանապարհին անընդհատ լացել են:

Արցախցիներն այդ օրերի իրենց հոգեվիճակը հաճախ են նկարագրել որպես «զոմբիացած», «ռոբոտացած»:

Հոգեկան ծանր ապրումները շարունակվում են մինչ օրս:

«Դե անընդհատ ստրեսային վիճակի մեջ ես, զոմբիներ դառած ենք, չեմ պատկերացնում՝ ոնց ենք անց կացրել»:

«Սաղ օր լաց ենք եղել»:

«...Անբացատրելի վիճակ ա էլի, որ էնպիսի վիճակ ա, որ թողնում ես քո երկիրդ, հայրենիքդ, քո օջախդ ու էդպիսի պայմաններում լքում՝ իմանալով, որ դա վերջն ա, հնարավորություն չես ունենա վերադառնաս քո հայրենի օջախդ, քո հայրենիքդ: Ու էդ ապրումները առ այսօր, կարելի ա ասած, չեն վերացել»:

«Պապի-տատին հա լացում էին: Մի պահ տատիի ճնշումը բարձրացել էր»:

«7 ժամ մի տեղ կանգնել ենք. անձրև, մութ: Չես իմանում՝ որտեղ ես»:

Հատկապես անհանգստություն է առաջացել այն ընտանիքներում, որոնք տարբեր մեքենաներով են ստիպված եղել մեկնել կամ՝ ընթացքում են բաժանվել՝ ճանապարհին: Նրանք խիստ մտահոգված են եղել հարազատների անվտանգության համար:

«Դե տեղափոխության ընթացքում ինձ տանջում էր էն հարցը, որ ամուսնուս թողել ենք էնտեղ, դուրս եկել»:

«Ո՞նց պիտի լինի, հայրենիք ես թողում, գալիս. մեռած էինք, թաղված չէինք»:

«Սաղս մի ձևի ռոբոտացած, արդեն ուղեղներս չէր աշխատում, չգիտեինք՝ ինչ ենք անում, ուր ենք գնում, ինչ ենք թողել: Նոր ենք զգում, էդ պահերին չէինք զգում»:

Հոգեբանական ճնշումն ու նվաստացնող վերաբերմունքը՝ ադրբեջանցիների կողմից

Ադրբեջանցիները Հագարի կամրջի և այլ անցակետերի մոտ հեռացող արցախցիներին հաճախ են դիմավորել վիրավորական ժեստերով ու արտահայտություններով, սպառնալիքներով ու ծաղրով:

Ադրբեջանցիների կողմից օդ կրակելու դրվագներ էլ են եղել:

Կոնկրետ գործողությունների ու կոչերի բացակայության պարագայում էլ, միևնույն է, նրանց կեցվածքը, վարքն ու ոչ վերբալ արտահայտումներն անուղղակի նվաստացնող բնույթ են կրել:

«Արհամարհական հայացք, հաղթողի: Բայց ոչ մի բան չեն խոսել»:

«Իրանք ուրախացել էին, որ դուրս ենք գալիս, ձեռքով ճանապարհում էին»:

«Նայում էին, ոնց որ թուրքը՝ խոզի մսին»:

«Դու տեսնում ես, որ մարդիկ քեզ են նայում, հրճվում են, ուրախանում են, իրենց հաղթանակն են տոնում»:

Հնչել են նաև կոնկրետ սպառնալիքներ, վիրավորական և նսեմացնող արտահայտություններ:

«Ձեռքերով վատ բաներ են ցույց տալիս, ուշունցներ են տալիս... ասացի՝ ոչ մեկդ ձեն չհանե՛ք»:

«Մատ էր ցույց տալիս, հայհոյում էր»:

«90-ականներին գիտե՞ս հեշտ պրծել ես, հիմա եկել ես ըստեղ, ուզո՞ւմ ես անցնես»:

«Մարտունի չի, թուրքական անուն տվեց, ասաց՝ տենց ասա: Պապին ասաց՝ ես տենց բան չեմ ասի... խփեց, ասաց՝ գնացեք»:

«Դավա՛յ, բեգոմ մաշինա: Պացան ա, բայց չես կարա խոսաս... Տանում Բաքու, կորցնում ա»:

«Սիկտիր եղեք, արագ»:

«Արի մի հատ հայկական կոնյակ խմենք իրար հետ»:

«Լա՛վ հիշեք, հայե՛ր, որ մենք դուրս ենք եկել, ձեր նման դուրս չենք եկել»:

«Դաժե Շուշվա էն կրեպստում մեզ թուրքերը նկարելիս են եղել. «քյացե՛ք, քյացե՛ք, դու՛րս դառեք»»:

«Տնազ են արել, ուշունց տվել, հորավ, մորավ են ասում»:

Ճնշումներն ու բռնարարքները՝ Հագարի կամրջով անցման ընթացքում

Արցախն ու Հայաստանը միացնող Հագարի կամրջով անցումը բնակչության շրջանում սրել է վախն ու անհանգստությունը: Տարածված էին տեղեկություններ, թե կամրջի մոտ մարդկանց ձերբակալում են պատերազմին մասնակցելու համար: Շատերը, ովքեր Արցախի ինքնապաշտպանական ուժերի անդամ են եղել, մտավախություն ունեին, որ իրենց էլ կարող են բռնել:

«Հագարի կամրջով մենք չէին իմանում՝ ինչպիսի ճակատագիր կարող ա լինել, որովհետև դեպքեր եղել են արդեն, որ մարդկանց էին առևանգում՝ իբր պատերազմական գործողություններին մասնակցելու պատրվակով: Ու քանի որ Արցախում, կարելի ա ասած, գերակշիռ մասը ինքնապաշտպանական գործողությունների մասնակից էր, ցանկացած մեկին կարող էին տանել»:

«Բան կար, որ տղամարդկանց չեն թողելու անցնեն, որովհետև Մարտունին մի քիչ իրանց համար բկի ոսկոր էր»:

«Ասում էին, որ մտնում են էդ ավտոբուսները, ասում էին՝ մի 300 հոգանոց ցուցակ կա, նրանց են փնտրում...»:

«Էդ Հագարի կամրջին մինչև լրիվ մոտիկանալը դողում էինք»:

Ստուգումների ընթացքում կանայք ու երեխաները մնում էին մեքենաներում, իսկ տղամարդկանց հիմնականում իջեցնում էին մեքենաներից, զինված մարդկանց ուղեկցությամբ քայլելով անցկացնում մոտ 100 մետր: Քայլելու ընթացքում նրանց լուսանկարահանում կամ տեսանկարահանում էին:

«Որ կասկածում են, որ 18-ը լրացած ա, ասում են՝ դուրս արի, կամեռաների առջև քայլի»:

«Հագարի կամրջի մոտ իջեցրել են ավտոյի մեջից տղամարդկանց, մի տողանոց կանգնեցրել են ու սկսել հարցեր տալը: Նկարներով նայում են հեռախոսի մեջ, նմանեցնում ինչ-որ մեկի»:

«Կանգնեցրին, ստուգեցին մեքենան, «багажник»-ը (բեռնախցիկ – խմբ.) բացեցին, հետո պապային նկարեցին ինչ-որ հատուկ (տեսախցիկով – խմբ.)… Մի քանի հարց տվեցին: Բայց շատերի դեպքում, օրինակ, դա չկար, իրանք ուղղակի անցնում էին»:

«Ավտոյի մեջ ինչքան ջահել տղա ա եղել՝ շոֆեռից բռնած մինչև (բացի հորիցս) յոթանասունքանի մարդ, իջեցրել են պոստումը: Նկարները նայում ծելեֆոնինը՝ տենան՝ ով ա հարկավոր»:

«Մեքենաները կանգնեցնում էին իրանք, հեռախոսը պահում էին մարդկանց դեմքի մոտ, տեսնեին՝ իրանց ուզած մարդն ա, թե չէ»:

«Հետո թուրքերենով խոսում էին: Տղան, իմանալով, որ դա իրանք տենց փորձում էին, ասում էր՝ ես ձեր լեզուն չեմ հասկանում, ասում էր՝ չէ, հասկանում ես, ուղղակի չես ուզում տենց խոսել: Վախեցնում էին:
Մարդն էլ 4 անգամ սիրտը վիրահատած, իրեն վատ զգաց, իրանք էլ ասում են, որ մանդրաժ ա ընկել, ուրեմն մեր իմացած մարդն ա: Անձնագիրը նկարեցին, անուն-ազգանուն հարցրին, տարան-ստուգեցին, եկան, ասում ա՝ չէ, ինքը չէ, բաց թողեք»:

Ադրբեջանցիները զննում էին անձնագրերը, դիտարկում հեռախոսներում առկա լուսանկարները, բացում բեռնախցիկները՝ զենք որոնելու նպատակով:
Շատ մարդկանց վախեցրել են ստուգումների սպառնալից բնույթը, ձայները, զինված մարդիկ:
Երեխաները լուրջ սթրես են ապրել՝ նույնիսկ վախից փակելով աչքերը: Որոշ երեխաներ հետագայում Հայաստանում հոգեբանի են այցելել՝ վախը հաղթահարելու համար:

«Մամաս էնքան ա լացել: Երեխեքս էնքան էին լացում, ասում էին, որ պապային բռնելու են: Մամաս, կինս ասում էին՝ չեն բռնելու, արխային»:

«Մինչև Հագարի կամուրջը սաղ լաց լինելիս են եղել: Լա անցել ենք, լոխ սասերը կտրված ա, կակ բուդտո դատարկ ա»:

«Երեխեքը փակել են (աչքերը – խմբ.), որ չվախենան»:

«Պապա՛, դուռը չբացե՛ս»:

«Ռոզին շատ հանգիստ երեխա ա, ինքը շատ քիչ դեպքերում կարա լացի, ու էն ձև, որ ձայնը շատ բարձր կարող է լինել: Բայց հենց հասանք Հագարիի մոտ, էս երեխեն սկսեց անհանգիստ լաց լինել»:

«Որ հասանք Հագարի կամուրջ, հարցրին՝ քանի հոգով ենք: Ամուսինս ասեց՝ 5 հոգով, 3-ը՝ երեխա: Ասեց՝ հետևի դուռը պետք ա բացեք, երեխեքին ստուգենք: Երեխեքը մի կողմի վրա կուչ էին եկել, բան չարեց»:

Կամրջի վրա ադրբեջանցիների կողմից մեծ մասամբ դրսևորվել է վերահսկողության և գերակայության ընդգծված վարք՝ երբեմն հատուկ կոպիտ վերաբերմունքով:

Հագարի կամրջի մոտ ադրբեջանցիները մարդկանցից բռնագրավել են տարբեր իրեր՝ ոսկյա մատանիներ, շղթաներ և այլ արժեքավոր անձնական իրեր:

«Եղել ա, մարդիկ կալոննի մեջ, գալիս են: 100 մեքենայի հետևից գնում ա, գալիս ա, տեսել ա, օրինակ, ոսկի: Ասում ա՝ հանի տուր ինձ, հանել ա, տվել, ի՞նչ աներ»:

«Արթուրիկին ասել են՝ զաժիգալկա ե՞ստ, ասում ա՝ դա, ասում ա՝ նու, դայ պասմատրիմ: Պռաստոյ սև զաժիգալկա ա, վեկալել ա: Ինչ ուզեմ, անելու եմ. իմաստը դա էր»:

«Հենրիկյան Հենրիի խաչը քաշել են, վեկալել»:

«Ասել էին՝ խաչ էլ չպիտի լինի ձեռքներիս, վախ կար: Թոռս խաչ ուներ, աղջիկս վախից հանել, պահել էր»:

Եղել են բռնության դրվագներ. ոտքով հարվածներ, մարդկանց քաշքշոց: Կան դեպքեր, երբ մարդկանց ժամերով զրկել են ազատությունից կամ պահել մեքենաներում, ստիպել Ադրբեջանի օգտին խոսքեր ասել:

«Ռուսն ու ադրբեջանցին Հագարիում կանգնած էին: Դե ճիշտն ասած, որ ռուսին էլ տեսանք, ասինք՝ գուցե՞ կանցնենք»:

«Դե բա ի՞նչ, իրենց ձեռին ես, ի՞նչ կարաս անես կեսգիշերին»:

«Ինադու էլ եզներ են դրել՝ ավտոմատով, դանակները կողքներին, գրանատները ըստեղ քցած»:

«Ականատես ենք եղել՝ ինչպես են մարդ տանում: Չէինք ճանաչում: Ուզում էինք կանգնենք, գոնե իմանանք՝ ինչի էին տանում: Ասում էին՝ գնացեք, դուբինկայով խփում էին, վիրավորական խոսքերով»:

«Շատ կոպիտ վերաբերմունքով իրա հետ խոսում են: Մեկը հրելով էն մեկին ա տալիս, մեկը հրելով՝ էն մեկին»:

«Մենք ստրուկ ենք, իրանք էլ տերերն են, տենց էլի: Մտել են զենքերով ներս, մենք էլ անզեն մարդիկ, այ էդ վարքագծով, որ իրանք էս աշխարհի երկրագնդի տերերն են, մենք էլ էս աշխարհի ստրուկն ենք»:

«Ադրբեջանցի սահմանապահներից Հագարիի մոտ կանգնած մեկը ամուսնուս էր հարցաքննում: Մեկը դուռը նագլի ձևով բացեց, տեսնում ա, որ երեխային կերակրում եմ, բայց ինքը աչքերիս մեջ նայեց: Ահավոր քամի էլ էր, շատ ցուրտ, վախն էլ...»:

«Կանգնեցրել են, իրանց գեներալն ա, չգիտեմ՝ ով ա, ռուսերեն ա խոսում. բա էս ո՞ւր ես էթում: Ասում եմ՝ հարցեր մի տուր, տեղից էլ խախտված եմ: Ասում ա՝ լավ, քշի՛, գնա»:

«Ես վախեցի, պատուհանը բարձրացրեցի, ասեց (ադրբեջանցին – խմբ.)՝ իջացրե՛ք, նե՛ բոիտես»:

«Կոպիտ վերաբերմունքով էլ՝ «գնացե՛ք»՝ մեքենային խփելով, փայտեր էին ձեռքներին»:

«Մի քանի ժամով տարել էին, ծեծած վիճակում հետ են բերել. պետք է ասեր, որ Խանքենդիում է ապրել, որ ադրբեջանցիները լավն են, և այլն»:

«Մի հատ մեքենա կար՝ կամազ, շոֆեռին իջեցրին, ադրբեջանցի մեկը նստեց ռույլին, ինչ-որ պոստ կար, հայաթ, էդ մարդուն տարան, վերցրին, մեքենան հետը»:

Ադրբեջանցիների վերաբերմունքը կախված է եղել նաև տվյալ պահին ծառայության մեջ ներգրավված անձանց անհատական վերաբերմունքից: Եղել են ընդգծված հակահայկական դիրքորոշում ունեցող ադրբեջանցիներ, եղել են նաև չեզոք կամ նույնիսկ բարեհամբույր վերաբերմունքի դրսևորումներ:

«Մարդ կա՝ նորմալ, մարդ կա՝ բռնում-ծեծում էին»:

«Պարտիա են եղել, որ լավն են եղել: Պարտիա ա եղել, որ շատ վատն են եղել, ժողովրդին լավ ճնշել են»:

«Ադրբեջանցիներն աչքիս լույսը չեն, բայց շատ բարեհամբույր են վերաբերվել, անգամ մեքենայի դուռը բացել են, ծիծաղելով, նորմալ, ոնց որ մեր հայերը»:

Ադրբեջանական լրատվամիջոցների ներկայությունը

Մարդկանց մոտ մեծ լարվածություն է առաջացրել Հագարի կամրջի մոտ ադրբեջանական լրատվամիջոցների ներկայությունը: Շատերը խուսափել են նրանցից կամ փորձել չխոսել՝ զգուշանալով հանգամանքից, որ նրանց հետևում զինված մարդիկ են կանգնած:

Լրատվամիջոցների հարցումները հաճախ ուղղորդված են եղել՝ ստանալու համար Ադրբեջանին կամ ադրբեջանցիներին դրական լույսի ներքո ներկայացնող պատասխաններ:

Եղել են դեպքեր, երբ մարդկանց տեսանկարահանել են նրանց կամքին հակառակ՝ հարկադրաբար իջեցնելով ավտոմեքենաներից:

«Դե ինձ խոսցրել են, ոչ մի բան չեմ խոսել, ինձ դրել եմ գժի տեղ ու տենց անցել ենք, եկել մյուս յանը»:

«Ռեպարտյորը մոտենում ա քեզ, դու ոնց կարաս ինչ-որ վատ բան ասես, որովհետև իրանք են զենքերով, օրինակ՝ 10 մետր էն կողմ մարդ ա կանգնած զենքով, ով մի օր առաջ, երկու օր առաջ քեզ ռմբակոծում ա»:

«Մարդ է եղել նույնիսկ, մեքենայից իջեցրել, նկարել են»:

Արցախում մնացած մարդիկ

Հարցվողների մեծամասնությունը նշել է, որ գրեթե ամբողջ բնակչությունը լքել է Արցախը և տեղափոխվել Հայաստան: Սակայն եղել են բացառություններ՝ հիմնականում պայմանավորված առողջական խնդիրներով, սոցիալական մեկուսացմամբ կամ անձնական որոշմամբ:

Ամենատարածված տեսակետն այն է, որ մնացել են միայնակ, տարեց կամ հիվանդ մարդիկ:

«Չէր մնում ժողովուրդը: Կարող ա էն մարդիկ են մնացել, որ մենակ են, տեր չունեն»:

Հիշատակվել են Արցախում մնացած կոնկրետ անձինք.

- Գագո անունով մի տղամարդ, ով հրաժարվել է լքել տունը՝ ասելով, թե չի կարող թողնել իր տունը:
- Գիպսի Միշիկ մականունով հայտնի մի անձ, որը հետագայում հարցազրույցներ է տվել ադրբեջանական լրատվամիջոցներին և մեղադրանքներ հնչեցրել հայերի հասցեին: Նրա մասնակցությամբ տեսանյութերը հասանելի են համացանցում:
- Մարտունիում երկու անձ է մնացել. միայնակ մի կին, որը հրաժարվել է հեռանալ, և մեկ այլ անձ, ով, ըստ տեղեկությունների, հոգեկան առողջության խնդիրներ է ունեցել: Հարցվողներից մեկը հայտնել է, որ Մարտունիում մնացած այս անձանցից մեկն ինքնասպան է եղել, իսկ հուղարկավորությունը կազմակերպել է Կարմիր խաչը: Թե որքանով է վստահելի այս տեղեկությունը, դժվար է պարզել:
- Ստեփանակերտի բնակիչը հիշել է իր հարևանին՝ մոտ 60-ամյա, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդուն, որը բարեկամներ չուներ: Նաև նշել է ամուսինների մի զույգի մասին, որոնց երեխաները եկել են ՀՀ, իսկ իրենք՝ մնացել Արցախում:
- Նշվել է նաև էթնիկ ծագմամբ ռուս մի անձի մասին, ով Արցախում է մնացել:
- Ստեփանակերտից մեկ հարցվող հիշատակել է Արցախի պետական համալսարանի դասախոս մի կնոջ, ով ևս մնացել է:

Հարցվողները մատնանշել են իրենց հայտնի դեպքերը: Հնարավոր է, սակայն, որ այս անձանց մի մասը հետագայում տեղափոխվել է Հայաստան:

10. Մասնավոր գույքի կորուստները՝ Արցախի բնակչության բռնի տեղահանման հետևանքով

Արցախցիների մեծ մասը, բռնագաղթելով ՀՀ, իր ունեցած գույքի միայն չնչին մասն է կարողացել իր հետ վերցնել: Շատերն իրենց բնակավայրերը լքել են հապճեպ, առանց որևէ գույք վերցնելու՝ համոզված լինելով, որ ստեղծված իրավիճակը ժամանակավոր է: Հետ վերադառնալու հույսը սկզբնական շրջանում այնքան ուժգին է եղել, որ հարցվողների մեծ մասը կարծել է, թե տեղի ունեցածը 2016-ի կամ 2020-ի նման պատերազմական իրավիճակ է, որի ավարտից հետո իրենք վերադառնալու են: Այդ պատճառով է նաև, որ նրանց գրեթե ամբողջ շարժական և անշարժ գույքը մնացել է Ադրբեջանի վերահսկողության ներքո:

Անշարժ գույք

Հիմնական նյութական կորուստները վերաբերում են բնակարաններին, տներին և դրանց հարակից տարածքներին: Կան շատ ընտանիքներ, որ մի քանի գույք են կորցրել:

«Երեք հատ տուն ենք թողել. մեկը՝ Ստեփանակերտում, երկուսը՝ Շուշիում: Ու դեռ մի երկու ավտոտնակ էլ թողել եմ»:

«Մեր տունը 16 սենյակ ուներ, 500 քմ էր: Էդ տունն էլ թողեցինք»:

Շատ տներ եղել են ընդարձակ՝ երկհարկանի կամ եռահարկ: Ոմանք տան կորստի հետ միասին ափսոսանք են հայտնել դրանց նոր կահավորված, նորոգված վիճակի, նոր գնված գույքի համար: Բացի բնակելի տներից, արցախցիները կորցրել են նաև ավտոտնակներ, խանութներ, թոնրատներ, գոմեր, պահեստներ, ինչպիսիք հաճախ հանդիսացել են ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրը:

«Մարտունիի երիտասարդական կենտրոնի գրասենյակը թողել ենք. համակարգիչներով, պատճենահանման սարքով»:

«Սարուշենում մեծ պահեստ էի պահում, 100 տոննա ցորեն կար, որ շրջափակման ժամանակ օգտագործում էինք: Էդ էլ թողվեց»:

Տրանսպորտային միջոցներ և գյուղատնտեսական տեխնիկա

Արցախցիներից շատերը կորցրել են տրանսպորտային միջոցներ և գյուղատնտեսական տեխնիկա՝ ավտոմեքենաներ, տրակտորներ, կոմբայններ: Շատերը մի քանի մեքենա են ունեցել, որոնցից միայն մեկն են կարողացել դուրս բերել Արցախից՝ ՀՀ տեղափոխման ժամանակ: Շատ մեքենաներ դուրս չեն բերվել վառելիքի բացակայության պատճառով:

«Թողել եմ հացահատիկային կոմբայն, թրթուրավոր տրակտոր, անիվավոր մեծ տրակտոր, բեռնատար, 3 մարդատար: Էդ բոլորը մնաց»:

Տրակտորների և այլ գյուղատնտեսական տեխնիկայի կորուստը եղել է ֆինանսապես ամենածանր հարվածներից մեկը, հատկապես գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանիքների համար, որոնք այդպիսով կորցրել են իրենց ապրուստի միակ կամ գլխավոր միջոցը:

Շարժական այլ գույք, թանկարժեք իրեր և դրամական խնայողություններ

Տասնյակ հազարավոր արցախցիներ կորցրել են իրենց կահույքը, կենցաղային տեխնիկան և այլ թանկարժեք իրեր: Հարցազրույցներում հաճախ հիշատակվել են սառնարաններ, լվացքի մեքենաներ, գազօջախներ, հեռուստացույցներ, համակարգիչներ, բազմոցներ, բազկաթոռներ, աթոռներ, սեղաններ, մահճակալներ, սպասք և այլ գույք, որոնք մնացել են բնակարաններում ու տներում:

Որոշ հարցվողներ նշել են, որ թողել են նաև իրենց թանկարժեք զարդերը և խնայած գումարները, երբեմն՝ խոշոր չափերով: Դրանց կորուստը պայմանավորված է եղել խուճապային վիճակով կամ դրա պահման վայրի մոռացությամբ:

«Դրամս այլ տեղ էի պահում, չկարողացա գտնել, շփոթված դուրս եկանք»:

«Չհասցրի տունը կողպեմ, գումարն էլ մնաց ներսում»:

«Մենակ ոսկե օղը երեխուն էր մնացել: Չհասցրի վերցնել»:

«Ինձ թվացել էր՝ վերցրել ենք, հետո պարզվեց՝ ոսկին մնացել էր»:

Ոմանք վախից չեն վերցրել իրենց թանկարժեք իրերը՝ կարծելով, թե դա կասկածելի է լինելու անցակետերում ստուգման ժամանակ:

Մարտունիի մի բնակիչ նշել է, որ 10 հատ գիշերային սարք և կապի միջոց է ունեցել, որոնցից յուրաքանչյուրի արժեքը 75-ից 100 հազար դրամ էր: Ունեցել է նաև գիշերային տեսանելիության սարք՝ 5 մլն դրամ արժողությամբ: Նշված ամբողջ գույքը նա չի վերցրել իր հետ Հայաստան մեկնելիս՝ զգուշանալով ադրբեջանցիների ստուգման հնարավոր հետևանքներից:

Հողատարածքներ և այգիներ

Արցախցիները մեծածավալ գյուղատնտեսական հողեր են թողել՝ սկսած տնամերձ այգիներից մինչև հեկտարներով ցանքատարածություններ: Այս հողերը եղել են մշակված, հաճախ՝ կաթիլային ոռոգմամբ հագեցած, մշակաբույսերով հարուստ տարածքներ:

«Մենակ մեր ընկուզենու այգին՝ կաթիլայինով, մեկ հեկտար էր: 3,5 հեկտար ընդհանուր հողատարածք, 3 հեկտար էլ՝ նռան այգի»:

«Մուշմուլայի այգիներ էի տնկել Մարտունիում՝ առաջինը Արցախում: 2000 պալմայի ծառ էի տնկել՝ ամեն մեկը թանկ էր»:

Անձնական հողերից բացի, արցախցիները կորցրել են նաև վարձակալած տարածքներ, ֆերմաներ և պահեստներ:

«30 հեկտար հացահատիկային, 6 հեկտար վարելահող, պահեստ, գոմեր, ու տուն՝ Շոշ գյուղում»:

«Տուն, երկու տրակտոր, կոմբայն, 3 մեքենա, հողատարածքներ. բոլորը թողել ենք Ճանկաթաղում»:

«Ունեինք 18 հազար քմ հող, այգիները չհաշված»:

Այս հողերը և այգիները արցախցիների համար ունեցել են ոչ միայն տնտեսական, այլև մշակութային և զգայական նշանակություն՝ որպես տասնամյակների աշխատանքի ու պատմության մարմնավորում:

Կենդանիներ

Արցախցիները մեծ քանակությամբ ընտանի կենդանիներ են թողել. հավեր, բադեր, խոզեր, ոչխարներ, այծեր, այլ: Թողել են նաև խոշոր եղջերավոր անասուններ:

Շատ դեպքերում, նախքան տունը լքելը, ընտանի կենդանիներին բաց են թողել, որպեսզի բնության մեջ իրենց համար կեր հայթայթեն:

«Մարտակերտի շրջանի Մեծ Շեն գյուղում մնացել է 400-500 խոշոր եղջերավոր անասուն, այդքան էլ ոչխար, 1000 գլուխ խոզ»:

Արցախում տարածված է եղել մեղվապահությունը, և շատերն ունեցել են մեղվաընտանիքներ: Օրինակ, Մարտակերտի մի բնակիչ թողել է 60 փեթակ մեղվաընտանիք:

Բազմաթիվ ընտանիքներ ստիպված են եղել լքել իրենց պահած շներին, կատուներին:

«Կատու ունեի գյուղում, բայց չկարողացա կատվիս բերել: Ստեփանակերտից դուրս գալուց հետո գյուղ գնալ հնարավոր չեղավ»:

Այլ կորուստներ

Սննդի պաշարների մեծ մասը նույնպես մնացել է Արցախում:

«Թողել եմ 7 պարկ կարտոֆիլ»:

«Թողել եմ 5 տոննա ցորեն, 10 տոննա հաճար»:

«Նկուղում թողել եմ 6 տոննա կարտոֆիլ»:

Մի հարցող ցավով է նշել իր թողած արժեքավոր գրադարանի մասին:

«Ես ունեի շատ մեծ և արժեքավոր գրադարան, ավելի քան 1000 գիրք: Դա իմ ամբողջ կյանքի դրվածքն էր, և դա ինձ համար ամենամեծ կորուստն է»:

Վերոնշյալ կորուստների վերաբերյալ Արցախի բնակիչները ներկայացրել են համապատասխան փաստաթղթեր, լուսանկարներ և տեսանյութեր:

Թողնված գույքի մասին հետագայում ստացված տվյալներ

Որոշ հարցվողներ նշել են, որ համացանցում շրջանառվող լուսանկարներում և տեսանյութերում տեսել են իրենց տներն ու այլ գույքը:

Օրինակ՝ Խաչեն գյուղի բնակիչը նշել է, որ տեսել է իր տունը՝ կանգուն վիճակում, սակայն դռները՝ բաց: Ներքին Սզնեքից հարցվողը նշել է, որ տեսել է իր թողած փեթակները՝ տան առջև դրված: Կարմիր գյուղի բնակիչը նշել է, որ տեսել է իր ավտոտնակն՝ այրված վիճակում:

Շատ վկայություններ կան ադրբեջանցիների կողմից կատարվող միջամտությունների, ձևափոխումների մասին:

«Մեղուները, փեթակները կարծես տան առաջ են: Բայց առանձին տեղեկատվություն չկա»:

«Հենա ցույց են տալիս՝ ոնց են քանդում, տրաքում»:

«Քանդել են մեղվափեթակները և դրանց տեղում տուն են սարքել»:

Շրջանառվող տեսանյութերում հարցվողները տեսել են նաև ադրբեջանցիներին՝ իրենց թողնված գույքն օգտագործելիս կամ տեխնիկան վարելիս: Արբանյակային լուսանկարների միջոցով էլ երբեմն նկատելի է թողնված գույքի բացակայությունը:

Վարդաձոր գյուղի բնակիչը տեսել է, որ ադրբեջանցին քշում է իր ավտոմեքենան՝ ասելով՝ *«լավն ա, չէ՞, թող Երևանից տեսնեն»:* Նույն հարցվողը, համեմատելով նախկինում և վերջերս արված տեսանյութերը, նշել է, որ ադրբեջանցիները էլեկտրական լարերը կտրել և տարել են իր բնակավայրից:

Ամենախոշոր նյութական կորուստները կրել են տրակտորներ ունեցողները, որոնք արբանյակային լուսանկարների միջոցով արձանագրել են, որ իրենց թողած տրակտորներն այլևս չկան նշված վայրերում:

«Մարդ կա՝ 100 փեթակ ճանճ է (նկատի ունի՝ մեղվափեթակ – խմբ.) ունեցել: Գուգլով նայել ենք, չկա արդեն, թալանել են»:

Արցախից բերված փաստաթղթեր և անձնական իրեր

Արցախցիներից շատերն իրենց բնակավայրերից տարհանվել են առանց որևէ նախապատրաստման՝ հաճախ ընդամենը ձեռքի պայուսակով: Նրանք չեն հասցրել վերցնել անգամ կարևոր փաստաթղթեր կամ ընտանեկան լուսանկարներ: Օրինակ, մի հարցվող նշել է, որ իր անձնագիրը եղել է առանձին վայրում և այդ պատճառով այն չի հասցրել վերցնել:

«Մենք մեզ հետ վերցրել էինք 3-4 պայուսակ՝ ամենաանհրաժեշտ բաները, շորեր, մեկ էլ նկարներ: Մնացածը չենք վերցրել, որովհետև մեր ավտոն չէր, տեղ չկար»:

«Նույնիսկ իմ անձնագիրը, քանի որ էն փաստաթղթերի մեջ չէր, որ կինս հանեց տնից, ուրիշ տեղ էր, ես ստիպված եղա՝ երբ հասա ՀՀ, այստեղ վերականգնել իմ անձնագիրս... Նույնիսկ ավտոմեքենայիս մեջ էր մնացել տեխ. անձնագիրը, վարորդական վկայականը, էդ ամբողջը մնացել ա ընդեղ»:

«Սունդուկի մեջ լցրել եմ մեր ֆոտոները, երեխաների դիսկերը, բացիկները, որ երեխաները պատրաստում էին դպրոցում, մանկապարտեզում, առաջին ատամը, ծննդատան թղթերը երեխայի, իմ վերջին զանգի ֆարտուկը»:

«Երեխաների հուլունքագործության գործերը, փայտյա խաչքարերը, պատվոգրերն եմ վերցրել»:

Իվանյան գյուղի մի բնակիչ բերել է անձնագրերն ու ծննդականները, սակայն մեքենայի փաստաթղթերը չի հասցրել վերցնել: Ասկերանից մի հարցվող չի վերցրել իր վիրահատությունը հավաստող փաստաթղթերը, ինչի պատճառով միայն ունեցած լուսանկարի միջոցով է ՀՀ-ում կարողացել վերականգնել իր հաշմանդամության կարգը:

Որոշ հարցվողներ էլ նախապատրաստված էին տարհանմանը:

«Սկեսուրս ասում էր՝ փաստաթղթերը առաջնային պահի, որ անպայման վերցնես: Երբ կրակոցները սկսվեցին, երկու օր պադվալում ենք եղել: Մի ակնթարթ բարձրացա տուն, շուտ փաստաթղթերը վերցնում եմ»:

«Մենք 2016 թվից հետո մի հատ պայուսակ ունեինք, միշտ էդ պայուսակում մեր փաստաթղթերը կար ու առաջին անհրաժեշտության շորերը: Դե, իհարկե, ամեն տարի թարմացնում էինք: Մեկ ա, մենք գիտեինք, որ էդ օրը գալու ա»:

Որոշ հարցվողներ նշել են, որ փաստաթղթերը կամ հիշողություններ պարունակող նկարները միտումնավոր այրել կամ դեն են նետել՝ չբախվելու համար հնարավոր վտանգների՝ անցակետերում ադրբեջանական ստուգումների ժամանակ:

«Դե ասում էին, որ եղել են դեպքեր, որ որոշակի ինչ-որ իրեր հայտնաբերելով՝ նրանց կանգնեցրին, ժամեր պահեցին... Դրանից վախենալով, որ կարող ա ցանկացած տղամարդու առևանգեն: Եվ էդ առումով, անվտանգությունից ելնելով, մարդիկ ոչ մի բան իրենց հետ չէին վերցրել»:

Ադրբեջանական ստուգումների արդյունքում եղել են իրերի բռնագրավման բացառիկ դեպքեր: Հիմնականում թիրախավորվել են խորհրդանշական կամ արժեքավոր իրերը: Օրինակ՝ Հագարի կամրջի անցակետում ադրբեջանցիները վերցրել են նարդի՝ այն պատճառաբանությամբ, որ դրա վրա պատկերված էր Արցախի խորհրդանիշը՝ հանրահայտ «Մենք ենք, մեր սարերը» հուշարձան-կոթողը (կամ՝ «Տատիկ - պապիկի արձանը»):

Վերցվել են նաև ոսկյա զարդեր, մատանի, շղթա: Մեկ այլ դեպքում՝ ոչխար կամ այծ: Մարտունուց մեկնող մի հարցվող նշել է, որ իրենց գինին ու օղին վերցրել են ադրբեջանցիները:

11. Արցախցիների հետագա կյանքը ՀՀ-ում

Արցախից բռնի տեղահանված բնակչության տեղակայումն ու առաջնային աջակցությունը ՀՀ-ում

Հայաստան հասնելուն պես արցախցիների առաջին կանգառը եղել է Սյունիքի մարզի Կոռնիձոր գյուղը, որտեղ նրանց տրամադրել են սնունդ, ջուր, ավտոմեքենաների համար՝ 10 լիտր բենզին և այլ անհրաժեշտ պարագաներ:

Հայաստան մտնող բնակչության գրանցման երկու կարևոր կենտրոններն են եղել Գորիսը և Վայքը: Գորիսի հարյուրավոր բնակիչներ (այդ թվում՝ անչափահասներ) կամավոր աջակցել են տեղահանվածներին:

«Որ հասել ենք Գորիս, իմ ժողովրդին ասել եմ՝ ամեն մեկը արդեն ձեր գլխի ճարը տեսե՛ք»:

«Եթե ինչ-որ մեկը կարո՞ղ է բողոքել Գորիսի ժողովրդից... երեխաները, իրենց դասերը թողած, օգնում էին. դա ոչ մեկ չի կարող բողոքել»:

Տեղական ինքնակառավարման մարմիններն աջակցել են իրենց հնարավորությունների սահմաններում՝ տրամադրելով կենցաղային պարագաներ և օժանդակություն ցուցաբերելով ժամանակավոր բնակության վայրեր գտնելու հարցում:

Առաջնային օգնության բաշխումն, ըստ հարցվողների, սկզբնական շրջանում եղել է անհավասար: Այն բավարար չէր երեխաների հագուստի, սննդի ու այլ կարիքների համար: Դրամական աջակցության ստացումը բարդացել է, քանի որ շատերը ստիպված եղել են գնալ մայրաքաղաք՝ այն ստանալու համար:

Սկզբնական շրջանում արցախցիներից վարձավճարներ չեն գանձվել, սակայն ժամանակի ընթացքում մեծամասնությունը սկսել է վճարել տան վարձը: Բազմաթիվ ընտանիքներ օթևան են գտել ազգականների, ծանոթների և նույնիսկ անծանոթ հյուրընկալների տներում:

Սկզբնական շրջանում շատ էին նաև հյուրանոցներում ու հյուրատներում տեղակայված ընտանիքները: Բազմաթիվ են եղել նաև մշակույթի պալատներում, թատրոններում, դպրոցներում, մանկապարտեզներում և հանրային ու համայնքային այլ հաստատություններում տեղակայվելու դեպքերը:

Արցախցիներին հյուրընկալող տներում ու կացարաններում պայմանները հաճախ անբավարար են եղել. փոքր մակերես, մեկ սենյակում՝ մի քանի մարդ, պատերի ճաքեր, ջեռուցման բացակայություն կամ պակաս, զուգարանների ու բաղնիքների վատ պայմաններ: Հաճախակի են եղել հատակին քնելու դեպքերը՝ մահճակալների և անկողնային պարագաների բացակայության պատճառով:

«Մեր բալկոնի չափ ա, բայց ի՞նչ անենք»:

«Էդ հյուրանոցում բաղնիքի ջուրը չկար, սառն էր: Դատարկ սենյակներ կար, չէր ուզում տար, սեփականատեր ա»:

Մինչ օրս ակտուալ է բնակության վայրի հաճախակի փոփոխությունը (վարձավճարների թանկացման կամ այլ պատճառներով):

«Անընդհատ տուն ենք փոխում. հեսա խառն ենք հլը էստեղ»:

Աշխատանք գտնելու խնդիրները

Տեղահանված արցախցիները բախվել են աշխատանք գտնելու դժվարությունների՝ մասնագիտական անհամապատասխանության և նախկին փորձին համապատասխանող աշխատատեղերի բացակայության, ֆիզիկական առողջության խնդիրների, տարիքային սահմանափակումների (հատկապես տարեցների դեպքում) և աշխատանքային շուկայի սահմանափակ հնարավորությունների պատճառով: Հատկապես բարդ է եղել զբաղվածություն գտնել գյուղական համայնքներում:

«Մեր գյուղում գործ էլ չկա: Մեր գյուղից էստեղ մարդ էլ չկա»:

«Գործ չկա. գնում եմ, ասում են՝ գործ չկա, փողի պրոբլեմ ա»:

«Շատ ենք ցանկանում աշխատել, բայց չկա: Մեր վիճակում չենք ապրել, Ղարաբաղում միշտ աշխատել ենք»:

«Ընդեղ ածուխի գործարանում եմ աշխատել, նռան դաշտում: Ըստեղ ո՛չ ածուխի գործարան կա, ո՛չ նռան դաշտ»:

«Դիմել եմ կողքի դպրոցը. լեզվի մասնագետի տեղ չի եղել»:

«Գնում ես քաղաքապետարան. ախպե՛ր, դե ինչ անենք, որտեղի՞ց գործ ճարենք»:

Ոմանք մասնագիտական գործունեությունը շարունակելու դժվարություն ունեն՝ գործիքների բացակայության կամ անբավարար պայմանների պատճառով:

«Կուզեմ վարսավիրանոցում աշխատեմ, բայց գործիքներս մնացել են Արցախում, չունեմ էս պահին»:

Արցախցիները հաճախ են վերապատրաստումներ անցնում՝ նոր մասնագիտություններ յուրացնելու համար: Դրանք հիմնականում ներառում են կարուձևը, վարսավիրությունը, խոհարարությունը, SS ոլորտի մասնագիտությունները:

«Աղջիկս ուզում ա մտնի կարի տեղը, սովորում ա արտելում, ես՝ տունը»:

«Մտածում եմ՝ միգուցե՞ աշխատել Թումոյում կամ այլ ոլորտում: Այս պահին դասընթացների եմ հաճախում»:

«Կուզեմ խոհարարություն սովորեմ»:

«Կարի մեքենայով աշխատել եմ սովորել»:

Երբեմն նախընթաց աշխատանքային փորձն ու կարողությունները նպաստել են արագ աշխատանք գտնելուն:

«Աղջիկս, դե, «Արցախբանկում» աշխատելուց ա եղել: Եկել ա, անմիջապես էստեղ ա անցել աշխատանքի»:

Գյուղերում տեղակայված անձինք սկսել են գյուղատնտեսությամբ զբաղվել: Հետաքրքիր է, որ սկզբնական շրջանում քաղաքային համայնքներում տեղակայված մարդիկ ևս ցանկություն են հայտնել տեղափոխվելու գյուղ՝ այնտեղ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար:

Որոշ արցախցիներ ստեղծարար մոտեցում են ցուցաբերել. մեկը նվիրատվությամբ գորգի հաստոց է ստացել՝ ավանդական գորգագործություն ուսուցանելու համար, մյուսը մտածում է մեղվաբուծությամբ զբաղվելու մասին:

«Մի քանի հատ փեթակ վերցնել, միգուցե հովանավոր դառնա պետությունը»:

Նյութական վիճակը

Աշխատանք չունենալն ուղղակիորեն ազդում է արցախցիների նյութական վիճակի վրա: Շատերի համար ապրուստի միակ կամ հիմնական աղբյուրը պետության տրամադրած հիսուն հազար դրամ աջակցությունն է՝ յուրաքանչյուր անձի հաշվով: Այդ գումարի մեծ մասն ուղղվում է բնակարանների վարձավճարներին և կոմունալ ծախսերին: Պետական աջակցությունից ընտանիքների կախվածությունն ահռելի է:

«Ոչ մեկը չի աշխատում, ապրում ենք 40 + 10 (նկատի ունի՝ պետական աջակցությունը՝ 50.000 ՀՀ դրամի չափով – խմբ.): Չենք պատկերացնում՝ մեր վաղվա վիճակը ոնց ա լինելու, եթե սա կտրեն»:

Տեխնիկական կամ բյուրոկրատական խոչընդոտները երբեմն դժվարացնում են կենսաթոշակների ու նպաստների ստացումը: Օրինակ, սոցիալական ապահովության կառույցները 90 տարեկան թոշակառուից պահանջել են անձամբ ներկայանալ, ինչն անհնար է եղել հաշմանդամության պատճառով:

Նպաստ չտրամադրելու տարածված պատճառներից է անապահովության գնահատման չափանիշների ուղղակի կիրառությունը (առանց արցախցիների իրավիճակի հանդեպ տարբերակված մոտեցման):

«Ասում են՝ ավտո ունես՝ եկամուտ ա բերում: Թե ինչ եկամուտ ա բերում՝ չգիտեմ»:

Նյութական ծանր դրությունն արտահայտվում է նաև կենցաղային, գույքային պայմաններում:

«Մի աթոռ չկա, որ նստինք»:

Տեղահանված բնակչության հոգեբանական ու առողջական վիճակը

Սկզբնական շրջանում արցախցիների հոգեբանական ու առողջական վիճակը շատ ծանր է եղել: Պատերազմական գործողությունների, շրջափակման և տեղահանման ճանապարհի դժվարությունների պատճառով հիվանդությունների աճ է արձանագրվել՝ հատկապես շնչառական ու սրտային: Անծանոթ միջավայրն ու անապահովության զգացումը սրել են հոգեբանական խնդիրները:

«Շատ ծանր է եղել հոգեբանորեն, գալիս ես մի անծանոթ տեղ՝ ոչ տուն ունես, ոչ տեղ, չգիտես՝ որտեղ ես մնալու»:

«Էս փոքրս թոքաբորբ շատ ա ընկնում խոնավության պատճառով»:

«Երևի լարվածությունից էր, որ տաք չէր գալիս: Ուտելիքն էլ կար, բայց չէինք տաքանում»:

Շատերը նշում են, որ հաղթահարել են սթրեսը, բայց ոչ ամբողջությամբ:

«Հլը ուշքի չեն գալիս»:

«Կամաց-կամաց ընտելանում ենք, հարմարվում ենք կորստին»:

Սթրեսի և կորստի զգացումը հաճախ դրսևորվում է լացով կամ լռությամբ:

«Ճիշտ ա, ժպտում ենք, ծիծաղում ենք, բայց հոգու ցավը, մեկ ա, չի անցնում»:

«Ցերեկով բոլորս էլ լավ ենք, գիշերը ամեն մեկը իրա բարձին, իրա մտքերով, իրա հուշերով»:

«Անընդհատ սիրտս լցվում ա, ուզում ես լացես»:

Ծանր է մեծահասակների հոգեվիճակը և հատկապես այն անձանց, որոնք տասնամյակների ընթացքում՝ նախքան 2020 թ. պատերազմը, կոնֆլիկտի պատճառով մարդկային ու գույքային կորուստներ են կրել:

«Մարդ որքա՞ն կարելի ա զրոյից սկսի. ո՞ւմ ես ինչ վատ բան արել, որ չեն թողում քո հայրենիքում ապրես»:

Շատերը նշում են հիշողությունների մշտական և ճնշող ներկայությունը:
Հաճախ հանդիպող ցավալի թեմաներից է հարազատների գերեզմաններին այցելելու անհնարինությունը:

«Հոգեպես շատ վատ եմ զգում, որ մորս, հորս գերեզման չեմ կարում գնամ»:

«Հեռախոսը թերթում ես՝ սաղ հիշում ես գյուղարանքները: Զոհվածներին թողել ենք, եկել»:

Կորստի ու խղճի խայթը տանջում է հատկապես նրանց, որոնք ինչ-որ կերպ իրենց մեղավոր են զգում:

«Իրանք մահացան, ինքը մնաց. իրան մեղավոր ա զգում»:

Տարածված է անքուն գիշերների, լարված առօրյայի և հոգեկան տագնապների նկարագրությունը:

«Առավոտը լույսը բացվում է՝ չեմ իմանում. վազե՞մ հոգեբանի հետևից, երեխուս հա՞ց սարքեմ, ամուսնուս տանե՞մ հիվանդանոց... շատ լարված և վազքի մեջ»:

Ոմանք վշտացած են Հայաստանում տեղի բնակչության անզգույշ և վիրավորական վերաբերմունքից:

«Ղարաբաղը ծախե՛լ եք, եկել եք, մեր շլինքներին նստել եք»:

«Եթե ինքը ունի հայրենազուրկի պիտակը, դա ամենավատ անունն ա»:

«Ես չեմ ուզում՝ իրենք մտնեն էդ հոգեվիճակի մեջ... ես ուզում եմ ընդամենը իրականությունը հասկանան»:

Առկա է նաև վախ՝ կրկնակի զոհականացումից և նոր պատերազմից:

«Եթե գան էստեղ, նույնը անեն՝ հիմա ո՞ւր էթանք»:

Արցախցիները Հայաստանում իրենց կտրված են զգում նախկին համայնքային կյանքից, ապրում են սփռված ու մեկուսացած: Արցախի հանդեպ կարոտը վառ ու սուր զգացողություն է բոլոր հարցվողների մոտ:

«Սաղն էլ հիշողության գրկում են: Սաղ հիշում են, չեն կարում մոռանան: Սաղն էլ ուզում են հետ գնալ իրանց տուն»:

«Հիշում եմ ամեն օր, ամեն պահ՝ լուսանկարով կամ մի բանով»:

Կարոտը հատկապես ուժեղ է տարեցների և մայրերի մոտ:

«Սեղան ա գցում, չոր գրեչկա ենք ուտում, ու ասում ա՝ մեր տունը թթուները դրած, կոմպոտները՝ դրած, հիմա փող չունենք, որ սոկ առնենք՝ խմենք... Ու լացում ա»:

Երեխաները շարունակ հարցնում են տուն վերադառնալու մասին:

«Աղջիկս լացում ա, դասարանցիներին ա հիշում»:

«Մամա՛, երանի մեր տանը լինենք, էս սաղ մեր տանը լինի, ուտենք»:

Երեխաների հոգեվիճակը

Արցախցի ծնողները նշում են, որ երեխաներն աստիճանաբար հաղթահարում են սթրեսը, բայց ոչ լիարժեքորեն: Բազմաթիվ են դեպքերը, երբ երեխաները շարունակում են լարված և վախեցած լինել:

«Երեխաս ագրեսիվ ա՝ մեկ լացում ա, մեկ ծիծաղում»:

«Ձեն, չխկոց լսում ա՝ թռնում ա»:

«Կրակում են՝ վախի մեջ ա»:

«Էն փոքրս երազից թռնում ա՝ ասում ա. թուրքերը մտան»:

«Երեխաները դռները փակում են, ասում են՝ փակե՞լ եք»:

Ծնողները փորձում են աջակցել երեխաներին հոգեբանական ծառայությունների միջոցով:

«Աղջիկս դաշնամուրի ա գնում, բայց խնդրել եմ՝ հոգեբանն էլ հետը աշխատի»:

«Մեծ երեխուս տարել եմ հոգեբանի. շատ էր վախենում, անկանոն շարժումներ էր անում»:

Վերադարձի պայմանները

Արցախցիների ճնշող մեծամասնությունը ցանկանում է վերադառնալ իր հայրենիք՝ առաջին իսկ հնարավորության դեպքում:

«Թեկուզ որ ասեն՝ պայմանները կան անվտանգային, ես մի ժամից էլ կգնամ Արցախ»:

«Եթե Արցախի վերադարձման հարցը երկար ժամանակ պահանջվի, ես մնալու եմ ըստեղ... Բայց ես հյուր եմ զգում, լավ չեմ զգում»:

Փոքրաթիվ անձինք չեն ցանկանում վերադառնալ՝ անձնական կորստի կամ պատերազմի պատճառած տառապանքի բերումով:

«Չի ուզում գնալ. երեք պատերազմ է տեսել արդեն (նշել է մայրն՝ իր դստեր մասին – խմբ.)»:

«Կցանկանայի վերադառնալ, եթե ամուսինս կորած չլիներ»:

Վերադարձի պայմանների կամ նախադրյալների թվում նշվել են.

1. Անվտանգության ապահովում՝ առանց ադրբեջանցիների ներկայության:

Հարցվողների գերակշիռ մասը նշել է, որ իրենք չեն վերադառնա, եթե Արցախում ադրբեջանցի լինի: Հարցվողների համոզմամբ՝ ադրբեջանցիների հետ համատեղ կյանքը անհնար է:

«Սահմանները պիտի հեռու լինեն՝ 15-20 կմ»:

«Եթե այնտեղ թուրք լինի, դա սպառնալիք է մեզ համար»:

2. Անվտանգություն ապահովող խաղաղապահների առկայություն:

Ոմանք հույս են կապում միջազգային խաղաղապահների հետ՝ Կոսովոյի մոդելով:

«Եթե միջազգային երաշխիքներ լինեն, միջազգային խաղաղապահ ուժեր տեղակայվեն»:

«Ուրիշ խաղաղապահներ լինի, որ վստահես՝ եթե վաղը մի բան լինի, քեզ պաշտպանեն»:

Սակայն մի մասը լիովին մերժում է խաղաղապահության գաղափարը:

«Սուտ են բոլորը՝ թե՛ խաղաղապահ, թե՛ ՄԱԿ-ի զորքեր, թե՛ Ռուսաստանի զորքեր»:

Կան մարդիկ, որոնք դեռ հույսեր ունեն ռուսական ներկայության հետ:

«Ռուսի անձնագրով վերադառնալու ենք Ղարաբաղ»:

3. Ինքնիշխանություն և ռազմական պաշտպանություն:

Շատերն ընդգծում են, որ վերադարձը հնարավոր է միայն Արցախի ինքնիշխանության և բանակի վերականգնման դեպքում: Քիչ թվով մարդիկ են կողմ Արցախը ՀՀ-ի կազմում տեսնելուն:

Վերադարձի տնտեսական և սոցիալական երաշխիքները մեծամասնության համար երկրորդական են:

«Չորս պատը լինի, մենք կգնանք, կվերանորոգենք, ապրենք, շենացնենք մեր տունը, մեր գյուղը»:

«Էնքան որ էդ սկզբնական շրջանում հաց-մաց լինի՝ մնացածը մենք կանենք»:

«Լինի դատարկ հող՝ ես նույն օրը հետ կվերադառնամ: Ոչ մի տնտեսական երաշխիք չեմ ուզում»:

Ապագայի մշուշոտ հեռանկարները

Ապագան արցախցիների համար մշուշապատ է՝ ուղեկցված անորոշությամբ և հոգեկան ճնշմամբ:

«Չգիտեմ՝ որտեղ եմ ապրելու... ի՞նչ տուն 3 միլիոնով (նկատի ունի՝ պետության տրամադրած վարկային աջակցությունը – խմբ.)»:

«Սաղ գիշեր չեմ քնում. ի՞նչ պիտի դառնանք, ո՞ւր պիտի գնանք»:

Սակայն որոշ արցախցիներ փորձում են ինքնակազմակերպվել և գործունեություն ծավալել ՀՀ-ում: Մարտունի քաղաքի մի բնակիչ նշել է.

«Ուզում եմ հավաքագրեմ ամբողջ շրջանի ժողովրդին, մի բան բացեմ քաղաքապետարանի կարգի... Որ կփորձի համախմբի Մարտունու ժողովրդին»:

Նույն հարցվողը նշել է, որ պատրաստվում է մասնակցել միջազգային ֆորումի՝ իր համայնքի խնդիրները բարձրաձայնելու համար:

Արցախցիների մեծ մասը մոտակա մեկ-երկու տարվա համար որևէ հստակ պլան չունի: Ապագայի ծրագրեր կազմելը դժվար է՝ պայմանավորված անկայունությամբ և անորոշությամբ:

«Էնքան բան ենք տեսել, որ չենք կարող ապագայի հետ պլաններ կապել, որովհետև չգիտենք՝ մեր հաջորդ օրը ոնց ա լինելու»:

«Հլը ոչ մի բան չես ուզում պլանավորես: Էնքան որ օրը աշխատում ես, օրը՝ ուտում»:

«Օրով ապրում ենք, նույնիսկ չենք կարողանում մեկ քայլ առաջ կատարել»:

«Եթե տարածք լինի, կարելի ա անասուն, բան ստեղծել... Բայց ինչի՞ համար: Հանուն ինչի՞»:

Հուսահատության պատկերը խորացնում է նաև անվստահությունը ՀՀ իշխանությունների հանդեպ:

«Ոչ մի պլան. ի՞նչ պլան: Էրեգի լսել եմ՝ 4 գյուղն են տալիս...»:

Շատերի համար առաջնային նպատակ է սեփական տանիք ունենալը:

«Որ մի տուն ունենանք. դա է մեծ խնդիրը»:

«Բնություն եմ սիրում, Տավուշի, Լոռվա մարզերը: Երևի էնտեղ ստացվի տուն պատրաստել»:

«Տունը նեղվածք ա, խոնավ ա: Մենակ մի տուն լինի»:

«Եթե լինի բնակարանային ապահովման աջակցություն, մարդիկ կմնան մեր երկրում էլի, մինչև հետագա Ղարաբաղի հարցը լուծում ստանա»:

Որոշ հարցվողներ փորձում են նորից սկսել կյանքը՝ նույնիսկ ցավալի կորուստների ֆոնին: Հարցվողներից մեկը պատմել է, որ ամուսնու անհետ կորելուց հետո որոշել է շարունակել ընտանիքը:

«Մենք հիվանդանոցում սաղմիկներ ունեինք. երեկ գնացել եմ, երկու հատը տեղադրել են... իրա արյունն ա, հենց ամուսնու արյունն ա, որ ինքը կգա, դրանով կուրախանա»:

Արտագաղթի տրամադրությունները

Չնայած արցախցիների մեծ մասը ցանկանում է մնալ ՀՀ-ում, որոշները մտածում են արտագաղթի մասին՝ կրկին պայմանավորված նյութական պատճառներով:

«Հեսա որ եղանակները լավանան, երևի էստեղից դուրս գան, գնան...»:

«Սաղս էլ ուզում ենք մնալ Հայաստանում, բայց եթե նյութական միջոցներ չլինեն, պիտի գնանք էնտեղ»:

«Որ հնարավորություն լինի, ինչի՞ չէ՝ հա՛»:

«Պլաններում Հայաստանից դուրս գալ չկա: Բայց դե, եթե ավելի լավ պայմաններ լինեն այլ երկրում...»:

«Աղջիկս 12-րդ դասարան է: Եթե ավարտի, ընդունվի իրա ուզած տեղերը, երևի չենք մնա էստեղ: Կտեղափոխվենք ամուսնուս, տղայիս մոտ՝ Ռուսաստան»:

«Տղաս ու ամուսինս Ռուսաստան են գնացել. տեսնեն՝ կարան ինչ-որ գործ գտնեն»:

Եզրահանգումներ

1. Արցախի բնակչության կյանքը շրջափակման պայմաններում

2022 թվականի դեկտեմբերից Ադրբեջանի կողմից սկսված շրջափակման արդյունքում Արցախի հայությունը բախվել է բազմաթիվ դժվարությունների, որոնք գնալով սրվել են 2023 թվականի մայիս-հունիս ամիսներին: Արցախում ստեղծվել է համատարած հումանիտար ճգնաժամ, որն ընդգրկել է կյանքի բոլոր ոլորտները:

Սննդի, էլեկտրաէներգիայի, ջեռուցման, կապի, վառելիքի, տրանսպորտի, բժշկական օգնության և դեղորայքի սահմանափակումները հատկապես սուր են եղել, ինչը հանգեցրել է մարդկանց հոգեբանական սթրեսի, թերսնման և սովի, անբավարար ջեռուցման, առողջապահական և կրթական իրավունքների ոտնահարման, արտաքին աշխարհի հետ կապի էական սահմանափակման:

Շրջափակման ընթացքում բնակչությունը բախվել է հոգեբանական ծանր ճնշումների, որոնք պայմանավորված էին կյանքի անվտանգության և ապագայի անորոշության վախով: Այս ժամանակահատվածում մարդիկ ստիպված են եղել հարմարվել ծայրահեղ պայմաններին, որոնք հաճախ հիշեցնում էին գոյատևման պայքար: Մարդիկ կիրառել են ինքնօգնության, փոխօգնության և դիմադրողականության տարբեր ձևեր, սակայն ընդհանուր տրամադրությունը բնորոշվել է անորոշությամբ և հուսահատությամբ:

Այս փաստերը վկայում են Ադրբեջանի կողմից նպատակադիր և համակարգված քաղաքականության մասին, որն ուղղված էր արցախահայության ֆիզիկական և հոգեբանական հյուծմանը և կենսապահովման նվազագույն պայմանները վերացնելով՝ մշտական բնակչության էթնիկ զտմանը:

2. Անվտանգային միջավայրը շրջափակման պայմաններում

Արցախի բնակչության կյանքը շրջափակման պայմաններում բնութագրվում էր ծայրահեղ դժվար պայմաններով, որոնք ներառում էին ֆիզիկական անվտանգության մշտական սպառնալիքը, հոգեբանական ծանր ճնշումը և հիմնական կենսամիջոցների սուր պակասը: Բնակիչները գտնվում էին անընդհատ լարվածության մեջ՝ առանց սեփական ապագայի վերաբերյալ հստակ պատկերացման:

Սահմանամերձ գյուղերում իրավիճակն ավելի ծանր էր, քանի որ բնակիչներն անմիջական վտանգի ներքո էին գտնվում՝ ենթարկվելով կրակոցների, սպառնալիքների և բռնության այլ գործողությունների: Ադրբեջանական կողմի կիրառած հոգեբանական ճնշման մեթոդները՝ սկսած սպառնալիքներից՝ մինչև կրակոցները, նպաստում էին բնակչության մեջ վախի և հուսահատության զգացողության աճին:

Ռուս խաղաղապահների գործունեությունը չէր կարողանում լիովին ապահովել բնակչության անվտանգությունը, ինչը հանգեցնում էր լրացուցիչ դժգոհությունների: Արցախի իշխանությունները ևս բախվում էին բնակչության՝ անգործություն ցուցաբերելու հարցում մեղադրանքներին:

Այս բոլոր գործոնները բնակչության մեծ մասի համար անհնարին էին դարձնում նորմալ կենսագործունեությունն Արցախում, ինչն էլ ի վերջո հանգեցրեց զանգվածային և բռնի տեղահանության:

3. 2023 թ. սեպտեմբերի 19-ի հարձակման նախապատրաստումը և մեկնարկը

Հարցվողներից ստացված վկայությունները հստակ ցույց են տալիս, որ 2023 թ. սեպտեմբերի 19-ի ադրբեջանական հարձակումն ամենևին պատահական ու ինքնաբուխ մի գործողություն չէր, այլ՝ հստակ պլանավորված ու լավ կազմակերպված ռազմական գործողությունների մի ամբողջական համալիր: Այն Ադրբեջանի միտումնավոր քաղաքականության արդյունքն էր՝ ուղղված Արցախի հայաթափմանը:

Երկարատև շրջափակումը, ադրբեջանական կողմի սադրիչ գործողությունները, հոգեբանական ներազդեցության միջոցների կիրառումը, հրադադարի կանոնավոր խախտումները և մարտական «համար մեկ»-ի հաճախակի հայտարարումը լարված իրավիճակ էին ստեղծում տարածաշրջանում, ինչն էլ հուշում էր հնարավոր ռազմական գործողությունների մասին: Հատկապես սահմանամերձ գյուղերի բնակիչները, զգալով ստեղծված իրավիճակի ողջ ծանրությունը, կանխատեսում էին վտանգը:

Հարձակումը ոչ միայն լուրջ վնաս է հասցրել Արցախին, այլև խորը հուզական տրավմա է առաջացրել հատկապես նրանց շրջանում, ովքեր պատրաստ չեն եղել իրադարձությունների նման զարգացմանը:

Ռուսաստանցի խաղաղապահների՝ ադրբեջանական ուժերի հետ փոխգործակցության մասին վկայությունները հարցեր են առաջացնում նրանց արդյունավետության և հակամարտության սրումը կանխելու անգործության վերաբերյալ: Խաղաղապահների հակասական գործողությունները կասկածի տակ են դրել նրանց չեզոքությունը և հանձնառու խնդիրները կատարելու ունակությունը:

4. Քաղաքացիական բնակչության պատսպարման պայմանները՝ սեպտեմբերի 19-ի հարձակման ընթացքում

Սեպտեմբերի 19-ի հարձակման ընթացքում Արցախի բնակչությունը տարբեր ձևերով է փորձել ապահովել իր անվտանգությունը՝ ապաստանելով նկուղներում, դպրոցներում, անտառներում և այլ վայրերում: Ապաստարանների մեծ մասը ոչ բավարար և ոչ պատշաճ պայմաններ է ունեցել. խոնավություն, ցուրտ, սակավ հարմարություններ, սանհանգույցի բացակայություն: Ապաստարանների մակերեսները ևս խիստ անբավարար են եղել՝ օրեր շարունակ մի քանի տասնյակ մարդու կացության համար:

Ապաստարանների անբավարար կենցաղային և անվտանգային պայմանների պատճառով, ինչպես նաև՝ սնունդ հայթայթելու համար, մարդիկ ստիպված են եղել պարբերաբար փոխել պատսպարման վայրերը՝ տեղափոխության ընթացքում անվտանգային ռիսկերի ենթարկվելով:

Սննդի ու դեղորայքի պակասը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և կապի բացակայությունը հավելել են դժվարությունները: Մեծամասնությունը հոգեբանական ծանր ապրումներ է ունեցել, հատկապես՝ երեխաները և ընտանիքում զինծառայողներ ունեցող անձինք:

Համատարած է եղել ադրբեջանցիների կողմից բռնության և խոշտանգումների ենթարկվելու վախը:

Չնայած դժվարություններին, մարդիկ փոխօգնություն և համախմբվածություն են ցուցաբերել:

5. Քաղաքացիական բնակչության տարհանումը 2023 թ. սեպտեմբերին

Քաղաքացիական խաղաղ բնակչության՝ ապաստարանները լքելու գործընթացը լի է եղել մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող ռիսկերով: Տարբեր բնակավայրերում այն ընթացել է տարբեր ձևերով ու արագությամբ:

Մշտական բնակության վայրերից տարհանման գործընթացը ևս միասնական ու հստակ մոտեցմամբ չի ընթացել, ուղեկցվել է կազմակերպչական դժվարություններով: Բնակիչները ստիպված են եղել ինքնուրույն հաղթահարել տրանսպորտի ու վառելիքի բացակայության, տևական ճանապարհորդության և ծանր հուզական վիճակների խնդիրները:

Տարհանման ընթացքում գրեթե ոչ ոք չի ունեցել անվտանգության և ապահովության տարրական զգացում: Տարհանման ճանապարհների նկատմամբ վերահսկողություն հաստատած ադրբեջանական զինված ուժերը ֆիզիկական և հոգեբանական սպառնալիքներ են ներկայացրել խաղաղ բնակչությանը: Իրականացվել են մեքենաների խուզարկություններ, հայերի արժանապատվությունը նսեմացնող կոչեր են հնչեցվել: Ադրբեջանցի զինծառայողները չեն թաքցրել իրենց գլխավոր նպատակը. այն է՝ արցախցիները հնարավորինս արագ լքեն իրենց բնակավայրերն ու հետագայում նաև՝ Արցախը: Դրա համար նրանք երբեմն նույնիսկ «աջակցել են» տարհանվողներին:

Տարհանվող խաղաղ բնակչությունը ենթարկվել է ուղիղ հարձակումների (հրաձգության եղանակով) ու հրետակոծության: Բժշկական օգնությունը գործնականում բացակայել է:

Մշտական բնակության վայրերից տարհանված և մայրաքաղաքում ու մոտակա օդանավակայանում տեղակայված բնակչության կացության պայմանները եղել են խիստ անբավարար ու վտանգավոր առողջության համար: Փակ շինություններում մարդկանց խտությունը գերազանցել է հնարավոր բոլոր սահմանաչափերը, սննդի և ջրի բաշխումը եղել է թերի, վատ կազմակերպված: Մարդիկ տառապել են խոնավությունից ու սանիտարահիգիենիկ վատ պայմաններից: Ստեփանակերտի օդանավակայանում ապաստանած մարդկանց մի մասը ստիպված է եղել բաց երկնքի տակ գիշերել:

6. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքները կյանքի և առողջության համար

2023 թ. սեպտեմբերի 19-ին մեկնարկած Ադրբեջանի ռազմական հարձակման հետևանքով Արցախի տարածքը ենթարկվեց աննախադեպ ինտենսիվությամբ ռմբակոծությունների: Ի

տարբերություն 2020 թ. պատերազմի, այս անգամ հարվածներն ավելի կենտրոնացված էին և ինտենսիվ: Դրա հետևանքով Արցախի քաղաքացիական բնակչությունը բախվել է կյանքի և առողջության նկատմամբ բազմաթիվ սպառնալիքների: Զոհեր ու վիրավորներ են եղել թե՛ անմիջական ռմբակոծություններից, թե՛ կանխամտածված բռնություններից, իսկ բժշկական օգնության հասանելիությունը եղել է խիստ սահմանափակ:

Քաղաքացիական զոհեր արձանագրվել են հիմնականում ռմբակոծությունների հետևանքով: Դրանց մի մասը տեղի է ունեցել մարդկանց՝ մթերք բերելու, ապաստարան գնալու կամ պարզապես տնից դուրս գալու ժամանակ: Ականատեսների վկայություններով՝ զոհերի թվում են եղել տարեցներ, կանայք և երեխաներ:

Ադրբեջանի զինված ուժերի կողմից նպատակադիր սպանություններ նույնպես արձանագրվել են: Այս դեպքերը ներառում են գլխատում, հրազենային և սուր գործիքներով սպանություններ, ինչպես նաև՝ բռնաբարություն ու մարմնի խեղումներ՝ հանցագործությունների մի շարք, որոնք միջազգային իրավունքի տեսանկյունից կարող են որակվել որպես ռազմական հանցագործություններ:

Քաղաքացիական անձանց վնասվածքներ են եղել ինչպես մարտական գործողությունների ուղղակի հետևանքով՝ արկերի բեկորներից վիրավորումների արդյունքում, այնպես էլ՝ անուղղակի այլ գործոնների ազդեցությամբ (օրինակ, խուճապային իրավիճակում ինքնազգացողության վատթարացման, ուշագնացության կամ այլ վնասվածքներ ստանալու եղանակով):

Քաղաքացիական անձանց համար բուժօգնությունը գրեթե անհասանելի է եղել՝ բժիշկների ծանրաբեռնվածության, դեղորայքի պակասի և կապի խափանման պատճառով: Շատ բնակիչներ փորձել են ինքնաբուժությամբ զբաղվել՝ օգտագործելով առկա միջոցները:

Մահացած և սպանված անձանց հուղարկավորումների կազմակերպումն իրականացվել է արտակարգ պայմաններում: Հաճախ դիերը պահվել են հանրային վայրերում, քանի որ չեն եղել դիահերձարաններ, իսկ դագաղները պատրաստվել են ձեռքի տակ եղած միջոցներով:

Պաշտոնական և ոչ պաշտոնական գնահատականների համադրումը թույլ է տալիս եզրահանգել, որ 2023 թ. սեպտեմբերյան հարձակման արդյունքում եղել են առնվազն.

- 223 զոհ (որոնցից առնվազն 20-ը՝ խաղաղ բնակիչ), որոնցից 6-ն՝ անչափահաս,
- 100-ից ավելի վիրավոր:

7. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքով անհետ կորած և գերեվարված անձինք

2023 թ. սեպտեմբերյան հարձակման հետևանքով բազմաթիվ քաղաքացիական և զինվորական անձինք անհետացել կամ ենթադրաբար գերեվարվել են:

Անհետացման դեպքերը կապված են եղել ռազմական գործողությունների, տարհանման ընթացքում առաջացած խուճապի, ինչպես նաև Ստեփանակերտի մերձակայքում տեղի ունեցած բենզինի պահեստի պայթյունի հետ:

Անհետացման դեպքերը, որպես կանոն, առնչվում են այն անձանց, ում վերջին անգամ տեսել են մարտական դիրքերում կամ՝ դրանք այն քաղաքացիական անձինք են, որոնք առողջական խնդիրների պատճառով տեղաշարժման դժվարություններ են ունեցել:

Անհետացած որոշ անձանց գերեվարման վերաբերյալ հաստատում է ստացել Կարմիր խաչը: Որոշ գերեվարվածներ հետագայում վերադարձվել են, սակայն մի շարք անձանց գտնվելու վայրը մինչ այժմ անհայտ է:

8. 2023 թ. սեպտեմբերյան հարձակման ազդեցությունը բնակավայրերի, պետական և համայնքային գույքի և բնակչության կենսագործունեության վրա

2023 թ. սեպտեմբերի 19-ին Արցախի վրա սկսված հարձակումը դարձել է սուր հումանիտար ճգնաժամի մի նոր փուլ՝ հարված հասցնելով բնակչության կենսագործունեությանը, ենթակառուցվածքներին և բնակավայրերին:

Հարձակման առաջին իսկ օրերից խաթարվել է առօրյա կյանքը. դպրոցները, պետական մարմինները և մյուս ծառայությունները դադարել են գործել: Էլեկտրաէներգիայի և ջրամատակարարման խափանումները սահմանափակել են մարդկանց հիգիենիկ և կենցաղային պայմանները:

Կապի խափանումը (հեռախոս, ինտերնետ) խորը հոգեբանական լարվածություն է ստեղծել՝ տեղեկության պակասի և ընտանիքների անորոշության պատճառով:

Չնայած հարձակման համեմատաբար կարճ տևողությանը, մի շարք բնակավայրերում արձանագրվել են զգալի վնասներ՝ հատկապես Մարտունու և Մարտակերտի շրջաններում: Վնասներ են կրել ոչ միայն բնակելի տները, այլև գրասենյակները, խանութները, ավտոմեքենաներն ու կենցաղային տեխնիկան: Շատ բնակիչներ չեն հասցրել գնահատել վնասները՝ անվտանգության առաջնահերթության պատճառով:

Թիրախ են դարձել էլեկտրացանցերը, ինտերնետ կապը, ջրամատակարարման համակարգերը և հասարակական կառույցները: Վնասվել են մի շարք դպրոցներ, մանկապարտեզներ և մարզահամալիրներ, երբեմն՝ նույն վայրերը, որոնք թիրախ էին դարձել 2020 թ. պատերազմի ընթացքում:

Թեև սահմանափակ թվով, սակայն արձանագրվել են նաև հոգևոր-մշակութային վայրերի դիտավորյալ վնասման դեպքեր՝ այդ թվում՝ եկեղեցիների, հուշարձանների, գերեզմանոցների:

Ստեփանակերտի Խաչի, Ճարտարի Եղիշե վանքի, Մարտունու եկեղեցու և մի շարք գերեզմանոցների թիրախավորումը ընդգծված բացասական ազդեցություն է ունեցել բնակչության հոգեբանական վիճակի վրա: Բռնի տեղահանվածները խոսել են խորը ցավի, կորստի և տրավմայի զգացողությունների մասին՝ հաճախ խուսափելով հիշողությունները թարմացնող պատկերներից:

Սեպտեմբերյան հարձակումը եղել է ոչ միայն ռազմական գործողություն, այլև ստեղծել է լայնածավալ հումանիտար, սոցիալ-հոգեբանական և մշակութային ճգնաժամ՝ ուղղված ողջ քաղաքացիական կյանքի ապակայունացմանը:

9. Բնակչության բռնի տեղահանումն Արցախից

Արցախցիների բռնի տեղահանումը կրել է զանգվածային և հարկադրված բնույթ: Հայրենիքը լքելու պատճառներն էին՝ ընդհանուր ապահովության, ապագայի կանխատեսելիության և անվտանգության զգացման բացակայությունը, Արցախի պետական ինստիտուտների, ռուս խաղաղապահների և Հայաստանի կողմից պաշտպանության բացակայությունը, ադրբեջանական զորքերի ներկայությունն ու դրա հետևանքով առաջացած հաշվեհարդարների ու էթնիկ զտման վախը:

Տարածվել էին նաև սպանությունների ու խոշտանգումների մասին լուրեր, որոնք խորացրել էին խուճապն ու էականորեն ազդել երկիրը լքելու որոշման վրա:

Արցախից Հայաստան ճանապարհը միջինում տևել է երկու և ավելի օր: Մարդիկ մեքենաների մեջ են գիշերել՝ առանց բավարար սննդի, ջրի ու վառելիքի: Խցանումները (հատկապես՝ Շուշիի ոլորաններում ու Ստեփանակերտի կամրջի մոտ) և եղանակային ծանր պայմանները հանգեցրել են ֆիզիկական տառապանքի, առողջական խնդիրների խորացման և տասնյակ մահերի:

Արցախցիները տեղահանությունը նկարագրում են որպես ծանր հոգեբանական տրավմա և տառապանք, մարդիկ իրենց «զոմբիացած» կամ «ռոբոտացած» էին զգում: Ճանապարհին անընդհատ խուճապահար լացել են՝ անորոշության ու կորուստի զգացումից:

Երեխաները եղել են ամենախոցելին՝ սովի, մրսելու և հիգիենիկ պայմանների պակասի պատճառով:

Հագարի կամրջի մոտ ադրբեջանցիները ստուգումներ և զննություններ են անցկացրել, արցախցիների նկատմամբ ցուցաբերել են նվաստացնող վարքագիծ: Հնչել են բազմաթիվ վիրավորանքներ, սպառնալիքներ, նվաստացնող արտահայտություններ, եղել են բռնության՝ քաշքշոցի, հարվածների, ծեծի դեպքեր:

Տղամարդկանց իջեցրել են մեքենաներից, լուսանկարել կամ տեսանկարահանել, ստուգել հեռախոսները, զննել անձնագրերը:

Եղել են նաև ոսկեղենի և թանկարժեք իրերի բռնագրավումներ:

Գրեթե ողջ բնակչությունը լքել է Արցախը: Մնացել են միայն տարեց, հիվանդ կամ սոցիալապես մեկուսացած անձինք:

Այսպիսով, արցախցիների հեռացումը կրել է ոչ թե կամավոր, այլ՝ պարտադրված, հարկադիր բնույթ՝ պայմանավորված անվտանգության տարրական պայմանների բացակայությամբ, ֆիզիկական ու հոգեբանական ճնշումներով: Տեղահանումը արցախցիներին պատճառել է ինչպես նյութական, այնպես էլ՝ մարդկային կորուստներ և խորը հոգեբանական տրավմաներ:

10. Մասնավոր գույքի կորուստները՝ Արցախի բնակչության բռնի տեղահանման հետևանքով

2023 թ. սեպտեմբերյան հարձակմանը հետևած՝ բնակչության բռնի տեղահանության հետևանքով արցախցիներն աննախադեպ գույքային կորուստներ են ունեցել: Խուճապային իրավիճակի պայմաններում մեծ մասամբ հնարավոր չի եղել Հայաստան տեղափոխել անգամ առաջին անհրաժեշտության իրերը: Հազարավոր ընտանիքներ Արցախում են թողել իրենց ամբողջ ունեցվածքը՝ բնակարաններ, տներ, դրանց հարակից հողամասեր, ավտոտնակներ, խանութներ, պահեստներ ու այլ եկամտաբեր տարածքներ: Շատ ընտանիքներ միաժամանակ կորցրել են մի քանի գույք, այդ թվում՝ բնակելի ու գործարար տարածքներ:

Արցախում են մնացել հարյուրավոր ընտանիքների եկամտի հիմնական աղբյուրները՝ տրակտորներ, կոմբայններ, բեռնատարներ, մարդատար մեքենաներ: Դրանք չեն տեղափոխվել վառելիքի բացակայության կամ արագ տարհանման անհրաժեշտության պատճառով: Գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանիքների համար սա եղել է ծանրագույն տնտեսական հարված:

Ընտանիքները թողել են կահույք, կենցաղային տեխնիկա, սարքավորումներ, ինչպես նաև՝ թանկարժեք իրեր ու դրամական խնայողություններ: Հաճախ խուճապի կամ անհանգստության պատճառով մարդիկ չեն վերցրել անգամ անձնական ոսկեղենը և կանխիկ խնայողությունները: Ոմանք միտումնավոր չեն վերցրել թանկարժեք իրեր՝ ադրբեջանական անցակետերում անվտանգության խնդիրներից խուսափելու համար:

Ադրբեջանի վերահսկողության ներքո են մնացել մշակվող հողատարածքներ ու եկամտաբեր, պտղատու այգիներ: Թողնվել են հազարավոր խոշոր եղջերավոր անասուններ և այլ կենդանիներ, հարյուրավոր մեղվաընտանիքներ: Տասնյակ մարդիկ ստիպված թողել են իրենց ընտանի կենդանիներին՝ շներին և կատուներին:

Արցախում են մնացել ոչ նյութական արժեքներ. ընտանեկան լուսանկարներ, արվեստի աշխատանքներ, այլ ստեղծագործություններ:

Հարցվողներն իրենց տները, տեխնիկան, մեղվափեթակներն ու այգիները հետագայում տեսել են համացանցում տարածվող տեսանյութերում՝ նկատելով դրանց կողոպտված կամ ադրբեջանցիների միջամտության արդյունքում վերափոխված վիճակը: Արբանյակային պատկերներով արձանագրվել է թողնված գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը, իսկ տեսանյութերում՝ ադրբեջանցիների կողմից հայերի գույքի օգտագործումը:

Տասնյակ ընտանիքներ չեն հասցրել վերցնել անձնագրեր, բժշկական և այլ կարևոր փաստաթղթեր: Մյուսները նախընտրել են փաստաթղթերն այրել կամ դեն նետել՝ անցակետերում ադրբեջանական ստուգումներից խուսափելու համար:

Նկարագրված կորուստները ոչ միայն նյութական, այլև հոգևոր ու պատմական արժեք են ներկայացնում ընտանիքների համար: Գույքի կորուստը ոչ միայն տնտեսական փաստ է, այլև ինքնության, հիշողության և տուն ունենալու իրավունքի խախտման խորհրդանիշ: Գույք կորցնելու հետևանքով խախտվել կամ իսպառ վերացել է սովոր մշակութային կենսակերպը:

11. Արցախցիների հետագա կյանքը ՀՀ-ում

Արցախից բռնի տեղահանվածների՝ Հայաստանում ապաստանելու և վերականգնվելու գործընթացը բնորոշվում է անորոշությամբ, սոցիալական դժվարություններով և հոգեբանական ծանր իրավիճակով:

Սկզբնական շրջանում արցախցիներին տեղավորել են հյուրանոցներում, դպրոցներում, մշակույթի տներում կամ բարի կամք դրսևորած քաղաքացիների բնակարաններում: Պայմանները հաճախ եղել են սուղ՝ գերբնակեցված սենյակներ, ջեռուցման բացակայություն, անբավարար հիգիենիկ պայմաններ: Ժամանակի ընթացքում շատերը սկսել են վճարել վարձավճարներ, ինչը լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն է դարձել:

Աշխատանք գտնելն ամենաբարդ խնդիրն է: Նախկին մասնագիտական փորձը հաճախ պահանջված չէ նոր միջավայրում, իսկ ֆիզիկական, տարիքային ու առողջական

սահմանափակումները խոչընդոտում են զբաղվածությանը: Շատ ընտանիքների միակ եկամուտը պետական աջակցությունն է՝ 50.000 դրամ՝ յուրաքանչյուր անձի համար:

Տեղահանության հետևանքները՝ սթրեսը, վախերը, անքնությունը և անորոշության զգացումը, դեռ պահպանվում են: Շատերը չեն հաղթահարել կորստի ցավը և հաճախ հիշում են թողած տները, գերեզմանները, հարազատներին: Տարածված են սրտային ու շնչառական հիվանդությունները: Երեխաները դեռ վախենում են բարձր ձայներից և ադրբեջանցիների հնարավոր հարձակումից:

Չնայած շատ հայաստանցիների աջակցությանը, որոշ տեղերում արցախցիները բախվել են վիրավորական արտահայտությունների («Ղարաբաղը ծախել եք»), ինչը խորացրել է օտարվածության զգացումը:

Արցախցիների մեծ մասը ցանկանում է վերադառնալ հայրենիք, եթե ապահովվի անվտանգություն և բացառվի ադրբեջանցիների ներկայությունը: Նրանք պահանջում են անվտանգության երաշխիքներ կամ միջազգային խաղաղապահներ, սակայն շատերը չեն վստահում որևէ խաղաղապահ ուժի: Վերադարձը կապում են նաև Արցախի ինքնիշխանության ու բանակի վերականգնման հետ:

Մեծամասնությունը ապագան տեսնում է մշուշոտ, ապրում է օրվա խնդիրներով: Տարածված երազանք է սեփական տուն կամ բնակարան ունենալը:

Ոմանք նյութական պատճառներով մտադիր են արտագաղթել, հիմնականում՝ Ռուսաստան (որտեղ ազգականներ կամ ընտանիքի անդամներ կան):

Իրավական գնահատական

1. Արցախի բնակչության իրավունքների խախտումները շրջափակման պայմաններում

Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ իրականացված շրջափակումը ներկայացնում է միջազգային իրավունքի, այդ թվում՝ մարդու իրավունքների և հումանիտար իրավունքի կոպտագույն խախտում: Շուրջ ինը ամիս տևած շրջափակումն իր բովանդակությամբ ու հետևանքներով համակարգված քաղաքականության արդյունք էր՝ ուղղված արցախահայության ֆիզիկական և հոգեբանական հյուծմանը, որին նպատակադիր կերպով զրկել էին կենսական նշանակության ռեսուրսներից՝ սննդամթերքից, ջրից, բժշկական օգնությունից, վառելիքից և այլ ռեսուրսներից, ինչպես նաև՝ կրթությունից և արտաքին աշխարհի հետ կապից:

Ադրբեջանի կողմից իրականացված շրջափակման հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամը բազմաշերտ է. այն կոպտորեն խախտում է միջազգային մի շարք կոնվենցիաներով ամրագրված հիմնարար իրավունքներ և հումանիտար սկզբունքներ: Ադրբեջանը ոչ միայն անտեսել է իր պարտավորությունները Ժնևյան կոնվենցիաների, ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի և այլ իրավապայմանագրերի ներքո, այլև նպատակադրված կերպով նպաստել է արցախահայության էթնիկ զտմանը՝ կենսապահովման նվազագույն պայմանները վերացնելով:

Ադրբեջանը նաև չի կատարել Միջազգային դատարանի 2023 թ. փետրվարի՝ ժամանակավոր միջոցների կիրառման մասին որոշումը, որը պարտադրում էր ապահովել մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների ազատ տեղաշարժ Լաչինի միջանցքով: Շրջափակումն ինքնին հակասում է այս որոշմանը և հանդիսանում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի խախտում:

Ադրբեջանի գործողությունները զանգվածաբար խախտել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով, ինչպես նաև՝ 1949 թ. Ժնևյան կոնվենցիաներով սահմանված իրավանորմերը:

Շրջափակման արդյունքում ամբողջ արցախահայությունը թիրախավորվել է որպես էթնիկ խումբ և ենթարկվել է միտումնավոր ճնշման ու տառապանքների, ինչը խախտում է խտրականության արգելքի սկզբունքը և մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի պարտավորությունը: Մոտ ինն ամիս շարունակ մարդասիրական և առևտրային մատակարարումների սահմանափակման ու դադարեցման հետևանքով բնակչությունը ենթարկվել է սովի և թերսնման, դադարեցվել են գազի և էլեկտրաէներգիայի մատակարարումները, արգելափակվել է ջրի հասանելիությունը, խաթարվել է տրանսպորտի և կապի բնականոն գործառույթը: Այս ամենը հանգեցրել է Արցախի քաղաքացիական բնակչության արժանապատիվ կենսամակարդակի և առողջության իրավունքների կոպիտ խախտման: Կենսական միջոցների կանխամտածված սահմանափակումը և սովի նպատակային ստեղծումը պատերազմական հանցագործություններ են, քանի որ սովը

ծառայեցվել է որպես պատերազմի միջոց՝ արգելված միջազգային հումանիտար իրավունքի նորմերով:

Շրջափակման ընթացքում արձանագրվել են նաև խաղաղ բնակչության՝ այդ թվում ֆերմերների, վարորդների և սահմանամերձ գյուղերի բնակիչների ուղղությամբ կրակոցներ, որոնք կոպտորեն խախտել են կյանքի իրավունքը և ստեղծել են վախի ու անորոշության մթնոլորտ: Սպառնալիքների, հոգեբանական ճնշման և դիտավորությամբ իրականացված կրակոցների համադրությամբ ձևավորվել է իրավիճակ, որն իր էությամբ միտված է եղել քաղաքացիական բնակչությանը ահաբեկելուն: Հոգեբանական ծանր ճնշումը, որը պայմանավորված է եղել սովով, մշտական վախով և մեկուսացմամբ, խորը ազդեցություն է ունեցել հատկապես երեխաների, տարեցների և առողջական խնդիրներ ունեցող անձանց վրա, որոնց համար չեն ապահովվել ոչ հոգեբանական, ոչ էլ հոգեբուժական ծառայություններ:

Դեղորայքի, բժշկական օգնության և բժշկական ծառայությունների հասանելիության սահմանափակումը հանգեցրել է հիվանդությունների բարդացման, վիրահատական միջամտությունների անհնարինության և կանխարգելելի մահերի: Այս զարգացումները խախտել են կյանքի իրավունքը, ինչպես նաև՝ առողջության բարձրագույն մակարդակին հասնելու իրավունքը: Էլեկտրաէներգիայի և ջեռուցման բացակայության պայմաններում չեն գործել դպրոցներն ու այլ կրթական հաստատությունները, ինչի արդյունքում խաթարվել է կրթության իրավունքի իրացումը:

Ադրբեջանը շրջափակման միջոցով ստեղծել է մշտական սարսափի և անորոշության միջավայր, սերմանել է տագնապ՝ նպատակ ունենալով կոտրել Արցախի բնակչության կամքը և հարկադրել նրանց լքել իրենց բնակավայրերը: Այս քաղաքականությունը հանգեցրել է կոլեկտիվ պատժի արգելքի խախտման, քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու արգելքի անտեսման, ինչպես նաև՝ անձնական անվտանգության իրավունքի խաթարման՝ շրջափակման պայմաններում որևէ իրական պաշտպանության և անվտանգության երաշխիքների բացակայության պայմաններում:

Բացի այդ, Ադրբեջանի կողմից քաղաքացիական ենթակառուցվածքների՝ ճանապարհների, էլեկտրամատակարարման գծերի, տրանսպորտային միջոցների ուղղությամբ իրականացված կամայական կրակոցները վտանգի են ենթարկել կենսականորեն կարևոր ծառայությունները և քաղաքացիական բնակչության գոյատևումը: Դրանով խոչընդոտվել է մարդասիրական օգնության մատակարարումը, իսկ Կարմիր խաչի և խաղաղապահների գործունեության սահմանափակումը և բեռների մուտքի արգելափակումը շրջափակման ինն ամիսների ընթացքում կոպտորեն խախտել են արցախահայ բնակչության՝ արտաքին աշխարհից օգնություն ստանալու իրավունքը:

2. Արցախի բնակչության իրավունքների խախտումները 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի նախաձեռնած ռազմական գործողությունների ընթացքում

2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ նախաձեռնված ռազմական հարձակումը նախապես ծրագրված, համակարգված և նպատակային գործողությունների արդյունք էր, որն ուղեկցվում էր ոչ միայն զինված հարձակումներով, այլև քաղաքացիական բնակչության համակարգված ահաբեկմամբ և հոգեբանական ճնշման միջոցներով: Ռազմական այս փուլը հանգեցրել է թե՛ մարդու իրավունքների միջազգային իրավունքի, թե՛ միջազգային

հումանիտար իրավունքի նորմերի կոպիտ խախտումների, որոնք վերաբերում են կյանքի, ազատության, անձնական անվտանգության, արժանապատվության, առողջության և երեխաների իրավունքների պաշտպանության պարտավորություններին:

Ադրբեջանը լայնորեն կիրառել է հոգեբանական ահաբեկման միջոցներ՝ բարձրախոսներով հնչեցվող սպառնալիքների ու կոչերի, սոցիալական ցանցերում տարածվող, վախ սերմանող ուղերձների և անօդաչու թռչող սարքերի կողմից ստեղծվող մշտական աղմուկի միջոցով: Այս գործողությունները, համադրվելով ապաստարանների խիստ անբավարար պայմանների հետ (խոնավություն, ցուրտ, սանիտարական նորմերի բացակայություն, գերբնակեցում), ստեղծել են այնպիսի իրավիճակ, որն իրավական տեսանկյունից հասնում է դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքի խախտման շեմին: Տարհանման երթուղիներում զինծառայողների կողմից քաղաքացիական անձանց նկատմամբ կիրառված ֆիզիկական ու հոգեբանական բռնությունները, նվաստացնող խոսքն ու վերաբերմունքը, ինչպես նաև անձնական իրերի, այդ թվում կրոնական խորհրդանիշների բռնագրավումը հակասում են նվազագույն մարդասիրական երաշխիքներին և միջազգային հումանիտար իրավունքի այն կանոններին, որոնք արգելում են քաղաքացիականներին ահաբեկելու նպատակով ուժի և բռնության կիրառումը:

Քաղաքացիական բնակչության դիտավորյալ թիրախավորումը՝ գյուղերի, բնակելի թաղամասերի, դպրոցների և այլ քաղաքացիական օբյեկտների հրետակոծությամբ և անօդաչու սարքերի հարվածներով, հանգեցրել է բազմաթիվ զոհերի ու վիրավորների: Տուժածների մեջ եղել են կանայք, երեխաներ և տարեցներ, այդ թվում այն ժամանակ, երբ նրանք փորձում էին հասնել ապաստարան, դուրս էին եկել սնունդ կամ դեղորայք բերելու կամ պարզապես գտնվում էին տների հարևանությամբ: Այս գործողությունները կոպտորեն խախտել են կյանքի և անձնական անվտանգության իրավունքները և չեն համապատասխանում միջազգային հումանիտար իրավունքի պահանջներին՝ քաղաքացիական անձանց ընդհանուր պաշտպանության և տարբերակման սկզբունքի վերաբերյալ:

Ապաստարանների միջև կրակոցների ներքո իրականացվող հարկադիր տեղաշարժը, առաջին անհրաժեշտության իրեր ապահովելու համար կյանքը վտանգելու անհրաժեշտությունը և տարհանման գործընթացի կազմակերպման բացակայությունը հանգեցրել են այնպիսի իրավիճակի, որտեղ քաղաքացիական բնակչությունը մշտապես ենթարկվել է մահվան և ծանր վնասվածքների ակնհայտ ռիսկի: Սա չի համատեղվում կանխարգելման, նախազգուշացման և համաչափության այն սկզբունքների հետ, որոնք ամրագրված են միջազգային հումանիտար իրավունքի կիրառելի նորմերով:

Ռազմական գործողությունները լրջորեն խաթարել են երեխաների իրավունքների իրացումը: Պայթյուններն ու հրետակոծությունները, երբ երեխաները գտնվել են դպրոցներում կամ հարկադրված թաքնվել են նկուղներում, խանգարել են նրանց նորմալ զարգացման և հոգեկան առողջության պահպանմանը՝ ստեղծելով խորը ու երկարատև տրավմատիկ հետևանքներ: Երեխաների մահվան դեպքերը, այդ թվում՝ սրտի կանգի, խուճապի կամ ապաստարան հասնելու հնարավորության բացակայության պայմաններում, վկայում են երեխաների նկատմամբ հատուկ պաշտպանության պարտավորությունների կոպիտ խախտման մասին: Այս իրավիճակը հակասում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի այն դրույթներին, որոնք վերաբերում են կյանքի, գոյատևման, զարգացման և զինված հակամարտությունների պայմաններում հատուկ պաշտպանությանը:

Արցախահայությունը տվյալ ժամանակահատվածում եղել է ծանր հոգեբանական և ֆիզիկական ճնշման տակ: Մշտական վախը, անորոշությունը, սովի և մեկուսացման զգացումը,

ինչպես նաև պատասխանատու իշխանության բացակայությունը խորապես խաթարել են մարդկանց հոգեկան առողջությունը: Հոգեբանական և հոգեբուժական ծառայությունների բացակայությունը, առողջապահական համակարգի ծանրաբեռնվածությունը և վիրավորների համար ժամանակին բուժօգնության փաստացի չապահովումը հակասում են ինչպես առողջության իրավունքի ապահովման պետության պարտավորություններին, այնպես էլ՝ վիրավորների և հիվանդների պաշտպանության վերաբերյալ միջազգային հումանիտար իրավունքի պահանջներին:

Արցախի ողջ բնակչությունը սեպտեմբերյան ռազմական գործողությունների ընթացքում փաստացի զրկվել է անվտանգ և պատշաճ ապաստարաններից: Մարդիկ հարկադրված են եղել գիշերել նկուղներում, ավտոտնակներում, անտառներում և կենդանիների պահման վայրերում: Պաշտպանված ապաստարանների և կազմակերպված, անվտանգ ու կանխատեսելի տարհանման մեխանիզմների բացակայությունը վերածվել է կոլեկտիվ ճնշման և պատժի միջոցի, ինչը հակասում է կոլեկտիվ պատժի արգելքի և քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու արգելքի մասին միջազգային հումանիտար իրավունքի նորմերին:

Էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կապի նշանակալի խաթարումը, ինչպես նաև՝ հիվանդանոցների, դպրոցների, մանկապարտեզների և այլ քաղաքացիական օբյեկտների վնասումը խախտել են քաղաքացիական ենթակառուցվածքների և քաղաքացիական գույքի պաշտպանության հիմնարար սկզբունքները: Հարվածներ են հասցվել այնպիսի օբյեկտների, որոնք չեն ունեցել անմիջական ռազմական նշանակություն, ինչն արգելված է միջազգային հումանիտար իրավունքի տեսանկյունից:

Բացի այդ, ադրբեջանական ուժերի կողմից քաղաքացիներին ձերբակալելը, բռնի կերպով տեղափոխելը, հարցաքննելը և որոշ դեպքերում բռնի անհետացման ենթարկելը խախտել են ազատության և անձեռնմխելիության իրավունքները, ինչպես նաև՝ քաղաքացիական անձանց և ռազմագերիների պաշտպանության վերաբերյալ միջազգային նորմերը: Հատկապես մտահոգիչ են այն դեպքերը, երբ տարեց և հաշմանդամ անձինք մնացել են լքված կամ ընկել են ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո, առանց որևէ հատուկ պաշտպանական և խնամքի միջոցների, ինչը հակասում է խոցելի խմբերի նկատմամբ հատուկ վերաբերմունքի պահանջին:

Այսպիսով, 2023 թ. սեպտեմբերյան ագրեսիայի ընթացքում Ադրբեջանի կողմից իրականացված գործողությունները հանգեցրել են Արցախի բնակչության կյանքի, անձնական անվտանգության, արժանապատվության, առողջության, երեխաների և այլ խոցելի խմբերի իրավունքների կոպիտ և համակարգային խախտումների:

3. Արցախի բնակչության իրավունքների խախտումները բռնի տեղահանության արդյունքում

Արցախցիների լայնածավալ բռնի տեղահանումը, որը հաջորդել է շրջափակմանը և ռազմական հարձակմանը, միջազգային իրավունքի տեսանկյունից ներկայացնում է մարդու իրավունքների մի շարք հիմնարար նորմերի կոպտագույն խախտում: Տեղահանությունը չի եղել կամավոր. այն պայմանավորված է եղել անմիջական վախով, անվտանգության բացակայությամբ, հումանիտար ճգնաժամով և կյանքի ու առողջության նկատմամբ իրական սպառնալիքով:

Շուշիի ոլորաններում և Ստեփանակերտի կամրջի հատվածում տևական խցանումների, սննդի, ջրի և վառելիքի բացակայության պայմաններում մարդիկ օրերով մնացել են ճանապարհներին: Արդյունքում տասնյակ անձինք մահացել են կամ կրել են ծանր առողջական վնասներ: Այս հանգամանքներն ուղիղ կերպով խախտել են կյանքի իրավունքը և դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, քանի որ Ադրբեջանն իր նպատակային քաղաքականության հատուկ գործողություններով ստեղծել է կանխատեսելի մահացության ու ծանր տառապանքների պայմաններ:

Տեղահանման ընթացքում բազմաթիվ տեղահանվածների նկատմամբ կիրառվել է նվաստացուցիչ և անհարգալից վերաբերմունք՝ արտահայտված վիրավորանքների, սպառնալիքների, ֆիզիկական բռնության և հարկադիր զննությունների միջոցով: Հատկապես Հագարի կամրջի մոտ արձանագրված դեպքերը, որոնք ուղղված են եղել բացառապես արցախահայերի՝ որպես էթնիկ խմբի դեմ, վկայում են խտրական վերաբերմունքի մասին և հակասում են խտրականությունից զերծ լինելու և արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունքի միջազգային չափանիշներին:

Տեղահանման ընթացքը լրջորեն խաթարել է սեփականության իրավունքի իրականացումը: Արձանագրվել են անձնական գույքի, դրամական միջոցների և արժեքավոր իրերի բռնագրավման բազմաթիվ դեպքեր, որոնք իրականացվել են առանց որևէ իրավական հիմքի: Բնակարանների, տների, հողատարածքների, գյուղատնտեսական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, կենդանիների և այլ գույքի կորուստը, ինչպես նաև դրանց յուրացումը կամ միտումնավոր ոչնչացումը սեփականության իրավունքի կոպիտ խախտումներ են: Զինված հակամարտության պայմաններում քաղաքացիական բնակչության բնակարանների, հողերի և մասնավոր գույքի բռնագրավումը կամ ավերումը հակասում են միջազգային հումանիտար իրավունքի այն նորմերին, որոնք արգելում են քաղաքացիականների գույքի կամայական ոչնչացումն ու յուրացումը, եթե այն թելադրված չէ անմիջական ռազմական անհրաժեշտությամբ:

Երկու և ավելի օր տևած տեղահանման ընթացքում մարդիկ զգալիորեն զրկված են եղել բուժօգնությունից, դեղորայքից և տարրական հիգիենիկ պայմաններից: Տարեց և հիվանդ անձինք չեն ստացել անհրաժեշտ բժշկական օգնություն, որոշները ստիպված են եղել օգտագործել ներարկման համար նախատեսված դեղամիջոցներ՝ որպես դեղահաբերի փոխարինող, իսկ երեխաների առողջական վիճակը վատթարացել է սովի, ցրտի և սթրեսի հետևանքով: Սա խախտում է առողջության և բժշկական օգնության իրավունքները, որոնք ամրագրված են ինչպես մարդու իրավունքների, այնպես էլ միջազգային հումանիտար իրավունքի փաստաթղթերում:

Երեխաների նկատմամբ ազդեցությունը հատկապես ծանր է եղել: Նրանք ենթարկվել են սովի, ապրել են կենսական չափանիշներին չհամապատասխանող պայմաններում, գտնվել են վախի և անորոշության մթնոլորտում: Արդյունքում խախտվել են երեխաների կյանքի, առողջության, կրթության և պաշտպանության իրավունքները, ինչպես դրանք ամրագրված են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում: Պատերազմական տրավման, տեղահանության փորձառությունը և ապագայի նկատմամբ խորը անորոշությունը թողել են երկարաժամկետ հոգեբանական հետքեր, որոնք պահանջում են մասնագիտական միջամտություն, մինչդեռ համապատասխան ծառայությունների հասանելիությունը խիստ սահմանափակ է եղել:

Տեղահանման ամբողջ գործընթացում ազատ տեղաշարժվելու իրավունքը փաստացի սահմանափակված է եղել: Ճանապարհները գտնվել են ադրբեջանական վերահսկողության տակ, իրականացվել են խիստ զննություններ և փաստաթղթերի ստուգումներ, ինչի հետևանքով

բնակչությունը զրկվել է իր սեփական որոշմամբ և անվտանգ ձևով տեղաշարժվելու հնարավորությունից:

Հայաստանում ապաստանած տեղահանվածները շարունակում են ապրել վախի և անորոշության մթնոլորտում՝ պայմանավորված ապագայի անկանխատեսելիությամբ:

Հայաստանում տեղակայման սկզբնական փուլում հյուրանոցներում, դպրոցներում, մշակույթի տներում և այլ ժամանակավոր կացարաններում կեցության պայմանները (գերբնակեցվածությունը, բավարար ջեռուցման և հիգիենայի պայմանների բացակայությունը) չեն համապատասխանում արժանապատիվ կյանքի նվազագույն չափանիշներին:

Ներկայումս շատերը, ունենալով սահմանափակ եկամուտներ, ստիպված են վճարել վարձավճարներ, ինչը խորացնում է սոցիալ–տնտեսական խոցելիությունը:

Չնայած այն հանգամանքին, որ հայաստանյան հասարակության մի մասը ցուցաբերել է զգալի աջակցություն, տեղահանվածները որոշ միջավայրերում բախվել են նաև օտարման, վիրավորական արտահայտությունների և խարանման դեպքերի, ինչը խաթարել է նրանց արժանապատվությունը և նպաստել է խտրական վերաբերմունքի խորացմանը:

Տեղահանվածների զգալի հատվածը չի կարողանում աշխատանք գտնել՝ մասնագիտական փորձի ոչ պահանջված լինելու, լեզվական (բարբառային), տարիքային կամ առողջական սահմանափակումների, ինչպես նաև՝ աշխատանքի շուկայի օբյեկտիվ դժվարությունների պատճառով: Սա խոչընդոտում է նրանց սոցիալական ինտեգրմանը և բնականոն կյանքի վերականգնմանը: Տեղահանության և պատերազմի հետևանքով մարդկանց շրջանում նկատելիորեն աճել են սրտային, շնչառական և հոգեբանական հիվանդությունները, երեխաների մոտ ձևավորվել են վախեր, տրավմատիկ հիշողություններ և վարքային խնդիրներ, մինչդեռ առողջապահական և հոգեբանական աջակցության հասանելիությունը բավարար չէ: Այս ամենը խախտում է առողջ լինելու իրավունքը և լրացուցիչ հաստատում է, որ բռնի տեղահանումը ոչ միայն ֆիզիկական, այլ նաև խորը սոցիալ–հոգեբանական ճգնաժամ է ստեղծել Արցախի բնակչության համար: